ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ



ԱՅՆ ՀԵՌԱՎՈՐ ԱՄՌԱՆԸ

Պատմվածքներ. Մանրաքանդակներ. Անցողիկ մտքեր

ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ
ԱՅՆ ՀԵՌԱՎՈՐ ԱՄՌԱՆԸ. Պատմվածքներ. Մանրաքանդակներ. Անցողիկ մտքեր

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=33574240
ISBN 9785449087393

Аннотация

«Այն հեռավոր ամռանը» բովանդակում է հեղինակի մի քանի վիպակները, պատմվածքներն ու մի շարք մանրաքանդակները, որոնք մեծամասամբ արտացոլում են հայրենի Արցախ լեռնաշխարհի ու նրա մարդկանց առօրյան՝ հանրային կեցության հարափոփոխ իրավիճակներում£

Содержание

ՎԻՊԱԿՆԵՐ 6
ՆԱԽԵՐԳԱՆՔ 7
1 9
2 25
3 32
4 40
5 50
6 55
7 64
8 78
9 82
10 92
ՎԵՐՋԵՐԳ 98
ԱՇՆԱՆԱՅԻՆ ՑՐՏԵՐ 160
Конец ознакомительного фрагмента. 193

ԱՅՆ ՀԵՌԱՎՈՐ ԱՄՌԱՆԸ

Պատմվածքներ. Մանրաքանդակներ. Անցողիկ մտքեր

ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ

© ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ, 2020

ISBN 978-5-4490-8739-3
Создано в интеллектуальной издательской системе Ridero

ԻՄ ՈՐԴԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ Է ՆՎԻՐՎՈՒՄ



Վ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

ՀԵՌՈՒ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Դեղձենիներ շատ կան մեր գյուղում£ Դեղձենիներն այդ ծաղկել են հիմա, և նրանց ծաղիկները՝ կարմիր ու մանուշակագույն, շողշողում են գարնան ջինջ արևի ներքո£ Տնամերձ այգիներում ու ձորաեզրերին՝ լքված հին տնատեղերում, տոնահանդես է վառվռուն ծաղիկների£

Դեղձենիները ծաղկել են, և այսօր ես առաջին անգամ տեսա, որ գյուղ մտնող ճանապարհի վրա խոնարհված դեղձենու ճյուղը կոտրվել է£

Ամբողջ օրը ես այդ մասին էի մտածում£ Այն մասին, որ դեղձենու ճյուղը կոտրվել, կորցրել է իր գարունը, և որ այդ ճյուղը չտեսավ այս ծաղիկները, որ կան հիմա և կլինեն ամեն տարի, երբ գարունը կգա, և դեղձենիները կծաղկեն նորից՝ կարմիր ու մանուշակագույն£

Ես երկար նայում եմ ձորերի կողմը: Ձորերից ճանապարհը ոլոր-մոլոր ելնում, մտնում է գյուղ£ Այնտեղ, ճանապարհի եզրին, մենավոր ու տրտմագին կանգնել է վիրավոր դեղձենին£ Ես անթարթափ նայում եմ այդ ուղղությամբ, հետզհետե աղոտանում է իմ տեսողությունը, դեղձենու տեղ իմ աչքին անթափանց մշուշ է երևում, և ես այդ մշուշի մեջ պարզորոշ տեսնում եմ Նրան® Նա ժպտում է ինձ, բայց տխուր է նրա ժպիտը£ Եվ ես ինձ բռնում եմ այն բանի վրա, որ շշնջում եմ նրա անունը՝ «Արգինա»£

«Արգինա», – լսում եմ ես իմ սեփական ձայնը, բայց այդ

ձայնն ասես անծանոթ, օտար է ինձ, ասես լսվում է հեռու-հեռվից£ Սակայն հաջորդ վայրկյանին հալվում է մշուշը, տեսիլքը չքանում է, և ես կրկին տեսնում եմ գյուղ մտնող ճանապարհի վրա խոնարհված մենավոր դեղձենին, որի ճյուղը կոտրվել, կորցրել է իր գարունը£ Այդ ճյուղը չտեսավ այս ծաղիկները, որ կան հիմա և կլինեն ամեն տարի, երբ գարունը կգա, և դեղձենիները կծաղկեն նորից՝ կարմիր ու մանուշակագույն®

1

Աշուն է£ Մեր տան պատշգամբում, բաց լուսամուտի առջև կանգնած, ես նայում եմ ներքև՝ ձորալանջերին ու այստեղ-այնտեղ՝ բլրակների վրա փռված մեր գյուղին, որ զուգվել-զարդարվել է աշնան բոլոր գույներով£ Շրջակա կուսական անտառների ու լեռների խայտաբղետ գույներով է ներկվել նաև մեր Բարակ ջուր փոքրիկ գետակը, որ սկիզբ է առնում բարձր սարերից, գալիս, զիգզագվելով՝ գյուղը բաժանում է երկու հավասար մասերի և, անցնելով դաշտերով, ձորերով ու մթին ծմակներով, գնում, կորչում է հեռու հարթավայրային ադրբեջանական գյուղերում£

Աշնան ցրտաշունչ թեթև հովը խաղում է ծառերի կատարներին, ծառերը մեղմիվ օրորվում են, և տերևները, ինչպես ջրափոսերի վրա իջնող գույնզգույն թիթեռնիկներ, երկար պտտվում են օդում, հետո հանդարտ նստում տնամերձ այգիներում: Մեր ոսկեփայլ կատուն՝ Չյուչան, իրեն սիրել տվող, մողոշիկ ու փափկամազիկ, մի ոստյունով ցատկում, պպզում է պատշգամբի բազրիքին՝ ուղիղ իմ դիմաց, և, վախվորած նայելով ինձ, աղերսական մլավում է.

– Մի-ա-ա-ո՞ւ®

– Չյուչա, ձայնդ կտրի, – ասում եմ ես և մատս թափահարում եմ վրան£– Իջիր, – գոռում եմ£

Բայց նա չի իջնում, գլուխը թեքում, ուղիղ նայում է աչքերիս մեջ ու նորից՝

– Մի-ա-ա-ռ՝ւ®

Այս անգամ աղիողորմ ու խղճահայացք Պարզ է, նրան իմ թույլտվությունն է պետք£

– Լավ, գլուխ մի տար, – ասում եմ ես£-Նստիր£

Եվ նորից նայում եմ ներքև, ուր թիթեղածածկ տներ են, տներին կից՝ տնամերձ այգիներ, այգիներում՝ անթիվ, անհամար դեղձենիներ՝ դեղին արդուզարդի մեջ կորած £ Մեր հարևանի տղան՝ Հովիկը, վազում է իրենց հորթի ետևից, երևի ուզում է գոմը գցել, բայց հորթը՝ դունչը բարձր, հիմարի պես փախչում է՝ պոչը օդում տնկած £ Հովիկը քիչ է մնում լաց լինի, որովհետև արևը գնացել, հասել է Կաղնախաչ բարձր սարին, ծառերի ու բլուրների ստվերները սկսում են երկարել, հետո երկինքը հանկարծակի գունատվում, դառնում է կապտամթավուն, նախիրը փոշի հանելով, բառաչելով գյուղ է մտնում£

– Բիժո՜ւմ, բիժո՜ւմ, – այգու այն կողմից լսվում է Հովիկի ձայնը£

Նա ձեռքը պարզած գնում է հորթի ետևից. ասես աղաչում է նրան, որ վերջապես լսի իրեն, կանգնի£ Արագ ցած եմ թռչում պատշգամբից և վազում փողոց՝ Հովիկին օգնելու£ Մի քանի քայլ դեռ չարած, իմ ականջին է հասնում ինչ-որ մեկի հեռավոր ձայնը.

– Աբի՜կ®

Ինձ են կանչում, թեպետ իմ անունն, իհարկե, ոչ թե Աբիկ է, այլ Հայրապետ£ Մեր կողմերում այդպիսի մանրունքներին չեն նայում£ Հայրապետը երկարաշունչ

անուն է, ասում են, ու կրճատ՝ Աբիկ են կոչում£ Նորից են կանչում, ու ես շրջվում, նայում եմ այն կողմը, որտեղից գալիս է ձայնը£ Այնտեղ, ուր ձորերից ճանապարհը ոլոր-մոլոր ելնում, մտնում է գյուղ, ճանապարհի եզրին, մենավոր դեղձենու տակ մի բեռնատար է երևում, բեռնատարի մոտ՝ մի տղա ու մի աղջիկ£

Արևը հրաժեշտի իր հանգչող շողերով ոսկեզօծել է հեռավոր անտառները, իսկ ձորերում հետզհետե խտանում են ստվերները£ Մի պահ նայում եմ նրանց՝ այդ տղային ու աղջկան, բայց ճանաչել չեմ կարողանում£ Հովը խաղում է աղջկա շրջազգեստի հետ, որը, չգիտես ինչու ինձ այնպես է թվում, թե անպայման բաց վարդագույն է, իսկ տղան հանել է գլխարկը և երկար թափահարում է օդում՝ ինձ է կանչում£ Ճանաչել չեմ կարողանում ու զարմանում եմ նույնիսկ, թե ինչու են կանչում ինձ£ Որպեսզի արագ վազեմ՝ հանում եմ կոշիկներս, գուլպաներս խոթում եմ գրպաններս և կոշիկները ձեռքս առած՝ տների ու տնամերձ այգիների արանքով ընկած նեղլիկ կարճ ճանապարհով ոտաբոբիկ թռչում եմ դեպի այնտեղ, ուր կանգնել են տղան, աղջիկը և բեռնատարը£ Առջևում ձոր է, որով գարնանը, երբ սարերում հալչում է ձյունը, ափեափ լցված հոսում են պղտոր ու փրփրած ջրերը£ Ես վազքաթափով իջնում եմ ձորը£ Համարյա մի շնչում անցնում եմ այն, ոտքերս ցավեցնում են մանրիկ խճաքարերը, բայց ես դրան ուշադրություն չեմ դարձնում, վազելով գնում եմ£ Իսկ երբ արդեն ձորից ելել և բավականին մոտեցել էի մենավոր դեղձենուն,

հանկարծակի կանգ առա, որովհետև ճանապարհի եզրին ոչ բեռնատար կար և ոչ էլ տղան, որ օդում թափահարում էր գլխարկը£

Դեղձենու տակ, կաշվե փոքրիկ ճամպրուկի վրա միայնակ նստել է լայքայե սև թիկնոցով բարակիրան մի աղջիկ և ցածրաձայն երգում է£ Մեղմ քամի է, քամին իր քնքուշ թևին առած բերում է անծանոթ աղջկա քնքուշ ձայնը.

Ամպեց, կորա՞վ լուսընկան,
Արտե՞ր, մտեք քուն,
Արտո՞վ կանցնի իմ ճամփան,
Կերթամ յարիս տուն®

Հետո քամին քիչ սաստկանում է£ Դեղձենու տերևները ամբողջապես դողում, սվսվում են£ Տերևները լարվում, ձգվում են քամու ուղղությամբ, շուռ գալով իրենց հակառակ, արծաթագույն կողմի վրա£ Կոշիկներս արդեն հագած՝ես կանգնել եմ հեռվում ու չեմ համարձակվում առաջ գնալ£ Իսկ մենավոր դեղձենին աղմկում է ժայռից թափվող ջրվեժի նման£ Աղջկա ձայնը մարում, կորչում է աղմուկի մեջ£

Ես գիտեմ այդ երգը, մեր գյուղի համարյա բոլոր աղջիկները երգում են այն£ Հանդից տուն գալիս կամ առավոտյան աշխատանքի գնալիս նրանք հաճախակի են երգում, և նրանց զրնգուն ձայնը տարածվում է համայնական դաշտերի վրա£ Երգը ինչ-որ սևաչ տղայի ու կանաչ արտերի մասին է£ Վատ երգ չէ, միայն մի քիչ շատ է թախծականք£ Վերջապես հանդգնում, մոտենում եմ աղջկան £

– Ահ, եկա՞ր, – արտաբերում է աղջիկը, ընդհատելով երգն ու ելնելով տեղից£ Նա լայն ժպտում է և այդպես ժպտալով էլ դանդաղ մոտենում է ինձ£ Իմ սիրտը սկսում է խփել արագ ու անկանոն£ Նա իմ ձեռքն առնում է իր տաք ափերի մեջ£

– Այս ինչքա՞ն ես մեծացել£– Աղջկա ոչ բարձր, թավշյա ձայնը հնչում է ինչպես մեղեդի£ – Դու արդեն մեծ տղա ես դարձել£

Ես շփոթված նայում եմ նրան, ջանալով մտաբերել, թե երբ և որտեղ եմ տեսել նրան, որովհետև դեմքը ինչ-որ ծանոթ է թվում, սակայն հիշել չեմ կարողանում£ Նրա մազերը, ինչպես ոսկեջրում լվացված, փայլփլում են, աչքերը բաց շականակագույն են՝ ինչպես դեղնած հաճարկենիների ետևից երևացող լուսաբացի դարչնագույն երկինքը£ Սպիտակադեմ է նա, փքուն շուրթերի ծայրերին՝ ծիծաղի կտորներ, նա երկար դիտում է ինձ, և նրա վարդակարմիր շուրթերը թեթևակի ծռմռկվում են՝ մեկ ժպտալով, մեկ զարմանքի ու հիացմունքի արտահայտությամբ£

Հենց առաջին հայացքից նա ինձ անչափ դուր է գալիս, ասես վաղուց, շատ վաղուց գիտեմ նրան, ասես նա իմ հարազատն է, որ եկել է հեռո՞ւ-հեռու ինչ-որ տեղից£

Ես զգում եմ, թե շփոթվածությունից ինչպես է քրտնում ճակատս£ Նման դեպքերի համար կա տարածված մի նախադասություն, որ փրկում է մարդկանց£ Ես նույնպես ասում եմ այդ նախադասությունը, թեպետ նա բոլորովին անծանոթ է ինձ£

– Ինչպե՞ս եք£

– Գերազանց, – պատասխանում է աղջիկը£ Իսկ հետո հանկարծ խճողում է մազերս£ – Աստված իմ, այս ինչքա՞ն է մեծացել, հավատս չի գալիս նույնիսկ£

Իսկ ես դարձյալ ցցվել եմ ոնց որ քարե արձան ու ոչինչ չեմ խոսում£ Ես պարզապես բառ չեմ գտնում ասելու£ Ախր, ինչ ասես միանգամայն անծանոթ աղջկան£ Այդ մեծերն են, որ մի րոպեում կարող են հազար բառ հնարել, իսկ ես® Եվ դեռ ասում է, թե իբր մեծ տղա եմ դարձել արդեն£ Մեծ լինեի, այսպես չէի կորցնի ինձ£

Քամու թեթև պոռթկումից ոսկեգօծ թանձր մազերից մի փունջ ընկնում է ճակատին, նա գլխի նրբագեղ շարժումով մազափունջը կրկին նետում է ետ և ասում.

– Գնա՞նք£

– Գնացինք, – մեծավարի ասում եմ ես, վերցնում եմ աղջկա ճամպրուկը և լուռ քայլում առջևից: Ճամպրուկն այնքան էլ ծանր չէ, մի մատով անգամ կարող եմ բարձրացնել:

– Իսկ ո՞ւր է բեռնատարը, – հարցնում եմ ես, շրջվելով աղջկա կողմը£– Այստեղ մի բեռնատար կար կանգնած£

– Կարծեմ գնաց կալեր՝ բեռը թափելու, երևի ուշանում էր, – անփութորեն ասում է աղջիկը£– Սիրում եմ ոտքով գնալ £

Դե որ այդպես է, ոտքով գնանք£ Ինձ համար միևնույնն է£ Բայց զգում եմ, նա ինչ-որ բան թաքցնում է ինձնից £ Հետաքրքիր է, ո՞ւմ մեքենան էր£ Ոնց որ Արմենի բեռնատարն էր£ Համարանիշը չէր երևում£

– Իսկ ի՞նչ բեռնատար էր, չե՞ս հիշում£

– Դժբախտաբար, չեմ հիշում, – կողքանց զննելով ինձ, կկոցուն աչքերով ժպտում է նա, և, հավանորեն, խոսակցության նյութը փոխելու նպատակով, ավելացնում է, – ուրիշ տեղ քեզ տեսնեի, չէի ճանաչի, Աբիկ£ Շատ ես փոխվել£

Երևի, իմ գոյության ամբողջ ժամանակաընթացքում առաջին անգամ ինձ դուր չի գալիս այդ «Աբիկը»£ Մի տեսակ ոնց որ քնքուշ է հնչում, բայցև միևնույն ժամանակ ծաղրական ինչ որ բան կա մեջը£ Եվ ես ասում եմ.

– Անունս Աբիկ չի®

– Ո՞նց թե, – զարմանում է նա£– Բա ի՞նչ է£

– Աբիկ չի, -կրկնում եմ ես համառորեն ու, նույնիսկ, ինքս էլ չգիտեմ ինչու, մի քիչ էլ զայրացկոտ£– Անունս ոչ թե Աբիկ է, այլ Հայրապետ£ Իմ ծննդյան վկայականում այդպես էլ գրված է՝ Ոսկանյան Հայրապետ£

Աղջիկն անսպասելի սկսում է ծիծաղել£ Գլուխը քիչ թեքած՝ նա ծիծաղում է ուրախ ու բարձրաձայն£ Նրա ծիծաղի մեջ մի կարճ ակնթարթ կորչում են տերևների սոսափյունն ու Բարակ ջրի կարկաչը£ Հետո նա, ձյունից էլ ճերմակ ատամներով սեղմելով ստորին շրթունքը, ժպտուն նայում է ինձ:

– Դու հրաշք տղա ես, Աբիկ, – ի վերջո ասում է նա:

Դարձյալ՝ «Աբիկ»® Ես կանգնում, նայում եմ նրան. ոնց որ փոքր երեխայի հետ լինի խոսելիս£ Ես ուզում եմ կրկին անգամ քաղաքավարությամբ հիշեցնել նրան իմ իսկական

անունը, բայց աղջիկն ասես կարդում է իմ միտքը£

– Ոչ, – ասում է նա:– Հայրապետը երկար անուն է, ինձ «Աբիկն» ավելի է դուր գալիս£– Ավտոմեքենայի ցոլալապտերներ հիշեցնող նրա խոշոր աչքերը շողշողում են ինչ-որ անհասկանալի փայլով՝ ոչ այն է խնդրական, ոչ այն է ծաղրանքով£ Դե արի ու փորձիր դիմանալ այդ հայացքին £ Ու ես ասում եմ.

– Լավ, կոչիր ինչպես քեզ դուր է գալիս, – ակամա ժպտում եմ ես£– Քեզ կարելի է£

– Շնորհակալություն, դու բարի սիրտ ունես, Աբիկ£

Սա ուղղակի ապշեցուցիչ է£ Հիմա ինձ դուր է գալիս «Աբիկը»£ Ու, հավանորեն, վիրավորվեմ նույնիսկ, եթե նա հանկարծ ուզենա լրիվ անունով կոչել ինձ£ Չէ, շատ հետաքրքիր ու զարմանալի է աշխարհի բանը® Եվ ես, համարյա չզգալով ճամպրուկի ծանրությունը, քայլում եմ առաջ, բայց այնպես, որպեսզի շատ առաջ չընկնեմ, կարողանամ ժամանակ առ ժամանակ գաղտնաբար նայել նրան£

Ես անհարմար եմ զգում հարցնել, թե ով է նա, որտեղից է եկել և ինչո՞ւ հատկապես ինձ կանչեցին£ Իսկ ո՞վ էր բեռնատարի վարորդը, որտեղի՞ց էր ճանաչում նա ինձ£ Կարո՞ղ է հարևան գյուղից է: Այնուամենայնիվ, զարմանալի է£ Ոչինչ, եթե պետք լինի, ինքը կասի£ Աղջիկը մեկ նայում է հեռավոր լեռների կողմը, ուր արևը մայր է մտել արդեն, մեկ՝ կանգնում, կկոցված աչքերով նայում է ձորերից ելնող ճանապարհին, որը հետզհետե ընկղմվում էր մթության մեջ£

Ես նույնպես շրջվում, նայում եմ ձորերի կողմը£

– Հրե՜ն Թարթառի ձորը, – մի բան ասած լինելու համար ասում եմ ես£

– Ո՞րն է, – աղջիկը թեթևորեն հպվում է թևիս՝ դյութելով ինձ օծանելիքի անուշիկ բուրմունքով£ Նա կրկին սովոր շարժումով ճակատին ընկած մազերը նետում է ետ, լարում ուշադրությունը£– Ո՞ւր է, ես ոչինչ չեմ տեսնում£

– Այստեղից չի երևում£ Հրե՜ն, նայիր ներքև, տեսնո՞ւմ ես այն խոր ձորը՝ լցված մշուշով£ Այդ ձորով, անտառների միջով է հոսում Թարթառը£ Պատահում է, ամռանը տղաներով գնում ենք գետում լողանալու կամ ձուկ բռնելու£ Իսկ Թարթառից այն կողմ Մռավա սարն է®

Սար ու ձոր, հանդ ու անտառ ծածկվել են իրիկնային փափուկ շղարշով, մերդ ընդ մերթ բեկբեկուն կանչում են գիշերային հավքերը, իսկ այնտեղ, հեռվում, ինչպիսի հեքիաթային տեսարան, Մռավա սարի կատարները ողողված են դեռ ոսկեշղարշ արևով£

Աղջիկը անթիվ, անհամար սար ու ձորերի վրայով երկար նայում է Մռավա սարի կողմը£

– Աստված իմ, ինչ գեղեցիկ աշխարհ է®-ինքն իրեն, միայն շուրթերով շշնջում է աղջիկը՝ հայացքը երկար չկտրելով Մռավա սարից, և այդպես էլ հայացքը հեռուներին, ասում է.– Զարմանալի է, իսկ ինչո՞ւ առաջ չեմ տեսել այս ամենը£

– Ե՞րբ£

Իմ հարցին պատասխանելու փոխարեն, նա անսպասելի

ասում է.

– Դու քանի՞ տարեկան ես, Աբիկ£

– Հայրս ասում է, որ արդեն փոքր չեմ, – փորձում եմ կատակել:

– Պարզ է, – գլխով է անում աղջիկը£– Մի ժամանակ ես նույնպես փոքր չէի£ Ես հիմա էլ փոքր չեմ, չէ՞, Աբիկ£ Դու համաձայն չե՞ս ինձ հետ£

– Համաձայն եմ, – ակամա ժպտում եմ ես, իսկ հետո, չգիտես ինչու, ասում եմ.– Մեր գյուղը շատ է գեղեցիկ£ Ամբողջ աշխարհում այդպիսի գյուղ չկա£ Իսկ աշնանն այն արտասավոր գեղեցիկ է£

– Աշունն ամեն տեղ էլ գեղեցիկ է, – ասում է աղջիկը:

– Չգիտեմ, գուցե, – թոթվում եմ ուսերս£– Աշնանը ես ոչ մի տեղ չեմ եղել. դպրոց եմ գնում£

Մենք մտնում ենք ձորը, որոշ ժամանակ քայլում ենք լուռ, ինչ-որ տեղ, անտառի խորքում տագնապով ծղրտում է բուն. գիշերային որսի է պատրաստվում երևի£ Անախորժ է նրա ծղրտոցը, անսովորությունից զարհուրել կարելի է£ Գուցե դրա համար է, որ աղջիկը ձեռքով թեթևակի դիպչում է իմ ուսին և կամացուկ ասում.

– Ի՞նչ սարսափելի է® Այդ ո՞վ էր այնպես կանչում£

– Գիշերային բու է, – անհոգ ասում եմ ես£– Վախենալու ոչինչ չկա£ Իսկ ձեզ մոտ, ինչ է, բու չի՞ լինում£

– Ոչ, – չգիտես ինչու հառաչում է նա£– Մեզ մոտ չի լինում £ Ես այստեղից շատ հեռու եմ ծնվել, հազար ձոր ու սար այն կողմ£ Դու աշխարհագրություն լա՞վ գիտես, – անսպասելի

հարցնում է աղջիկը£

– Իհարկե, – իսկույն ասում եմ ես£

– Ես ծնվել եմ այնտեղ, ուր աշխարհի ամենամեծ լիճն է ու ամենափոքր ծովը£ Այնտեղ մի քաղաք կա՝ նման Նեապոլին ու դեռ Նեապոլից էլ գեղեցիկ£ Այդ քաղաքում եմ ծնվել ես, և մեզ մոտ երբեք բու չի լինում£

Ես երկար մտորում եմ՝ ձգտելով զուշակել այն քաղաքի անունը, որտեղ ծնվել է աղջիկը, բայց ոչինչ չի ստացվում £ Անհարմար դրություն է, նույնիսկ զգում եմ, թե ինչպես եմ շիկնում£ Բայց նա դա չի նկատում, իհարկե, որովհետև ձորում մութ է£ Նեղ ճանապարհը ելնում է ձորի մյուս կողմը, և մեր առջև երևում է գյուղը՝ հատուկենտ վառվող լույսերով, կովերի բառաչով ու մարդկանց կանչերով£

– Ահա այնտեղ, բլրի վրա, մեր դպրոցն է, – բացատրում եմ ես, – քիչ ներքև ակումբն է, ակումբից ու գյուղական խանութից այն կողմ հիվանդանոցի շենքն է£ Մեր տունը հենց հիվանդանոցի մոտ է£

– Գիտեմ, Աբիկ, – ասում է աղջիկը£ Ես տարակուսանքով նայում եմ նրան£ «„Նրան որտեղի՞ց է հայտնի այդ ամենը. և անունս է իմանում, և մեր տան տեղը գիտի“»£ Բայց հարցնել այդ մասին՝ դարձյալ չեմ համարձակվում£ Եվ նա նորից կարծես կարդում է իմ մտքերը և ասում է.

– Չէ՞ որ ես եղել եմ այստեղ, Աբիկ£ Ճիշտ է, մի անգամ, բայց եղել եմ£ Եվ այդ օրվանից արդեն մի քանի տարի է անցել£

– Մի քանի տարի է անցե՞լ, – ինքնաբերաբար ասում

եմ ես£

– Այո, ես այն ժամանակ փոխադրվել էի ինձներորդ դասարան£ Իսկ դու փոքրիկ, շատ փոքրիկ տղա էիր£

– Իսկ որտե՞ղ էիր ապրում, – զգուշորեն հարցնում եմ ես:– Ու՞մ տանը:

– Իհարկե, ձեր, – ասում է նա ժպտուն:– Դու ինչ է, խոսեցնու՞մ ես ինձ, Աբիկ:

Ուրեմն մեր տուն ենք գնում… Ես քիչ է մնում խենթանամ ուրախությունից: Հետո նա լուռ խորհում է ինչ-որ բանի շուրջը £ Ընդհանրապես նկատել եմ. խոսքի կեսին կլոր՝ մտասույզ նայելով մի անորոշ ուղղությամբ£ Գուցե հանկարծակի ինչ-որ տխրությո՞ւն է համակում նրան£ Լինում է, չէ՞, այդպես £ Եվ որպեսզի աղջիկը չտխրի ինձ հետ, ես փորձում եմ զբաղեցնել նրան խոսակցությամբ£

– Իսկ գարնանը մեր Բարակ ջուր գետը վարարում, դղրդյունը բռնում է սար ու ձոր, – ասում եմ ես£

– Մի՞թե, – մտացիր ասում է աղջիկը£

– Այո£ Եվ այն էլ ինչպե՞ս£ Երբեմն, երբ լեռներում սկսում է ձնհալը, արմատահան արած վիթխարի ծառեր է բերում £ Իսկ նախանցյալ տարի գյուղի ներքևի մասից՝ Ղուլունց թաղից, մի գոմեշ քշեց£ Համարյա ամբողջ գյուղը՝ մեծ ու փոքր, վազում էր գետի հետ, բայց, դե, ի՞նչ կարող էին անել®

– Իսկ հիմա ոչինչ չի՞ քշում£

– Հիմա՞®– ես քմծիծաղում եմ£– Աշնանն ի՞նչ պիտի քշի, հիմա միայն դեղին տերևներ է բերում ծմակներից ու մեկ էլ

գիշեր-ցերեկ անդադար վշշում է ձորում£

Մենք մի պահ կանգնում, լուռ ականջ ենք դնում£ Ներքևում, մթության մեջ, իրոք, կամացուկ, միալար վշշում է մեր սիրելի Բարակ ջուրը՝ վը2-2-2, վը2-2-2®

– Հետաքրքիր է, – արտաբերում է աղջիկը դարձյալ մտացիր, բայց ես պարզորոշ տեսնում եմ. նրան բոլորովին հետաքրքիր չէ ոչ այն, որ մեր գյուղական գետակը գարնանը վարարում, ծառեր է քշած բերում իր հետ, ոչ էլ այն, որ աշնանն այն բարակում, մանրիկ խոխոջում է քարերի մեջ£ Եվ, իսկապես, ինչ մի հետաքրքիր բան կա այստեղ£ Գետն էլ նրա համար է, որ վարարի ու վշշա£ Ես արագ փոխում եմ խոսակցության թեման£

– Քեզ դուր է գալիս, չէ՞, մեր գյուղը£

– Այո, գեղեցիկ գյուղ է£ Հանդ ու սարերով, անտառներով շրջապատված, հեքիաթային:

– Գարնանն ավելի է գեղեցկանում, – ուրախացած ասում եմ ես, որովհետև իսկույն տեսնում եմ՝ նրա մեջ կրկին հետաքրքրություն է առաջանում զրույցի նկատմամբ£– Ծառերը ծաղկում են, այգիներում ճռվողում են թռչունները, անտառից լսվում է մայր կկվի ախորժալուր ձայնը®

Աղջիկը հանկարծ շրջվում, ցույց է տալիս գյուղ մտնող մեծ ճանապարհի վրա խոնարհված մենավոր դեղձենին, որի տակ քիչ առաջ նստած էր ինքը և ասում է.

– Այդ դեղձենին նույնպե՞ս ծաղկում է£

– Այն էլ ո՞նց, – ետ շրջվելով պատասխանում եմ£– Գյուղում առաջինը հենց այդ դեղձենին է ծաղկում£

– Եվ դու, իհարկե, կտրում ես ծաղկած ճյուղերը, – ասում է նա£

Ճշմարիտն ասած, կյանքում այդ ծառից մի ճյուղ անգամ չեմ կտրել£ Ինչի՞ս է պետք£ Բայց չգիտեմ ինչու, ասում եմ.

– Այո, կտրում եմ, շատ գեղեցիկ ծաղիկներ ունի՝ կարմիր, մանուշակագույն£ Կտրում եմ հատկապես այն ճյուղերը, որոնց վրա ծաղիկներ շատ կան£

Աղջիկը նայում է ինձ ոչ այն է զայրացկոտ, ոչ այն է դառնացած, և ասում է.

– Եվ չես ափսոսում, չէ՞®

– Ի՞նչը, – քիչ է մնում բռնի ծիծաղս£

– Ծառը, – ուղիղ նայելով ինձ, ուշացումով արտասանում է աղջիկը£– Աբիկ, խոսք տուր, որ այլևս այդ ծառից երբեք-երբեք ոչ մի ճյուղ չես կտրելու£ Չէ՞ որ այդ ճյուղերը ևս ապրել են ուզում, – ավելացնում է նա՝ երկար նայելով աղջամուղջի մեջ կանգնած մենավոր դեղձենուն£– Նրանք նույնպես սիրում են կյանքը, սիրում են գարունը£ Երբ դու կտրում ես այդ ճյուղերը, նրանք կորցնում են իրենց գարունը£ Հասկանո՞ւմ ես, նրանք մեռնում են հավիտյան և այլևս երբեք չեն տեսնում այն ծաղիկները, որ լինում են ամեն տարի, երբ գալիս է գարունը, և ծառերը ծաղկում են նորից£

Առաջին անգամ եմ լսում, որ դեղձենու ճյուղերը նույնպես ապրել են ուզում և որ, իբր, նրանք նույնպես սիրում են գարունը£ Շատ է զարմանալի£ Բայց այստեղ ես հանկարծ հիշում եմ. պատահում է, հենց այնպես կացնով խփում ես ծառի բնին, և իսկույն ջուր է հոսում կտրված տեղից£ Ով

գիտի, գուցե ծառերն էլ լաց են լինում և այդ ջուրը՝ արցունքն է նրանց£ Ես խոստանում եմ, որ այլևս չեմ դիպչի ոչ մի ծառի, առավել ևս՝ մենավոր դեղձենուն£ Ուզում եմ էլի ինչ-որ բան ասել այդ ուղղությամբ, բայց արդեն ուշ է, որովհետև հասել ենք մեր դարպասին, և մեր շունը՝ Չալկան, երկար ականջները ծափ տալով, նետվում է մեր ոտքերի տակ, ուրախությունից այս ու այն կողմ է նետվում, թավալվում գետնին, ինչ-որ ձայներ հանում£

– Չի մոռացել ինձ, – հրճվում է աղջիկը, խոնարհվում, գրկում է Չալկայինք£ Չալկան գլուխը թեքած, անքթիթ նայում է նրան, պոչով ավլում գետինը, ուրախությունից կրկին թավալվում£ Հիմարացել է լրիվ£

Մենք մտնում ենք բակ, և ես կանչում եմ.

– Մա՜մ®

Քիչ անց բացվում է պատշգամբի դուռը£ Մազերը գլխին փունջ արած՝ սանդուղքին հայտնվում է մայրիկը£

– Էդ որտե՞ղ ես, այ տղա®

Սակայն մայրիկը չի հասցնում հանդիմանել ինձ, մի պահ զարմանքով նայում է ինձ հետ եկած աղջկան և շտապ իջնում է սանդուղքներով£

Ես մեկ աղջկան եմ նայում, մեկ՝ մայրիկին£

– Արգինա®– Մայրիկը ձեռքերը տարածած ընդառաջ է գալիս և, անկարող զսպելու արցունքները, աղջկան առնում է գիրկը£– Իմ սիրելի, իմ հարազատ աղջիկս® Այս ո՞ր քամին է քեզ բերել մեր կողմերը®

Եվ զարմանալի բան. աղջկա այտերով նույնպես հոսում

են արցունքները£ Մարդ չի կարողանում հասկանալ այս կանանց. նրանք ուրախության ժամանակ անգամ լալիս են, փոխանակ, ընդհակառակը՝ ծիծաղելու£

– Աբիկ, – արագ շրջվելով իմ կողմը, ասում է մայրիկը £– Շուտ վազիր գրասենյակ, հայրիկին գտիր, ասա թող գա տուն£

Ես սլանում եմ դեպի կոլտնտեսության վարչության շենքը, որն այնքան էլ հեռու չէ մեր տնից£

– Ասա, թող շուտ գա, – իմ ետևից ձայնում է մայրիկը£– Ասա Արգինան է եկել Բաքվից®

Բաքուն է ուրեմն այդ քաղաքը® Եվ ոնց է, չկարողացա կռահել£ Եվ դեռ ասացի, որ աշխարհագրություն լավ գիտեմ £ Ամոթ ինձ£

2

Մեր գյուղում Արգինա անունով աղջիկ չկա£ Ես առաջին անգամ եմ այդպիսի անուն լսում, և այն ինձ անչափ դուր է գալիս£ Ինձ դուր է գալիս ոչ միայն նրա անունը, այլև այն, որ նա միշտ ժպտում է, և նրա ժպիտը անկեղծ, սիրալիր ու մի քիչ էլ թախծական է£

Ես նայում եմ դիմացի անտառապատ բարձր սարին, որը Մատուռի ձորից ելնելով, բուրգաձև բարձրանում, հասնում է մինչև երկինք£ Երկար նայում եմ և ինձ հանկարծ այնպես է թվում, թե այդ սարից հազարավոր սար ու ձոր անդին, հեռու-հեռվում տեսնում եմ այն անծանոթ ու գեղեցիկ քաղաքը, ուր ծնվել է Արգինան£

Այո, մեր գյուղում Արգինա անունով աղջիկ չկա£ Սիրուն է Արգինան£ Ներբագեղ կազմվածք ունի, իսկ դեմքը լուսափայլում է նուրբ գեղեցկությամբ ու հմայքով £ Ձյունաճերմակ պարանոցով ու վարդաշուրթ՝ նա ասես երկնքից է իջել£ Այդպիսի գեղեցիկ աղջիկ ոչ միայն մեր գյուղում, երևի արար աշխարհում էլ չկա£ Ես մեր գյուղի բոլոր աղջիկներին մտովի համեմատում եմ Արգինայի հետ, ուզում եմ նրանց մեջ գտնել որևէ մեկին, որ գոնե մի քիչ նմանվեր նրան, բայց չեմ գտնում£ Արգինայի նմանը չկա£

– Վը2-2-2, վը2-2-2®-դարերից եկող իր հնամյա երգն է մանում մեր Բարակ ջուր գետակը, և անտառի խորքից մերթ ընդ մերթ նրան ձայնակցում է բուն՝ երկար ու տագնապալից

£

Արմունկներով պատշգամբի բազրիքին հենված, ես լուռ ունկնդրում եմ գիշերային ձայները£

Այգում հազիվ տեսանելի օրորվում են ծառերը, և իրիկնային լռության մեջ ես պարզորոշ տեսնում եմ, թե տերևներն ինչպես են օդում թրթռում, հետո, կամացուկ իջնում հողին£ Այգու խորքում՝ ոչ այն է ցանկապատում՝ մոշի թփերի մեջ, ոչ այն է ծառերի տակ, իրար ընդհատելով, անհոգ, անդադար երգում են ծղրիդները£

Նայում եմ երկնքին£ Այսօր աստղերն աներևակայելիորեն պայծառ ու խոշոր են£ Մեծ, կլոր լուսնյակը թափընթաց սահում է անդնդախոր ձորերի, անտառների ու լեռների վրայով՝ արար աշխարհ ողողելով իր արծաթ շողերով£

– Պապա, – ասում եմ ես, – լուսի՞նն է հեռու, թե Բաքուն£

Հայրիկը ծիծաղում է£

– Դու արդեն մեծ տղա ես, – ասում է նա, – և քեզ համար ամոթ է այդպիսի հիմար հարց տալը£

– Ինչո՞ւ£

– Նայիր երկնքին£ Ի՞նչ ես տեսնում էնտեղ£

– Աստղեր£

– Հետո՞:

– Լուսին:

– Ճիշտ է£ Իսկ Բաքուն երևո՞ւմ է£

– Ոչ£

– Դե, ուրեմն, գնա ու լավ մտածիր, տես, թե ո՞րն է ավելի

հեռու£

Իմ հարցը երևի շատ էր բարդ, որովհետև հայրիկիս պատասխանն ավելի բարդ էր. ես ոչ մի բան չհասկացա նրա ասածից£ Հայրիկս սիրում է հանելուկներով խոսել: Փիլիսոփայելու ժամանակ է գտել£

Կաղնախաչ բարձր սարի կողմերում հրացանի կրակոց լսվեց: Կրակոցից լուսինը ճոճվեց տեղում ու կրկին շարունակեց ճանապարհը մուգ կապույտ երկնքով£

Այնտեղ, Կաղնախաչի հեռավոր լեռնալանջին կրակոցը կրկնվեց£ Որսորդներ են երևի£ Ես նորից ու նորից մտածում եմ Արգինայի մասին, հիշում եմ, թե նրա կաս-կարմիր շուրթերն ինչքան քնքուշ ու կախարդող առոգանությամբ են արտասանում հայերեն բառերը, ամենևին ոչ նման մեր բարբառին, ինչպես է նայում՝ իր խոշոր, արտահայտիչ աչքերով թափանցելով մինչև հոգուդ խորքերը, ինչպես է ժպտում, ինչպես է քայլում£ Ես պարզապես անկարող եմ չմտածել նրա մասին® որովհետև ինձ համար բերկրանք է նրա անունն անգամ արտաբերելը£

®Արգինան կապույտ շրջազգեստ է հագել, և այն շատ է սազում նրան£ Այդ շրջազգեստի մեջ նա ուղղակի սքանչելի է£ Ես նրան ասում եմ£

– Դու հիմա ավելի ես գեղեցկացել£

– Ճի՞շտ, – Արգինան ծիծաղում է, իսկ այնուհետև, իմ ձեռքն առնելով իր տաք ափերի մեջ, ժպտալով ասում է®– Գյուղի օդը վերցնում եմ երևի£

Հայրիկը նույնպես անչափ ուշադիր ու սիրալիր է

Արգինայի նկատմամբ£ Ճաշի ժամանակ, սեղանի մոտ նստած, ես գաղտնածածուկ հետևում եմ հայրիկին և նկատում, թե ինչպես է նա ամեն անգամ շփոթվում՝ Արգինայի հայացքին հանդիպելիս, և բերկրալից ժպիտը չի իջնում նրա դեմքից, իսկ աչքերը անընդհատ շողում են խնդագին£

Այդպես ուրախ տրամադրությամբ ՝ ես հայրիկին միայն տոն օրերին եմ տեսնում և զգում եմ, որ այսօր ևս տոն է նրա համար, գուցե նույնիսկ շատ մեծ տոն£ Եվ ես քիչ է մնում խելքս թոցնեմ հետաքրքրասիրությունից, որովհետև վերջապես մի կարգին չգիտեմ, թե ով է Արգինան և ինչ առիթով է եկել մեր տուն£ Հո ամառ չէ, որ ասեմ՝ եկել է հանգստանալու:

– Արգինա ջան, աշխարհում բարեկամությունից թանկ ու քաղցր բան չկա, – ասում է հայրիկը, կրկին լցնելով բաժակն ու դանդաղ ելնելով տեղից£ Հայրիկը սովորություն ունի՝ մի բաժակ խմեց թե չէ՝ կսկսի իրար ետևից կենացներ առաջարկել£

– Ի՞նչ ես կանգնել, նստած խոսիր, – անչար դիտավորությամբ ասում է մայրիկը՝ մոշի թանձր գինի լցնելով իր ու Արգինայի համար£

– Չէ, Արուս, դու չգիտես, գյուղխորհրդի նոր օրենքով՝ թամադան պիտի կանգնած խոսի£

Արգինան մանր ծիծաղում է, ատամները փայլում են, իսկ հայրիկը շարունակում է իր խոսքը.

– Այո, թանկ ու քաղցր բան է բարեկամությունը,

ընկերությունը, առանց բարեկամության, առանց ընկերության, ոնց որ աշխարհն առանց արեգակնային արդար լույսի® Բարեկամությունը կրկնապատկում է ուրախությունները և կիսով չափ կրճատում դառնությունները£ Նույնիսկ հիվանդանալն էլ հաճելի է, երբ գիտես, որ կան մարդիկ, ովքեր քո կազդուրվելուն սպասում են ոնց որ ուրախալի տոնի£ Քո կենացը, Արգին®

– Չեմ հասկանում, Արգինայի կենացը քանի՞ անգամ կարելի է խմել, – կեղծ զարմանքով հարցնում է մայրիկը£

– Տեր աստված, սա ի՞նչ բնավորություն ունի£ Այ մարդ, ձայնազո՞ւրկ եմ ես, ինչի՞ ես խանգարում£ Երբ խոսում ես՝ ես քեզ խանգարո՞ւմ եմ: Չեմ խանգարում, չէ՞, բարի եղիր, դու էլ ինձ մի խանգարիր£

Երբ հայրիկը խոսում է, դժվար է գուշակել՝ երբ է լուրջ խոսում, երբ՝ կատակում£ Հիմա, իհարկե, կատակում է£ Իբր մայրիկից նեղացած՝ նա դառնում է Արգինայի կողմը£

– Բարի գալուստ, Արգինա ջան® Դու որոշել ես աշխատել մեր գյուղում£ Շատ լավ ես արել, մեր աչքի վրա տեղ ունես£ Բայց նախ՝ պետք է ամբողջ հոգով սիրես քո աշխատանքը, նվիրվես դրան, որովհետև չկա ավելի մեծ հաճույք, քան սիրած գործին նվիրվելը£ Ես, օրինակ սիրում եմ իմ գործը£– Հայրիկն իրեն արդեն յոթերորդ երկնքում է զգում£– Մոտ տասը տարի կոլտնտեսության ամբողջ անասնապահության համար ես եմ պատասխանատու£ Գլխավոր զոոտեխնիկ եմ£

– Լավ է ասացիր, թե չէ կարող էր կարծել, թե էս գյուղի

տանուտերն ես, – հանգիստ խայթում է մայրիկը՝ թաքուն աչքով անելով Արգինային£

– Դե արի ու մի խմիր, – ծիծաղում է հայրիկը՝ մի ումպով խմելով թթի օղին£– Թութն ու թթի օղին բուժական ուժեղ հատկություն ունեն, – շարունակում է նա: -Դրա համար էլ Ղարաբաղը երկարակյացների երկիր է: Մի բան պատմեմ՝ լսիր£ Ղարաբաղում մի շատ ծեր մարդ ճանապարհի եզրին նստած լաց է լինում£ «Ի՞նչ է պատահել°°, – հարցնում են£ Մեծ եղբայրս ծեծել է», -ասում է£ Զարմանում են, որ ինքն էդքան ծեր մարդ՝ մեծ եղբայր ունի£ «Ինչո՞ւ է ծեծել», – հարցնում են£ «Հերս ներս մտնելիս՝ ոտքի չեմ կանգնել», -ասում է£ – Արգինան լիաթոք ծիծաղում է, իսկ հայրիկն ասում է.– Արգինա ջան, էս մեծ աշխարհում մեկը չեղավ, որ հասկանար ինձ£ Տեսնում եմ, որ ինձ հասկանում ես- Նա ուզում է կրկին օղի լցնել բաժակը, բայց ձեռքի անզգույշ շարժումով շրջում է շիշը և մինչ մայրիկը կհասցներ սեղանից վերցնել շիշը, օղին թափվում է սփռոցին՝ թթօղու անդուր հոտը տարածելով սենյակով մեկ£

– Շատ լավ եղավ, – ասում է մայրիկը ծիծաղելով£– Նորմայից ավել մի խմիր£

– Արուս, էսօր կարելի է, – ասում է հայրիկը՝ նայելով Արգինային£– Էսօր առանձնահատուկ օր է, թանկագին հյուր ունենք£ Գնա մի ուրիշ շիշ բեր£ Ի միջի այլոց, – ավելացնում է նա, – կատակ չեմ անում, թթի օղին, իրոք, բուժական մեծ հատկություն ունի£

Մայրիկն Արգինայի օգնությամբ փոխում է սփռոցը,

ափսեները կրկին շարվում են սեղանին£

Մայրիկը գնում է խոհանոց՝ օրի բերելու£ Հարմար պահ որսալով, ես նույնպես վազում եմ խոհանոց£

– Մամ, – ասում եմ ես£– Մամ®

– Ի՞նչ է, Աբիկ ջան£

– Մամ, մեր ի՞նչն է Արգինան£

Մայրիկը զարմանքով նայում է ինձ£

– Դու ցնորվե՞լ ես, այ տղա, – ժպտում է նա£

– Ոչ, բոլորովին, – ասում եմ ես և, որպես ապացույց այն բանի, որ իրոք չեմ ցնորվել, լուրջ, ինչպես դա վայել է խելքը գլխին մարդուն, շարունակում եմ թավ ձայնով, – մամ, մի՞թե որևէ բան չիմանալն ու այդ մասին հարցնելը ցնորվելու նշան է£

Բայց մայրիկը միայն ժպտում և ասում է փութկոտությամբ.

– Հետո, Աբիկ, հետո կպատմեմ, հիմա ժամանակ չկա, – և օղու շիշը խոթելով ձեռքս, ավելացնում է.– սա տար, ես խաշլաման բերեմ£

3

Այսօր կիրակի է։ Արևը նոր-նոր բարձրանում է դիմացի սարերի ետևից։ Օդը թարմ է, թափանցիկ։ Գյուղը ստվերի մեջ է, որովհետև արևի շողերը դեռ չեն իջել մինչև մեր ձորերը։ Ես նայում եմ Սառնատուն լեռան կողմը, ուր արև է արդեն։ Այստեղ ու այնտեղ դայլայլում են լուսաբացի թռչունները, կանչում են աքաղաղները, ինչ-որ մեկը սկսեց երգել ներքևի ձորում, աղբյուրի մոտ, հետո աղջկական ձայնը մարեց, որովհետև Մաքսիմը գործի գցեց տրակտորը, և երգը կորավ հոնդյունի մեջ։

Մայրիկը բակում կուտ է տալիս հավերին՝ կուտը բռով շաղ տալով բակով մեկ՝ ինչպես սերմնացանն է սերմը նետում ցելերի մեջ։ Եվ նրա ձեռքի ամեն մի շարժումի հետ մեր այդ ցնդած Չալկան ցատկում է հավերի մեջ՝ ֆռռացնելով նրանց այս ու այն կողմ։ Կամացուկ, որպեսզի մյուս սենյակում չարթնացնեմ Արգինային, ես ոտքերիս ծայրերի վրա իջնում եմ բակ՝ ծորակի տակ լվացվելու։ Մայրիկն ինձ որոշ բան պատմել է արդեն Արգինայի մասին։ Եվ ես, չգիտեմ ինչու, նրան հիմա ավելի եմ սիրում։ Մայրիկն ասում է, որ Արգինան շատ է նման իր մորը՝ Դիանային, մայրիկի խոսքերով՝ աշխարհի ամենահմայիչ կնոջը։ Մայրիկը պատմել է նաև, որ բժշկական ինստիտուտն ավարտելուց հետո ուղիղ երեք տարի Դիանա մորաքրոջ հետ միասին աշխատել է միևնույն

հիվանդանոցում, և միմյանց հետ եղել են ոնց որ հարազատ քույրեր ու մինչև հիմա չեն մոռացել իրար£

– Արգինան նրա միակ աղջիկն է, – ասում է մայրիկը £– Քսանմեկ տարեկան է արդեն և այս տարի է ավարտել մանկավարժական ինստիտուտը£ Իսկ դու ինքդ, ինչ է, չե՞ս հիշում Արգինային, – անսպասելի հարցնում է մայրիկը£

– Ոչ, մամ, որտեղի՞ց հիշեմ£

– Նա եղել է մեր տանը®և դա ասես երեկ էր, – ասում է մայրիկը£– Այնինչ մի քանի տարի է անցել արդեն® Դպրոցը չէր ավարտել դեռ, կարծեմ ութերորդ թե իներորդ դասարանում էր£ Մոր հետ էր եկել, հետո մայրը գնաց, իսկ ինքը մոտ երկու ամիս մնաց մեզ մոտ£ Մազերը կարճ կտրած, գեղեցիկ՝ շարունակ շրջում էր այգում, ժամերով ականջ էր դնում ծտերի ծլվլոցին, վազվզում էր՝ Չալկան էլ ետևից£

– Չալկան էլ ետևի՞ց, – ծիծաղում եմ ես, ինքս էլ չգիտեմ, թե ինչու£

Ես պատրաստվում եմ նոր հարց տալու, սակայն պատշգամբում, խավավոր երկար խալաթը հագին, երևում է Արգինան, և ես լռում եմ£

– Օ՜հ, ինչ հրաշալի առավոտ է, – ասում է նա և լայն բացում ձեռքերը, ասես ցանկանալով գրկել արևի ճառագայթներով ողողված այս մեծ ու սքանչելի աշխարհը£

– Մեր գյուղում բոլոր առավոտներն են հրաշալի, – հպարտությամբ ասում եմ ես£

Արգինան, կկոցելով աչքերը, երազկոտ նայում է հեռավոր

սարերի կողմը£ Իսկ ինձ, չգիտես ինչու, այնպես է թվում, թե այդ պահին նա մտովի ծովափնյա իրենց քաղաքում է՝ այստեղից հազարավոր սար ու ձոր անդին£ Ճշմարիտն ասած, իմ այդ միտքը բոլորովին դուր չի գալիս ինձ£

– Իսկ ձեր քաղաքը, երևի, շատ է, հա՞, գեղեցիկ, – քրքմնջում եմ ես, մի պահ նայելով դեպի այնտեղ, ուր սարը բարձրացել, ձուլվել է երկնքին:

– Շա՜տ, – արտաբերում է Արգինան, նույնիսկ ուշադրություն չդարձնելով իմ խոսելու տոնին£

– Իսկ ինչո՞ւ ես եկել այստեղ, – ասում եմ ես նույն անբավականությամբ և ակամա նայում եմ մայրիկին£ Մայրիկը հանդիմանանքով տարուբերում է գլուխը՝ իբր, ամաչեիր գոնե£ Թեպետ ուշացումով, բայց ինքս էլ զղջում եմ, որ հիմար հարց տվի£ Իսկ Արգինան, – այ կեցցե նա, – ամենևին էլ չի նեղանում£ Նա առաջվա պես անհոգ ժպտում է և քնքշորեն խճողում է մազերս£

Մայրիկը բարձրանում է տուն՝ երևի նախաճաշ պատրաստելու£

– Դպրոցում ո՞նց են գնում գործերդ, Աբիկ, – անակնկալ հարցնում է£ – Լա՞վ ես սովորում£

Հարցն իսկապես անակնկալ էր, բայց ես գրամ անգամ չեմ շփոթվում, որովհետև պատրաստ ունեմ պատասխանը (բոլոր մեծահասակները տալիս են այդ հարցը և, հավանաբար, իրենք էլ չգիտեն, թե ինչու) £

– Գերազանց, – ասում եմ

– Իսկ ռուսերենի՞ց ինչպես ես, – ձեռք չի քաշում Արգինան

£

Եթե դարձյալ ասեմ «գերազանց», նա ինձ չի հավատա, որովհետև արտահայտվելու ձևից անգամ կզգա, որ իմ ասածի մեջ մի քիչ աղը պակասում է, – ինչ արած, այդպիսի գործերում ստել չեմ կարողանում, թեպետ, իհարկե, նման հիմար վիճակներից դուրս գալու համար մեկ-մեկ չէր խանգարիմ£ Ուստի ասում եմ.

– Ոչինչ, չորսի ու երեքի արանքում£

– Այ, դա արդեն բանի նման չէ, – դժգոհությամբ գլուխն օրորում է Արգինան£

Ես ինքս էլ հասկանում եմ, որ «բանի նման չէ», բայց ինչ կարող եմ ասել£ Այնուամենայնիվ, հարցնում եմ միամիտ տեսքով.

– Ինչո՞ւ£

– Քաջաբար հայտարարում ես՝ «գերազանց», իսկ ռուսերենից®

– Դիտավորյալ չեն նշանակում, – ասում եմ ես կայտառորեն£

Դա հին ու փորձված միջոց է, երևի աշխարհի երեսին բոլոր աշակերտներն էլ այդպես են ասում. բարձր գնահատական ստանալիս ասում են՝ ստացանք, իսկ եթե երեք կամ երկու են ստանում՝ նշանակել են£ Եվ ավելացնում են նույնիսկ՝ դիտավորյալ բարձր չեն նշանակում£ Կան այնպիսիները, որ հավատում են£ Բայց Արգինան կարծես թե չի հավատում ինձ£ Խորամանկորեն ժպտալով նա ասում է.

– Վաղվանից ձեզ մոտ ռուսաց լեզուն ես եմ դասավանդելու£

Այ քեզ նորություն£ Նա ոչ թե ուսուցչուհու՝ տասերորդ դասարանի աշակերտուհու է նման£ Ես իմ ականջներին չեմ հավատում£ Զգում եմ, թե ինչպես է սիրտս արագ ու անկանոն խփում կրծքիս տակ, ասես ուր որ է դուրս կթռչի այնտեղից£ Բայց որևէ բան ասել բարձրաձայն՝ չեմ համարձակվում, ինձ ինչ-որ անսովոր երկչոտություն է պատում անմիջապես£ Եվ դա իր պատճառն ունի. ինչո՞ւ հորինեցի, թե իբր գերազանց եմ սովորում£ Չէ՞ որ հենց վաղը նա կիմանա, որ ես ոչ թե գերազանցիկ եմ, այլ՝ ընդհակառակը£ Բայց ուշ է արդեն որևէ բան փոխելու համար£ Իզուր չէ, որ հայրիկը սիրում է կրկնել. «Խոսքը թռչունի նման բան է, դուրս թռավ- էլ չես բռնի»£ Ինձ մնում է շուտ տալ խոսակցության թեման, որպեսզի նա կրկին չանդրադառնա իմ դպրոցական գործերին£

– Բժշկուհի՞ է ձեր մայրիկը, – ասում եմ ես£

– Այո, – իմ անսպասելի հարցից զարմացած, պատասխանում է Արգինան£– Ներքին հիվանդությունների մասնագետ է հանրապետական հիվանդանոցում£

– Իսկ ձեր հայրի՞կը, – հենց այնպես հարցնում եմ ես:

Արգինան կրկին զարմանքով նայում է ինձ, ասես փորձելով հասկանալ՝ ի՞նչ նպատակ են հետապնդում իմ անիմաստ հարցերը£

– Իսկ քո ինչի՞ն է պետք, – հարցնում է նա վերջապես£

Իհարկե, նրան հո չես ասի, թե ինչու տվեցիր այդ

հարցերը, դրա համար էլ լռում եմ£

– Ես հայր չունեմ, Աբիկ®– ուշացումով արձագանքում է Արգինան£– Նա օդանավի մեխանիկ էր քաղաքացիական ավիացիայում£ Հերթական մի թռիչքի ժամանակ ուղևորներից երկու հոգի զինված մտնում են օդաչուական խցիկ և ստիպում խախտել սահմանը£ Հայրս ու մատուցողուհին զոհվում են, սակայն բանդիտներին այդպես էլ չի հաջողվում անցնել պետական սահմանը£

Տնամերձ այգիներից այն կողմ՝ ձորում, կամացուկ խոխոջում-հառաչում է մեր Բարակ ջուր գետը, և նրա ձայնը հնչում է վշտաբեկ. վը2-2-2, վը2-2-2® Ասես հասկանում է ամեն ինչ£

– Մինչև հիմա էլ օդանավի հեռավոր ձայն լսելիս, մայրս նայում է երկնքին£

– Ինչո՞ւ£

– Սպասում է երևի®

Իմ հայացքը հանդիպում է Արգինայի թախծանուշ աչքերին£

Ու թե հետո էլ ինչ կարելի է ասել՝ չգիտեմ£ Արգինան երևի հասկանում է իմ վիճակը£

– Դու խղճո՞ւմ ես ինձ, Աբիկ, – հարցնում է նա£

– Այո, – ասում եմ ես, սիրտ չանելով նայել Արգինային£

– Իսկ, այ, դա արդեն պետք չէ£ Իմ հայրը զոհվել է մեր հասարակությանը թշնամի տարրերի հետ մարտնչելիս £ Դու ինձ հասկանո՞ւմ ես, Աբիկ£

– Այո£

Աստված իմ, սա ի՞նչ հիմարություն է, մի խելքը գլխին բան չեմ կարողանում ասել, այդ անհեթեթ «այո» -ից բացի £ Մեծերի համար, իհարկե, հեշտ է, մի վայրկյանում ուզած խոսքը կգտնեն ու կասեն£ Երբ կլինի՝ ես էլ մեծանամ®

– Դու արդեն մեծ տղա ես, Աբիկ, – կամացուկ ասում է Արգինան£– Դու ամեն ինչ պետք է հասկանաս£

Ես քիչ է մնում ճչամ՝ ախր, ես ամեն, ամեն ինչ հասկանում եմ, միայն կարգին բացատրել չեմ կարողանում£ Սակայն առաջվա պես, ասես ոնց որ լարած թութակ, կրկնում եմ.

– Այո®

Արգինան հանկարծ ջերմագորով ժպտալով, ասում է.

– Դու կուզենայի՞ր իմ եղբայրը լինել£

– Իհարկե, – ես հազիվ եմ զսպում ինձ, որպեսզի չգոռամ ուրախությունից£

Արգինան պոռթկումով ինձ առնում է իր թևերի մեջ, գլուխս սեղմում իրեն£ Նրա քնքշանքից ու անուշաբույր մարմնի մտերմիկ մոտիկությունից սիրտս երջանկությունից ուռչում, նվաղում է և, որպեսզի գոնե ինչ-որ կերպ արտահայտած լինեմ դա, ասում եմ.

– Դու անպայման կսիրես մեր գյուղը£

– Ես այն հիմա էլ սիրում եմ, – ժպտում է Արգինան£

– Իսկ դու ինչո՞ւ հատկապես մեր գյուղ եկար£

– Ինստիտուտն ավարտելուց հետո երեք տարի պարտավոր ես աշխատել որևէ շրջանում£ Դա պարտադիր է, առանց դրան դիպլոմ չեն տալիս£ Մայրիկի հետ խորհրդակցեցինք, ես հանձնաժողովից խնդրեցի ուղարկել

ձեր շրջանը, իսկ հետո այստեղ, շրջժողկրթբաժնում ասացի, որ ուզում եմ աշխատել Հնձախութի դպրոցում£ Բարի մարդիկ չմերժեցին, և ահա ես այստեղ եմ£

– Ուրեմն դու կարող էիր և չգա՞լ մեզ մոտ, – վախեցած հարցնում եմ ես£

– Իհարկե, կարող էի, – պատասխանում է Արգինան ժպտալով£– Ես կարող էի ասպիրանտուրայում մնալ, չէ՞ որ գերազանցության դիպլոմով եմ ավարտել ինստիտուտը £ Մեր կուրսից շատերն են մեկնել հեռավոր գյուղեր, խոստացել ենք նամակներ գրել իրար£

Քամին թեթևակի տարուբերում է ծառերի կատարները£ Դեղին տերևները պոկվում են ծառերից, երկար օրորվում են օդում և հանդարտորեն ընկնում գետնին£ Ես մտածում եմ այն մասին, որ շուտով ձմեռ կլինի, ձյուն կգա, ձյան թանձր փաթիլները դանդաղասահ կգալարվեն օդում, հետո կնստեն ծառերին, տների տանիքներին, էլեկտրալարերի վրա, և սար ու ձոր, դաշտ ու ճամփա խոր ձյան տակ քուն կմտնեն մինչև գարուն£

4

Մարդ չի կարողանում հասկանալ, թե ինչ արագությամբ են թռչում օրերը, թե ինչպես օրերը դառնում են շաբաթներ, իսկ շաբաթները ամիսներ£

Եվ ահա նորից աշուն է, և նորից մեր Հնձախութը դեղին շորեր է հագել£ Այստեղ-այնտեղ, ընկուզենիների վրա կոկռում են ագռավները, բերաններին ընկույզներ՝ ցածր թռչում աշնան կանաչ ցելերի վրայով£ Քամուց դարձյալ տարուբերվում են դեղձենիները£ Եվ մեր Բարակ ջուր գետը նույնպես՝ ներառնելով մայրամուտի վերջին շողերը, ցոլկտում է բաց եղրևանագույն փայլով և գալարապտույտ անցնելով անտառներով, դաշտերով ու այգիներով, առաջվա նման իր խոխոջյունն է տանում դեպի մթին ու անդնդախոր ձորերը£

Արևը բարձրացել, հասել է երկնքի ամենաբարձր կետը, որտեղից, հավանորեն, երևում է ամբողջ աշխարհը£ Դպրոցական պայուսակն ուսս գցած, ես գնում եմ տուն£ Վեջին ժամանակներս, չիտեմ ինչու, գերադասում եմ տուն վերադառնալ մենակ, այդպես ինձ ավելի է դուր գալիս£ Իմ ոտքերի տակ խշխշում են չոր տերևները£ Եվ այդ շրշյունի տակ զանազան մտքեր են ծնվում իմ գլխում£ Ես մտածում եմ այն մասին, որ ահա ամբողջ մի տարի է, ինչ Արգինան մեր տանն է ապրում£ Չէ, իրոք, զարմանալիորեն արագ անցավ այդ մի տարին£

Ամբողջ մի տարի®

Հայրիկը դարձյալ կոլտնտեսությունում է աշխատում£ Առավոտյան, դեռ լույսը չբացված, ձին նստում, գնում է ֆերմաները և վերադառնում միայն ուշ երեկոյան կամ գիշերվա կեսին£ Պատահում է նաև, որ անասուններ են տանում շրջկենտրոն՝ մսամթերման, և նա մեկ-երկու օր մնում է այնտեղ£ Մայրիկը նույնպես, եթե ծանր հիվանդ են բերում, երբեմն մնում է հիվանդանոցում£ Որովհետև, ճիշտ է, փոքր է մեր գյուղը, բայց հիվանդանոցը ենթաշրջանային է, սպասարկում է նաև հարևան փոքր գյուղերի բնակչությանը, և հաճախ են ծանր հիվանդներ բերում այնտեղ£

Արգինան դպրոցից ինձնից միշտ շուտ է վերադառնում£ Եվ երբ հնչում է վերջին զանգը, ես իսկույնևեթ վազում եմ տուն, որովհետև Արգինան չի սիրում, երբ ես հապաղում եմ որևէ տեղ£ Դրա համար էլ չեմ ուշանում£ Ինքս էլ զարմանում եմ ինձ վրա. այս մի տարվա մեջ ես լիովին վերափոխվել եմ, և ինչպես մայրիկն է ասում, դարձել միանգամայն օրինական տղա£ Դասերից հետո ուղիղ գալիս եմ տուն, և մենք անմիջապես նստում ենք ճաշի £ Եթե, բան է, մայրիկը տանը չէ, Արգինան միայնակ չի ճաշում, սպասում է ինձ£ Դուրս է գալիս պատշգամբ, նստում այնտեղ ու սպասում£ Եվ միշտ ուրախանում է, երբ ես գալիս եմ£ Ոնց որ ուրախանալու մի բան չկա՝ ես հո երկնքից չեմ իջնում, բայց չէ, ուրախանում է, և վերջ£ Նրան տեսնելիս, իհարկե, ես նույնպես ուրախանում եմ, թեպետ դա այնքան էլ ցույց չեմ տալիս£ Միայն ժպտում եմ և ուրիշ ոչինչ

£

Բայց երբեմն այնպես եմ ուզում նրան ասել, որ շարունակ մտածում եմ իր մասին£ Սակայն, ինքս էլ չգիտեմ ինչու, չեմ համարձակվում£ Հավանաբար, վախենում եմ ծիծաղելի երևալ, թե ինչ® Այնուամենայնիվ, առանց Արգինայի, ես իրոք շատ եմ տխրում£ Ամռանը, երբ արձակուրդներին նա գնաց Բաքու, քիչ էր մնում անձկությունից պայթեր սիրտս£ Իսկ վերջին գիշերը մինչ լույս քնել չկարողացա, մինչ լույս անհանգիստ շուռումուռ էի գալիս անկողնում£ Հետաքրքիր է, մինչ այդ մարդուն չգիտես, չես ճանաչում, նա իր համար է ապրում, դու՝ քեզ համար, բայց ահա պատահաբար հանդիպում ես, նա դառնում է քո հարազատը, գուցե նույնիսկ ավելին, քան հարազատը, և քեզ թվում է, թե առանց նրան այլևս ապրել չես կարող և զարմանում ես նույնիսկ, թե մինչև հիմա ինչպես ես ապրել առանց նրան® Մայրիկն ասում է, որ Արգինան այսուհետև մնալու է մեր գյուղում£ Արգինան ինքը ևս մի անգամ ասաց. «Ես այս գյուղից ոչ մի տեղ չեմ գնալու£ Ընդմիշտ մնալու եմ ձեզ մոտ® Ես այնպիսի զգացողություն ունեմ, որ կարծես այստեղ եմ ծնվել£ Չէ, ես աշխարհի ոչ մի տեղի հետ չեմ փոխի այն»£ Ազնիվ խոսք, այս բառերը լսելիս քիչ է մնում հալվեմ ուրախությունից£ Տարօրինակ բան. այն օրվանից, ինչ Արգինան ապրում է մեզ մոտ, մեր գյուղի բոլոր տղաները սկսել են մի ուրիշ ձևի վերաբերվել ինձ, չգիտեմ ինչու, բայց դա իրոք այդպես է, մի անգամ չէ, որ նկատել եմ£ Գուցե մեծացել եմ մի տարով՝ դրանի՞ց է£ Նույնիսկ տրակտորիստ Մաքսիմը, որ առաջ

չէր թողնում անգամ մոտենալ գութանների նստատեղին, այժմ, նկատելով ինձ, իսկույն կանգնեցնում է տրակտորը, իջեցնում է շարժիչի աշխատանքը և տրակտորը սկսում է կամացուկ աշխատել՝ թրկ, թրկ, թրկ® Գլուխը հանելով խցիկից, Մաքսիմը ժպտադեմ նայում է ինձ և մատով կանչում իր մոտ£ Ես, իհարկե, մոտենում եմ£ Նա իր հսկայական ձեռքը դնում է ուսիս (ձեռքի ծանրությունից քիչ է մնում ծալվեն ոտքերս), և տալիս է իր առաջին հարցը.

– Հը, գործերդ ինչպե՞ս են, Աբիկ£

– Ոչինչ, – պատասխանում եմ ես£

– Իհարկե, – ասում է նա այնուհետև և միաժամանակ հառաչում ու երազկոտ նայում է Սառնատան կողմը£– Իհարկե, ինչո՞ւ պիտի վատ լինեն®– Մաքսիմը ժպտում է £ Նրա ժպիտն այնպիսին է, որ թվում է, թե ահա ուր որ է նա լաց կլինի£ Շշմել կարելի է ծիծաղից£ Բայց ես, իհարկե, չեմ ծիծաղում, թե չէ մեկ էլ տեսար այնպես հասցրեց, որ մեծ կտորդ ականջդ մնաց£ Ես միամիտ տեսքով ասում եմ.

– Շատ գեղեցիկ տրակտոր ունես£

Նա ուշադիր նայում է ինձ՝ կատակո՞ւմ եմ, թե ոչ£ Եվ տալիս է երկրորդ հարցը.

– Ճի՞շտ ես ասում£

– Այո£ Ոչ ոք այդպիսի տրակտոր չունի, – ասում եմ ես£

Մաքսիմը հպարտությամբ նայում է ինձ£

– Հիմա ճապոնական լավ տրակտորներ են դուրս եկել, – ասում է նա՝ նայելով իր հերկած ցելերին£– Բայց մեր տեղերի համար չեն, հարթ տարածությունների համար

են դրանք£ Այստեղ ճապոնական տրակտո՞ր կդիմանա՝ ընկուզենիների արմատները մի հեկտարի վրա գնում են£

– Ճապոնական տրակտորն ի՞նչ է քոնի մոտ, – ասում եմ ես, սպասելով Մաքսիմի ամենագլխավոր հարցին£

– Իսկ ձեր Արգինան գիտի՞, որ այսպիսի տրակտոր ունեմ, – վերջապես ասում է նա՝ կարմրելով մինչև ականջների ծայրերը£

– Իհարկե, գիտի, – անխղճորեն ստում եմ ես£ Մաքսիմի դեմքը շողում է բավականությամբ£ Եվ նա, միանգամայն անսպասելի ասում է.

– Ուզո՞ւմ ես սովորեցնեմ քեզ տրակտոր քշելը£– Չսպասելով պատասխանի, նա իմ թևատակերից բռնում, արագ թոցնում է խցիկ և, տեղավորելով իր կողքին, կարգադրում է.– Բռնիր լծակն ահա այսպես£ Ոտքդ դիր ահա այստեղ£ Ապրես£ Սեղմիր ոտնակը և կամաց բաց թող £ Այ, այդպես, ապրես£

Տրակտորը հոնդում, ծուխ արձակելով դանդաղ առաջ է գնում՝ ակոս-ակոս շուռ տալով սև հողը£ Երջանկությունից շունչս կտրվում է, ես արագ նայում եմ այս ու այն կողմ, բայց ափսոս, տեսնող չկա£ Վաղը կպատմեմ դպրոցում, բայց ոչ ոք չի հավատա®

– Հը, գործերդ ո՞նց են Աբիկ, – տրակտորի խելացնոր հոնդյունի ու գութանների դղրդյունի մեջ ես հազիվ եմ լսում Մաքսիմի ձայնը£

Ես հիշում եմ, որ նա մի երկու րոպե առաջ ևս այդ հարցն էր տվել, ուստի ասում եմ.

– Առաջվա նման£

– Իհարկե, լավ կլինես, – գոռում է Մաքսիմը£– Քեզ ինչ է եղել, որ վատ լինես® Ասում եմ, իհարկե, լավ կլինես®

– Լսեցի® Դու ինձ ասա, ինչպե՞ս ավելացնեմ արագությունը£

– Չի կարելի, խարակ կանես, – մի պահ ուշադրությամբ նայելով ետ, ասում է Մաքսիմը£ Եվ փոխանակ ավելացնելու տրակտորի արագությունը, նա հանկարծակի կանգնեցնում է տրակտորը, իջեցնում է շարժիչի աշխատանքը և, թավ հոնքերի տակից մտախոհ նայելով ինձ, խոր հոգոցով ասում.

– Ինձ թվում է, Աբիկ, մեր ամբողջ Ղարաբաղում Արգինայի նման աղջիկ չկա£

– Իհարկե£ Ինչ խոսք կարող է լինել այդ մասին, – հաստատում եմ ես մեծավարի£ Ինձ դուր է գալիս խոսելու իմ տոնը£ Եվ, ինչպես հավասարը հավասարին, ուղիղ նայում եմ Մաքսիմին՝ սպասելով, թե ինչ կասի նա£

Մաքսիմը դարձյալ հառաչում է և, ասես ուժերից վեր ծանր գործի է, տնքալով ասում է.

– Հենց վատն էլ դա է, որ նրա նմանը չկա£

– Ինչո՞ւ, – զարմանում եմ ես£

– Չգիտեմ£ Այդքան գեղեցիկ չլիներ, ով գիտի, գուցե արժանացներ իր ուշադրությանը£

Իմ կարծիքով, Մաքսիմն այս հարցում լրիվ սխալվում է£ Ես հո գիտեմ, որ Արգինան բոլորին էլ հավասարապես լավ է վերաբերվում£

– Նա բոլորի հետ էլ սիրով է խոսում, – ասում եմ ես£

– Հրմ, բոլորի հե՞տ®

– Իհարկե£

– Ինձ հետ չի խոսի® Գոնե կրթություն ստացած լինեի, գուցե արժան համարեր® Բայց հիմա, չէ, չի խոսի®

– Ինչպե՞ս թե՝ չի խոսի£ Կխոսի, մի՞թե ես չգիտեմ£

Չգիտեմ ինչու, ես մի տեսակ խղճում եմ Մաքսիմին £ Մտքում հաստատ որոշում եմ՝ տուն գնալուն պես այդ մասին խոսել Արգինայի հետ, որովհետև, ընդհանուր առմամբ, վատ տղա չէ նա, թեկուզ առաջներում չէր թողնում մոտենալ իր տրակտորին£ Իմիջիայլոց, Մաքսիմը մեր գյուղի ամենաջահել տրակտորիստն է, իսկ այս ամռանը, բերքահավաքի ժամանակ, կոլտնտեսության ««Նիվա» ինքնագնաց կոմբայնը նա էր բանեցնում և համարյա գիշեր ու ցերեկ դաշտերից տուն չէր գալիս£ Մեծ մասամբ նրա շնորհիվ էր, որ կոլտնտեսությունը լեռնային գյուղերի մեջ առաջինն ավարտեց հունձը£

– Իսկ սովորելում ո՞նց ես£ Երևի լավ ես սովորում, չէ՞, – հարցնում է Մաքսիմը£

Ասես իր շատ պետքն է իմ սովորելը£ Խոսելու բա՞ն չունի, ինչ է®

– Այո, – ասում եմ ես£ Բայց տեսնում եմ՝ ականջի մի ծայրով է լսում ինձ, մտքերը բոլորովին ուրիշ տեղ են£

– Էդ էր պակաս, որ վատ սովորեիր, – բարեհոգի ժպտալով ասում է Մաքսիմը£– Երևի Արգինան պարապում է հետդ£

– Ըհը£ Արի մեզ մոտ, քեզ հետ նույնպես կպարապի£

Մաքսիմը ծիծաղում, թեթևակի խփում է ուսիս£

– Լավ, Աբիկ ջան£ Պլաններս մնացին, հիմա բրիգադիրը կգա ու կսկսի գլուխ տանել£ Բարևներ հաղորդիր ինձանից®– ասում է նա ու անմիջապես ավելացնում է շփոթված£– Չէ, պետք չէ, մեկ էլ տեսար նեղացավ£

Եվ ոչ միայն Մաքսիմը, բոլորը-բոլորը փոխվել են իմ նկատմամբ£ Կոշկակար Մերուժանը, որը քսանչորս ժամվա ընթացքում մի անգամ է ժպտում միայն, այժմ, ինձ տեսնելիս, անմիջապես մոտենում է և նրա մանր աչքերը աշխույժ վազվզում են ակնախոռոչներում£

– Էդ որտե՞ղ ես, Աբիկ ջան, բոլորովին չես երևում, – ամեն անգամ ասում է նա£

– Որտե՞ղ պիտի լինեմ, քեռի Մերուժան, – ասում եմ ես£– Մեր գյուղից ո՞ւր պետք է գնամ, միշտ այստեղ եմ£

Մերուժանը ոտքի ծայրով քշփորում է հողը£ Ըստ երևույթին, նրան իմ բառերը վիրավորական են թվում£

– Բա ինձ նման ջահել տղային քեռի՞ են ասում, Աբիկ, – ասում է նա£

– Բա ի՞նչ են ասում, քեռի Մերուժան£

Մերուժանն այնպիսի հայացքով է նայում ինձ, որ ես պարզ զգում եմ՝ ուրիշ ժամանակ լիներ, վզակոթիս կտար ու կասեր՝ հայդա£ Բայց հիմա զուսպ ասում է.

– Սրանից հետո էլ չլսեմ, որ ինձ քեռի ես ասում, Աբիկ £ Դու դրանով, գիտե՞ս, ոնց որ սրած դանակը վերցնես ու խրես սիրտս£

Ինձ համար դժվար է հասկանալ, թե այդ հասարակ

ու սովորական «քեռի» բառը ինչու է Մերուժանին սրած դանակ թվում, ես ուզում եմ խոսք բացել այդ մասին, բայց Մերուժանը անսպասելի հարցնում է.

– Արգինան երևի կոշիկներ չունի, հա՞£

– Ինչպե՞ս չունի, – ասում եմ£– Նոր կոշիկներ ունի, վերջերս է գնել£

Մերուժանը հիասթափված նայում է ինձ£

– Ա-ասում էի գուցե չունի£

– Ունի£ Եվ այն էլ մի քանի զույգ£

– Այդ կոշիկները, ինչ է, չե՞ն մաշում£ Բերեիր, մի լավ նորոգեի® Ինքն էլ կտեսներ, որ ոսկի ձեռքեր ունեմ£

Ճիշտն ասած, այդ Մերուժանը երբեք ինձ դուր չի եկել£ Գուցե դրա համար էլ նրա վերջին բառերը կատաղեցնում են ինձ£

– Ոչ, – ասում եմ, – երբեք չեն մաշում£

– Չեն մաշում, ուրեմս, – ձեռք չի քաշում Մերուժանը£

– Այո, – համարյա գոռում եմ ես£– Չեն մաշում, որովհետև միշտ նորն է առնում£

– Բա դա եղա՞վ, Աբիկ ջան£ Քարով սրտիս մի խփիր£

Ես չգիտեմ, թե ինչի մասին է նրա խոսքը և սպասում եմ, թե այնուհետև ի՞նչ կասի£ Եվ նա ասում է.

– Իմ ամբողջ հույսը դու էիր, Աբիկ® Մտածում էի՝ Աբիկը ինձ համար ոնց որ փոքր եղբայր, ինձ կհասկանա®

Ա՜յ քեզ նորություն® Զարմանալի մարդ է այս Մերուժանը, մեկ էլ տեսար այնպիսի բան ասաց, որ եփած հավի ծիծաղը կգա£ Իսկ նա տաղտուկ ձայնով իրենն է

շարունակում£

– Էհ, Աբիկ ջան, քո Մերուժանը մեռած ու թաղած չի®Դեռ են ժամանակ, երբ եկավ էստեղ, միանգամից մտավ սիրտս® Բանակից նոր էի եկել… Գիշեր-ցերեկ ոչ քուն ունեի, ոչ դադար£ Սերն ուրիշ բան է, Աբիկ ջան, դու դա չես հասկանա£ Երբ սիրում ես, էնպիսի մի հարստություն ես հայտնաբերում ինքդ քո մեջ, էնպիսի մի քնքշություն, որ էն մրջյունն ինչ է, ուզում ես կանգնել ու էդ մրջյունի հետ անգամ զրույց անել, և նույնիսկ ինքդ էլ զարմանում ես քեզ վրա, որ կարող ես էդպես սիրել® Առանց սեր կյանքը, Աբիկ ջան, ոնց ասեմ քեզ, որ հասկանաս, ոնց որ տարին՝ առանց գարնան, առանց ծիլ ու ծաղկի® Երևի ճիշտ են ասել, որ պիտի գնահատես նրան, ով առանց քեզ չի կարող և չվազվզես նրա ետևից, ով առանց քեզ էլ երջանիկ է: Բայց դե… սրտի դեմ ի՞նչ կարող ես անել: Հլա էն ժամանակ, ասում եմ, չէ՞, նրա գնալուց հետո, քանի-քանի անգամ եմ երազում տեսել®-Մի քիչ ախուվախ քաշելուց հետո, նա այնպիսի մի ձայնով, որ քիչ է մնում հորանջոցս բռնի, ասում է.

– Է՞հ, որտեղի՞ց եկավ, մեզ համար հանգիստ ապրում էինք մեր էս ձորերի մեջ®

«Ապրիր էլի, քեզ ո՞վ է խանգարում», -մտքումս ասում եմ ես և լուռ քայլում դեպի տուն£

5

Ամբողջ մի տարի® Իրոք, այդ ե՞րբ անցավ այս մի տարին£ Դպրոցական պայուսակը ուսս գցած, ես դպրոցից վերադառնում եմ տուն£

Կոշկակար Մերուժանի փայտե փոքրիկ արհեստանոցը գտնվում է կոլտնտեսության վարչության գրասենյակի ու գյուղական խանութի արանքում՝ մեր տնից ոչ հեռու, և իմ ճանապարհն արհեստանոցի մոտով է անցնում£ Զզվելի սովորություն ունի այդ Մերուժանը, որ օձիքդ ձեռքն ընկավ, էլ պրծում չկա£

Այս անգամ ուզում եմ աննկատ անցնել, որպեսզի նա նորից չսկսի հին երգը£ Բայց չէ® Ըստ երևույթին, արհեստանոցի նեղլիկ լուսամուտից Մերուժանը նկատում է ինձ£ Նա արագ դուրս է գալիս արհեստանոցից՝ կաշվե երկար սև գոգնոցը կապած, դեմքին քաղցրենի ժպիտ, աչքերում՝ շողոմքոր կայծեր£

– Բարև, Աբիկ ջան, – ասում է նա մեղուշ ձայնով£

Ճարս ինչ՝ ստիպված կանգ եմ առնում£

– Բարև, – ասում եմ ես£

– Էդ որտե՞ղ ես, բոլորովին չես երևում£

Ոնց էլ ստում է. օրական երկու անգամ, չհաշված, իհարկե, կիրակի օրերը, անցնում եմ այստեղով՝ մեկ դպրոց, մեկ էլ դպրոցից ետ՝ տուն£ Բայց նրա համար մեկ է՝ թեկուզ միլիոն անգամ անցիր, միևնույն է, էլի իրենն է կրկնելու. «Էդ

ո-ր-տ-ե՞ղ ես, բ-ո-լ-ո-ր-ո-վ-ի-ն չ-ե-ս ե-ր-և-ու-մ»£ Մի բանից պիտի սկսի, չէ՞®

Ես, իհարկե, նրան չեմ պատասխանում£ Հո չես ասի՝ ո՞նց չեմ երևում, հրես քո առջև կանգնած եմ£

– Քիչ առաջ կարմիր շոր հագած եկավ-անցավ® Ոնց որ սարերի ջեյրան՝ եկավ ու անցավ® էն երգը գիտե՞ս, որ ասում է՝ նորից գարուն եկավ, գարուն աննման, կարմիր էիր հագել, վարդի պես վառման, ջեյրանի պես սարերով եկար ու անցար, մեկ բարև էիր տալիս՝ այն էլ մոռացար, – գլուխը շարժելով, թախծալի ձայնով արտասանում է Մերուժանը £– Էդ ի՞նչ տեսակ գեղեցկություն է դրա գեղեցկությունը, Աբիկ®Էն աստվածը, նրան նայելիս մարդ իրենից անկախ մտածում է երջանկության հեքիաթային աշխարհի ու հազարան բլբուլի մասին: Գրադարանից եմ վերցրել ու կարդացել էդ բլբուլի մասին…

Ես նայում եմ Մերուժանին ու զարմանքից մնում ապշած. ես միայն նոր եմ նկատում, որ նրա աչքի մեկը կարծես թե աջ է նայում, իսկ մյուսը ձախ£ Ես դժվարությամբ եմ զսպում ինձ, որպեսզի բարձրաձայն չծիծաղեմ£

– Հիմա ի՞նչ պիտի անենք, Աբիկ, – ասում է Մերուժանը, չգիտես ինչու, իջեցնելով ձայնը£

– Ինչի՞ համար, – իմ հերթին հարցնում եմ ես£

– Ի՞նչ թաքցնեմ քեզանից, Աբիկ ջան, իմ ամբողջ հույսը դու ես£

– Ոչինչ չեմ հասկանում£ Ի՞նչ հույսի մասին է խոսքը£

– Հիշո՞ւմ ես, քեզ ասել եմ այդ մասին® Իմ հույսը դու ես,

իմ վերջին հույսը£– Մերուժանը նստում է անցած ձմեռվանից մնացած հաճարենու կոճղին, վախվորած նայում է չորս կողմը և շարունակում ցածր ձայնով£– Իմ արևը, Աբիկ, որ ինձ սպանեն էլ, որ կախ էլ տան, միևնույն է, նրան իմ սրտից հանել չեմ կարող£ Հասկանու՞մ ես, նրան կորցնելուց հետո ես էլ կորցնելու բան չունեմ… Մեղավոր չեմ, սիրում եմ, գետնից մինչև երկինք խենթի պես սիրում եմ, Աբիկ ջան, ոնց ասեմ, խմած չեմ, բայց հարբած եմ£

– Ինչպե՞ս կարելի է չխմել, բայց հարբել£ Այդպիսի բան չի լինում£

– Դու իմ միտքը չհասկացար, Աբիկ ջան£ Ես ուրիշ բան եմ ասում® Նա ինձ չգիտի, չի ճանաչում, հետո ինչ, թե բարևում եմ, պատասխանս տալիս է£ Դա էն չի®Դու հո կարող ես նրան մի երկու խոսք ասել իմ մասին£

– Օրինակ, ի՞նչ£

– Դե, ինչպես ասեմ քեզ, – Մերուժանը մի պահ մտամփոփ նայում է հեռու հանդերի կողմը£– Ամեն ինչ էլ կարող ես ասել, փառք աստծու, ձեռքս քարի տակ չի, աշխատում եմ և վատ չեմ վաստակում£ Աղջիկներ շատ կան, ում էլ ասեմ՝ մի գլուխ վազելով կգա, բայց, դե, Արգինան ուրիշ է, բարձրագույնն ավարտած, գեղեցիկ, լավ ոռճիկ է ստանում, ես նրա մի մազը չեմ փոխի մեր գյուղի բոլոր աղջիկների հետ… Ասա մեքենայի հերթում է, շուտով մեքենա է գնելու£– Մերուժանը կրկին նայում է չորս կողմը £– Լսիր, Աբիկ ջան, դու էդ բանն արա, ես քեզ էնպիսի մի լավություն անեմ, որ ամբողջ կյանքում ինչ էլ անես՝

չկարենաս իմ լավության տակից դուրս գաս:

– Չեմ հասկանում, ես ի՞նչ պիտի անեմ, – ասում եմ ես հետզհետե բարկանալով£

– Հիմա, հիմա, Աբիկ ջան, հիմա ասեմ քեզ£ Հասկանո՞ւմ ես® Հնարավո՞ր չի, օրինակ, մի անգամ, ուշ երեկոյան նրան վերցնես ու գրույց անելով գաս ձորի կողմը® Բայց էնպես, որ մարդ-բան չլինի, թե չէ, մեկ էլ տեսար, սկսեցին բամբասանքները.. Շատ կարևոր մի հարց կա, ուզում եմ էդ մասին խոսել հետը® Էդ որ անես, Աբիկ ջան®

«Նա ուզում է փախցնել Արգինային», – վայրկյանաբար անցնում է իմ մտքով£ Այդ ենթադրությունից նույնիսկ շնչահեղձվում եմ£

– Ուզում ես փախցնե՞լ Արգինային, – ասում եմ ես£

– Հա, – արագ ելնելով տեղից պատասխանում է Մերուժանը£– Քեզնից ի՞նչ թաքցնեմ, Աբիկ ջան, պայմանավորվել եմ, Կաղնախաչի վրայով ձիով կտանեմ Առաջաձոր, բարեկամ ունենք էնտեղ, կթողնեմ նրանց տանը, իսկ հետո հեշտ է£ Մեր գյուղերում էդպիսի էնքա՜ն դեպքեր են եղել® Օգնիր ինձ էդ հարցում, Աբիկ ջան, լավությունդ չեմ մոռանա մինչև մահ-գերեզման£

– Ինչպե՞ս չես ամաչում, – համարյա գոռում եմ ես, զգալով, թե ինչպես են մի ակնթարթում լցվում աչքերս£– Հիմա ես կգնամ ու բոլորին, բոլորին կպատմեմ այդ մասինք£

Մերուժանը, հանկարծակի գունատվելով, նայում է շուրջը և, փորձելով ժպտալ, վախեցած ձայնով ասում է.

– Ի՞նչ փախցնել, ի՞նչ ես ասում, կատակ արեցի® Այ

տղա, դու կատակ-բան չես հասկանո՞ւմ£

Ես արագ, առանց ետ նայելու, վազում եմ դեպի տունք

6

Դեռևս տուն չհասած՝ մարագի մոտ լսում եմ Արգինայի ձայնը£ Շրջվում եմ ձայնի ուղղությամբ£ Արգինան տասերորդ դասարանի մի խումբ աղջիկների հետ ճանապարհի եզրին կանգնած աշխույժ զրուցում, ծիծաղում է£ Տուն գնալ չեմ ուզում, նստում եմ մարագի ստվերում՝ սպասելով Արգինային£ Արգինան շարունակում է ինչ-որ բանի մասին պատմել աղջիկներին, և նրանք համերաշխ կչկչում են£ Ճիշտն ասած, չգիտեմ ինչու, ինձ դուր չի գալիս այն, որ Արգինան այդքան մոտ է աղջիկների հետ£ Հետո ի՞նչ, թե նրանց դասղեկն է£ Ինձ նույնիսկ թվում է, թե Արգինան հատուկ նրանց համար է ստեղծել «Սիրենք, պահպանենք հայրենի բնությունը» խմբակը£ Դե, իհարկե՝ որպեսզի մշտապես միասին լինեն£ Մեկ էլ տեսար հավաքվեցին մեր տան մոտ և սկսեցին ճովողել սարյակների պես£ Պատահում է նաև, գնում են շրջելու գյուղամերձ դաշտերում կամ զբոսանք են կազմակերպում դեպի սարերը և տուն են վերադառնում արևը մայր մտնելուց հետո£ Մի անգամ նույնիսկ Արգինան իր դասարանով մեկնեց մարզկենտրոն՝ ինչ-որ ներկայացում դիտելու£ Ես չքնեցի այդ գիշեր, անկողնում պառկած արթուն սպասեցի՝ մինչև նրանք կվերադառնային այնտեղից ու դրանից հետո նոր միայն քնեցի£

Փառք աստծո, վերջապես Արգինան հրաժեշտ է տալիս

աղջիկներինՀ

– Դեհ, մինչև վաղը, աղջիկներ, – ասում է նա, շրջվելով մեր տան կողմըՀ Բարձր ու խրոխտ՝ նա գալիս է թեթև քայլվածքով, գլխի գեղանի շարժումով երբեմնակի ետ նետելով անհնազանդ մազերըՀ

Մեր տնից ոչ հեռու, գյուղխորհրդի հին շենքի տանիքում, ուր վերջին տարիներին կոլտնտեսությունը ծխախոտի տերև է չորացնում, ծխախոտագործ կանայք, իրար գլխի հավաքված, խոսում են՝ ուշադիր նայելով ԱրգինայինՀ

– Անաստվածը մի տես ինչքան գեղեցիկ էՀ

– Աչքերը գեղեցիկ, քիթը գեղեցիկ, բերանը գեղեցիկ, կազմվածքը գեղեցիկ, աղջի, բա սրան տեսնողի քունը կտանի՞Հ

– Մի նայիր է, ասես բացված վարդ լինի, հազար երանի քեզ առնողինՀ

– Ոչ ուտես, ոչ խմես, կանգնես ու էդպես նայեսՀ

– Աղջի, բախտը լինի գեղեցիկ, բախտըՀ Մեր Ռազմելան պակա՞ս գեղեցկուհի էրՀ Որտե՞ղ է հիմի. Ղազանչիի ձորերումը՝ մի բոլուք երեխեք գլխին թափածՀ

– Էհ, գեղեցիկ աղջիկները հազվադեպ են բախտավոր լինումՀ

Տրամադրություն չունեմ նրանց լսելու: Արգինան մեր բակում է միայն նկատում ինձՀ

– Ինչո՞ւ ես այդքան ուշացել, Աբիկ, – հարցնում է նա իր առօրյա սիրալիրությամբՀ

– Մի թեթև գործ կար, – ասում եմ ես՝ փախցնելով

հայացքս£ Սակայն իմ դեմքը, ըստ երևույթին, շատ է այլայլված, որովհետև Արգինան դադարում է ժպտալ £ Մենք լուռ բարձրանում ենք տուն և այնտեղ, տանը, Արգինան ասում է.

– Ինչ-որ բա՞ն է պատահել£

– Ոչ, – ասում եմ ես£

– Գուցե կռվե՞լ ես որևէ մեկի հետ£

– Ոչ£

– Վա՞տ ես զգում քեզ£

– Ոչ£

Նա մոտենում, գրկում է իմ ուսերը£

– Թաքցնո՞ւմ ես ինձնից£

Աչքերս լցվում են արցունքով, և, ինձ համար ևս անսպասելի, ես թոցնում եմ բերանից.

– Մերուժանն ուզում է փախցնել քեզ£

– Ո՞վ, -հարցնում է Արգինան, և ես նրա դեմքից տեսնում եմ, որ նա մեծ դժվարությամբ է զսպում ծիծաղը£ Դա ինձ հանգստացնում է£

– Մերուժանը, – ասում եմ£– Կոշկակար Մերուժանը£– Եվ ես սկսում եմ նրան պատմել Մերուժանի, Մաքսիմի ու գյուղի մյուս տղաների մասին՝ միաժամանակ զգույշ հետևելով, թե իմ խոսքերն ինչպիսի ազդեցություն են ունենում նրա վրա£ Շականակագույն խոշոր աչքերում բազմախորհուրդ արտահայտություն՝ Արգինան ուշադիր ունկնդրում է ինձ՝ մեկ ձյունաթույր ատամներով կծելով շիկակարմիր շուրթերը, մեկ իբր, զարմանքից ապշահար՝

հմայուն բերանը կիսաբաց՝ նայում է ինձ, ու ես չեմ կարողանում հասկանալ՝ բարկանո՞ւմ, թե՞ ներքուստ բերկրում է նա իմ խոսքերի վրա£ Ի վերջո, իմ սպասածին հակառակ, Արգինան հանկարծ սկսում է բարձր ու ուրախ ծիծաղել£

– Դրա համա՞ր ես արտասվում, – հարցնում է նա ծիծաղելը վերջացնելուց հետո£

– Այո, – գլխով եմ անում ես£

– Մի վախեցիր, ինձ ոչ ոք չի փախցնի£

– Ուրեմն դու ոչ ոքի հետ ոչ մի տեղ չե՞ս գնա£

– Չէ իհարկե… Միայն քեզ հետ, Աբիկ£ Ամռանը, արձակուրդներին, ես քեզ կտանեմ քաղաք£

– Այնտեղ, ուր աշխարհի ամենամեծ լիճն է ու ամենափոքր ծո՞վը£

– Այո£ Եվ դու կտեսնես, որ այն Նեապոլի նման է ու Նեապոլից գեղեցիկ, – միայն աչքերով ժպտալով ասում է Արինան£– Ես քեզ ցույց կտամ մեր քաղաքի բոլոր տեսարժան վայրերը ու նաև այն բակը հայկական թաղամասում՝ Արմենիքենդում, ուր ծնվել եմ ես£ Մեր բոլոր հարևանները հայեր էին, թե չէ հայերեն չէի իմանա£ Իսկ հետո նոր բնակարան ստացանք միկրոշրջանում£ Կգաս, չէ՞, ինձ հետ£

– Իհարկե£ Իսկ ձեր քաղաքը գեղեցի՞կ է մեր գյուղից£

Արգինան մի թեթև միտք է անում, հետո ասում.

– Չգիտեմ, Աբիկ£ Երևի քաղաքն իր գեղեցկությունն ունի, գյուղն՝ իր£

Վերևում, բարձր, շատ բարձր, երկնքի հեռու խորքում դանդաղ լողում են աշնանային գորշ ամպերը£ Նրանց ստվերները սահում են դաշտերի, անտառների ու գյուղի վրայով£ Հետո ստվերները խտանում են, և երկինքը միանգամից սևակնում է£ Այգում ու ներքևում՝ ձորի շամբուտում, թռչուններն իսկույն ընդհատում են իրենց անուշալուր երգը£ Գնալով մռայլվում է ողջ աշխարհը, ձորերը ընկղմվում են մթան մեջ, հեռավոր սարերը կորչում են մշուշում£

– Հիմա ամպրոպ կլինի, – ասում եմ£

Արգինան կկոցված աչքերով նայում է երկնքին£ Եվ այդ պահին կապտավուն կայծակը զիգզագաձև կտրտում է երկնքի կեսը՝ մի կարճ ակնթարթ լուսավորելով շրջակա անտառապատ լեռներն ու այս ու այնտեղ, սարալանջերին փռված զառիթափ հանդերը, հետո, սկզբում հանգիստ, իսկ այնուհետև ավելի ու ավելի ահագնանալով, երկինքն այնպես է սկսում ցնցվել ու դղրդալ, որ թվում է միաժամանակ սկսեցին կրակել հազարավոր հրանոթներից £ Արգինան վախվորած հպվում է ինձ, և ես, նայելով նրան, ծիծաղում եմ£ Նա նույնպես ժպտում է, թեպետ պարզ տեսնում եմ, ժպտալու ամենևին սիրտ չունի. Երևի վախենում է շանթ ու որոտից£

– Մեզ մոտ, քաղաքում, համարյա որոտներ չեն լինում, – ասում է նա ասես արդարանալով£– Եվ եթե նույնիսկ լինում է, ապա հազվադեպ, և այն էլ ոչ այնքան ուժեղ£

– Մեր սարերում կաղնիներ շատ կան, այդ կաղնիներն

են ձգում կայծակներին, – ասում եմ ես£ Իսկականից ես չգիտեմ, թե ինչքանով է դա ճշմարիտ, որովհետև ինքս ոչ մի տեղ այդ մասին չեմ կարդացել, պարզապես մի անգամ սարերում ընկանք կարկուտի տակ, և իմ ընկերոջ՝ Հովիկի, հայրը՝ քեռի Երվանդն ասաց, որ չպատսպարվենք կաղնի ծառերի տակ, դրանք երբեմն ձգում են կայծակներինք Եվ, իրոք, երկու տարի առաջ Սեյրանենց տափում կայծակը տվեց, երկու մասի բաժանեց մի վիթխարի կաղնի, ամբողջ մի շաբաթ ծխում էր կաղնին և, չգիտես ինչու, ոչ ոք չէր համարձակվում մոտենալ այրվող ծառինք

Քամու հետ գետնին են զարնվում անձրևի առաջին, խոշոր կաթիլները£ Հետո միանգամից սկսում է հորդ անձրևը՝ ուժգին ծեծելով տանիքի թիթեղն ու բակում, հավերի համար դրված ջրամանները£ Հաճելի է այսպես կանգնել պատշգամբում ու նայել, թե ինչպես է ջուրը ջրհորդաններից քլթքլթում հողին, ունկնդրել անձրևից վարարած Բարակ ջուր գետի կատաղած հեծեծանքներին՝ տներից ներքև, մշուշով լցված ձորի մեջ, լսել մարդկանց տագնապոտ կանչերը՝ հեռու և մոտիկ թաղերից, դիտել անձրևից կուչ եկած մենավոր ծառերն ու թրջված դաշտերը, ուր ինչ-որ մեկի բխոված ձին լուռ կանգնած համբերատար սպասում է անձրևը կտրվելուն®

– Իմանայի, թե անձրև է գալու, Հովիկին կկանչեիք

– Որպեսզի շախմա՞տ խաղանք, – հարցնում է Արգինանք

– Այս եղանակին ուրիշ ի՞նչ կարելի է անել՝ շախմատ խաղալուց բացի£ Թե դու չե՞ս ուզում, որ ես կանչեմ նրանք

– Հիմարիկ£ Ախր, ես ինչպե՞ս կարող եմ չուզենալ, – զարմանում է նա£

Հովիկի մասին ես հարցրի հատուկ նպատակով, որովհետև մեր գյուղում բոլորն այն կարծիքին էին, որ նա անուղղելի տղա է, նույնիսկ մի անգամ ցանկացել էին նրան հեռացնել դպրոցից, սակայն ինչպես Արգինան, այնպես էլ ջոկատավարուհի Նվարդը, կտրականապես դեմ էին դուրս եկել£ Նրանք ելույթ էին ունեցել մանկխորհրդի նիստում՝ խստորեն քննադատության ենթարկելով բոլոր նրանց, ովքեր կողմնակից էին Հովիկի հեռացմանը£ Այդ օրը ես դասարանի հերթապահն էի, դասերից հետո միջանցքով անցնելիս, ուսուցչանոցից լսեցի Արգինայի ձայնը և ակամաբար կանգ առա£ «Ես կուզենայի մի անգամ ևս հիշեցնել բոլոր նրանց, ովքեր պահանջում են անպայման հեռացնել Հովիկ Զաքարյանին, հիշեցնել, որ կյանքի ամենադժվար, ամենաածանր պահին անգամ չպետք է կորցնել հավատը մարդու հանդեպ, առավել ևս Հովիկի տարիքում գտնվող մարդու հանդեպ, որովհետև անտարբեր լինել մարդու նկատմամբ, նշանակում է նրան մղել դեպի անխուսափելի կործանում£– Արգինայի ձայնը հնչում էր համոզչական ու հստակ£– Հեշտ է աշակերտին հեռացնել դպրոցից, բայց մի՞թե մենք՝ նրա ուսուցիչները, դրանից հետո իրավունք ունենք ուղիղ նայելու նրա ծնողների աչքերին, մարդկանց աչքերին և, առհասարակ, մի՞թե մենք իրավունք ունենք ապրելու և շնչելու, վայելելու կյանքի բարիքները, եթե մեզ այլևս չեն հուզում ոչ միայն բոլոր մարդկանց, այլև

նույնիսկ մեր դպրոցում սովորող աշակերտի վշտերն ու ուրախությունները»£

Ես իհարկե մեծ բավականությամբ կշարունակեի լսել Արգինային, բայց միջանցքի մյուս ծայրին, չգիտես որտեղից, անսպասելի տնկվեց հավաքարարուհի Վարսիկը և ձեռքով նշան արեց չքվել ուսուցչանոցի մոտից£ Իսկ երեկոյան, տանը, Արգինան մայրիկին ասաց, որ անուղղելի մարդիկ չկան կյանքում£

Ճիշտն ասած, այդ խոսքերն ինձ շատ դուր եկան, որովհետև Հովիկը, իր բոլոր թերություններով հանդերձ, վատ տղա չէ, մենք նրա հետ դեռևս առաջին դասարանից ենք ընկերություն անում£ Արգինան այդ ժամանակ ասաց նաև, որ ինքն ամեն ինչ կանի, որպեսզի Հովիկը դառնա դպրոցի ամենաօրինակելի աշակերտներից մեկը£ Դա նույնպես ինձ անչափ դուր եկավ£ Եվ հիմա, խոսք բացելով Հովիկի մասին, ես ուզում էի իմանալ՝ Արգինան չի՞ մոռացել դեռ իր խոստումը և չի՞ փոխել, արդյոք, վերաբերմունքը իմ ընկերոջ նկատմամբ£ Ոչ, չի փոխել, այլապես ինչո՞ւ պիտի ասեր.

– Հենց որ անձրևը դադարի, կանչիր Հովիկինձ£

Հովիկը երեկ չէ մյուս օրն էլ մեր տանն էր£ Արգինայի հետ նրանք որոշ ժամանակ զբաղված էին դպրոցական պատի թերթի ձևավորմամբ, իսկ հետո մի քանի պարտիա շախմատ խաղացին, և Արգինան բոլոր այդ պարտիաները տանուլ տվեց£ Դա շատ էր զարմանալի, որովհետև Արգինան շախմատ լավ է խաղում£ Բայց հետո Արգինան ասաց, որ դա այլ նպատակ ունի£ Ես չհասկացա, թե դիտավորյալ

տանուլ տալը ի՞նչ նպատակ պետք է ունենա և ոչինչ չասացի, իսկ Հովիկը՝ այդ դմբոն, հորթի պես ուրախացել, հրճվում էր£

Անձրևը հետզհետե դադարում է, և արեգակը՝ անձրևից թաց, գլուխը դուրս հանելով երկնքի մի ծայրից, ժպտում է£ Հեռվում, սարերի վրայով, օձի խորխի նմանվող գույնզգույն իր գոտին է նետել թափանցիկ ծիածանը, իսկ ավելի բարձր, սարերի կատարներին քսվելով, արդեն չվում են ծանր ամպերը£

Ես վազում եմ փողոց՝ Հովիկին կանչելու£

7

Իսկ հետո անսպասելի եկավ ձմեռը, ամբողջ չորս ամիս համարյա անընդհատ ձյուն տեղաց. ճամփաները փակվեցին, դարձան անանցանելի՝ լեռնային մեր փոքրիկ գյուղը կտրելով աշխարհից£

Մարտ ամսվա վերջին օրերին միայն արեգակը սկսեց տաքացնել հողը և սկզբում բլուրները, իսկ հետո հանդ ու այգի, գյուղ ու ճամփա սկսեցին դանդաղ ծխալ£ Ձյունն արագ հալչում էր և, ինչպես ամեն տարի գարնանը, հորդաց, փրփրեց մեր հնավանդ Բարակ ջուրը, արմատահան արված ծառեր ու վիթխարի քարեր էր բերում վերևից, լեռների կողմից, և գիշեր ու ցերեկ անձանձիր ոռնում, դղրդում էր մթին ձորերի մեջ£

Ապրիլի կեսերին արդեն ձյուն չկար, կար միայն առատ ձյան վերհուշը£ Եկավ գարունը® Հեռավոր վայրերից վերադարձան ծիծեռնակները, ուրախ պտտվեցին մեր տան գլխավերևում, այգու ծայրում ինչ-որ տեղ, թփերի մեջ, երգեց դեղձանիկը, և նրան ձորից արձագանքեց մայր կկուն£

Երեկ ամբողջ օրը, չգիտեմ ինչու, անտրամադիր էի, իսկ այսօր առավոտյան, չափելով ջերմությունս, մայրիկը ինչ-որ դեղահաբեր դրեց սեղանին՝ պատվիրելով տնից ոչ մի տեղ չգնալ, պառկել անկողնում, տաքացրած կաթ խմել և ընդունել այդ հաբերը£ Եվ հիմա պառկել եմ անկողնում, և ժամերն այնպես ծանր են անցնում£ Ես մեկ-մեկ հաշվում եմ

դպրոցական զանգի ձայները, սպասելով դասերի ավարտին £ Ուր որ է կգա Արգինան, և իմ սիրտը միանգամից կլցվի լույսով ու քնքշանքով£

Բակում, դարպասի երկաթե դռնակը աղմուկով ետ է գնում£ «Արգինան է», – մտովի ուրախ ասում եմ ես £ Ոտնաձայները բարձրանում են սանդուղքով, դանդաղ բացվում է պատշգամբի դուռը, և դռների մեջ երևում է Արմենը՝ ձեռքին եղրևանու մի մեծ փունջ£ Ներս մտնելով, նա նկատելի շփոթվում է, ինչպես երևում է, չէր սպասում այդ ժամին տեսնել ինձ տանը£

– Այդ ի՞նչ է, դպրոց չե՞ս գնացել, Աբիկ£

– Ոչ, – ասում եմ ես, նստելով մահճակալի ծայրին£– Նշագեղձերի բորբոքում ունեմ£

– Մրսել ես երևի, – ասում է Արմենը՝ անվստահ նայելով շուրջը£

– Երևի, – ասում եմ£ -Մայրիկը տանը չէ, – ավելացնում եմ ես, նայելով ծաղկեփնջին£

– Հա՞, – ասում է Արմենը շփոթված£– Իսկ ես կարծում էի, թե տանն է£

Ծիծաղելի է, երբ մեծահասակ տղաները շփոթվում են£ Ես, օրինակ, երբեք չեմ շփոթվի՝ որտեղ էլ որ լինեմ£

– Ոչ, տանը չէ, – կրկնում եմ ես£– Այսօր նա առաջին հերթի է աշխատում£

– Հետաքրքիր է, – արտասանում է Արմենը, աշխատելով չնայել իմ կողմը, – ով էր՝ ասաց, թե տեսել է տուն գալիս, ուրեմն սխալ եմ հասկացել…

Ես մտածում եմ, որ երևի նրա հարազատներից որևէ մեկը բուժվել է մայրիկի մոտ, և նա եկել է շնորհակալություն հայտնելու, բայց ինչո՞ւ ոչ հիվանդանոց, այլ տուն է եկել£

– Այս ծաղիկները, ուրեմն, մայրիկի համա՞ր ես բերել, – ասում եմ, բայց իմ ձայնը, ըստ երևույթին, հնչում է ոչ առանց չարախնդության, որովհետև Արմենը մի տեսակ տարօրինակ ձևով է նայում ինձ: Նա եղրևանու ճյուղը զգույշ դնում է սեղանին£

– Աբիկ ջան, սա հարկավոր է դնել ջրի մեջ, – ասում է նա, – թե չէ իսկույն կթառամի£ – Որոշ լռությունից հետո, նայելով դեպի կից սենյակները, Արմենը ոչ բարձր հարցնում է.– Արգինան որտե՞ղ է£

– Դեռ չի եկել դպրոցից£

– Իսկ ե՞րբ է գալու, չգիտե՞ս£

– Արգինա՞ն® Նա արդեն պիտի եկած լիներ, չգիտեմ ինչու, ուշանում է£ Երևի հիմա կգա£ Ուզո՞ւմ ես, սպասիր£

– Չէ, չէ, – ձեռքերը շարժելով ասում է Արմենը£– Մի ուրիշ անգամ, հիմա վոազ շրջկենտրոն եմ գնում£ Եթե քեզ համար դժվար չէ, Աբիկ ջան, այս ծաղիկները տուր Արգինային՝ հենց որ եկավ£ Լա՞վ£

Փոքր երեխայի տեղ է դրել ինձ: Չի անցնի:

– Կաց, բա մայրիկի համա՞ր չէիր բերել, – ասում եմ ես, իսկ ինքս քիչ է մնում զսպված ծիծաղից պայթեմ£

– Ոչինչ, Աբիկ ջան, Արգինան ինքը կտա մայրիկին£

– Լավ, – ասում եմ ես անթարթափ նայելով նրան£– Հենց որ եկավ, կտամ իրենք£

Արմենը գնում է դեպի պատշգամբի դուռը£

– Ե՞րբ ենք նորից գնում Թարքառի ձորը, – դռների մոտ շրջվելով հարցնում է Արմենը£

– Երբ ասես, -ժպտում եմ ես£

Նրա գնալուց հետո ես ծաղիկները դնում եմ ջրով լի սկահակի մեջ£ Իրոք որ, գեղեցիկ ծաղկեփունջ է, երևում է Արմենը վատ ճաշակ չունի£ Այս գարնան առաջին ծաղիկներն են սրանք£ Երևի Թարքառի ձորից է բերել Արմենը, որովհետև մեզ մոտ եղրևանիները չեն ծաղկել դեռ£

Մեր գյուղի բոլոր տղաների մեջ, չգիտեմ ինչու, ամենից շատ ինձ Արմենն է դուր գալիս£ Գուցե նրա համար, որ նա անչափ քաղաքավարի ու հավասարակշռված տղա է, գյուղում բոլորի հետ էլ՝ մեծ թե փոքր, սիրալիր է վերաբերվում£ Չգիտեմ£ Բարձրահասակ է նա ու լայնալանջ, սև աչք-ունքով, խոսելիս թեթև ժպտում է և ժպտալիս նրա աջ այտին հազիվ նկատելի փոսիկ է գոյանում£ Բանակից վերադառնալուց հետո կոլտնտեսությունում վարորդ էր, իսկ անցյալ տարի, երբ Թարքառի վրա սկսվեց արհեստական ջրամբարի կառուցումը, գնաց այնտեղ£ Ինքնաթափ բեռնատարի վրա էր աշխատում, իսկ վերջին ժամանակներս շինարարության պետի մեքենան է վարում£ Այդ մեքենայով հաճախակի գյուղ է գալիս£ Արմենը հայրիկին նունպես դուր է գալիս £ «Արմենը ոսկի տղա է, – մի անգամ Արգինայի ներկայությամբ ասաց հայրիկը£– Ոսկու նման՝ ուր էլ որ դնես, կփայլի£ Հերն էլ լավ մարդ էր, կռվից եկավ՝ մի քանի

տեղից վիրավոր, երկու տարի տանջվեց էդպես ու մեռավ£ Հիմա, ապրի արևը, հոր տեղը բռնել է, զուր չեն ասել, որ մանուշակի արմատից մանուշակ կբսնի»£

Արգինան ուշադիր լսում է հայրիկին՝ առանց մի խոսք անգամ ասելու£

– Ճի՞շտ չեմ ասում, Արուս, – դառնալով մայրիկի կողմը, անսպասելի հարցնում է հայրիկը£

– Ճիշտ ես ասում, – մայրիկը գաղտնաբար նայում է Արգինային£– Արմենը լավ տղա է£

– Ես ծեր մարդ եմ, իսկ ծերունի մարդիկ իրավունք ունեն խրատել, խորհուրդներ տալ£

Ասում եմ, չէ՞, հայրիկս առանց հանելուկների ապրել չի կարող: Մի հարցնող լինի՝ ո՞ր օրվա ծերունին ես դու:

– Դու՞ք եք ծերունի, – աչքերում անսքող ծիծաղ, ասում է Արգինան՝ կողքանց նայելով հայրիկին£– Ջուր տեղը ինքներդ ձեզ մի չարախոսեք£

– Արգինա ջան, ջահել ժամանակ չես տեսել ինձ, – Արգինայի խոսքերից շոյված, ժպտում է հայրիկը£– Չէ, հիմա ծեր եմ, սիրտ մի տուր ինձ, չես խաբի, մարդու հիսուն տարին որ մոտեցավ, ուրեմն ծեր է® Բայց դե, էդ ախմախ ջահելությունն էլ էնպես արագ է անցնում® Քեզ մի բան ասեմ, աղջիկս, էն տարածությունը, որ բաժանում է ծերությունը ջահել օրերից, շատ կարճ է, ծերությունը գալիս է հանկարծակի, ոնց որ ձյուն£ Առավոտ վեր ես կենում ու տեսնում, որ ամեն ինչ սպիտակ է£

Այս խոսակցությունը տեղի էր ունենում աշնանային

ուշ երեկոյան, մեր բակում, թթենու տակ գցված ընթրիքի սեղանի շուրջը£ Աստղազարդ պարզկա երեկո էր, երկինքը՝ կապտաժեռ, վերևից գյուղին նայելիս՝ թվում էր երկնքից մի բեկոր՝ աստղերի հետ պոկվել, ընկել է այս սար ու ձորերի մեջ, ու հիմա պարզ երևում էր այդ բեկորը՝ առկայծող լույսերով£

– Այո, կարճատև է կյանքը, բայց մարդու գործը երկար է ապրում, ուրեմն երկար է ապրում նաև նրա անունը, – շարունակեց հայրիկը՝ մի ումպով պարպելով թթօղու բաժակը£– Ես ձեզ մի բան ասեմ. մարդս, առհասարակ, մահկանացու է, դա բոլորը գիտեն, բայց ժողովրդի սրտում երկար ապրելու միակ հնարավորությունը իրենից հետո որևէ լավ գործ թողնելու մեջ է£ Արմենի հերը մեռավ, ճիշտ է, բայց ինքը տիրություն արեց ընտանիքին, քույրերին, ուրիշների նման չփախավ քաղաք՝ հեշտ ու թեթև աշխատանքի, մնաց գյուղում, մոր աչքի առաջ, հիմա էլ, հրեն, շինանյութ է բերել, ուզում է երկու հարկանի տուն կառուցել£

– Եվ միաժամանակ հեռակա կարգով սովորում է ավտոմոբիլային տրանսպորտի ինստիտուտում, – լրացնում է մայրիկը£

– Ապրի արևը£ Արժանավոր զավակը էդպիսին կլինի £ Մարդ իր արած գործերով արձան է կառուցում իր համար, որը կանգնած կմնա այնքան ժամանակ, քանի դեռ արևը չի սառել, – հայրիկն իր ասածից գոհ հաղթական նայում է բոլորիս և շարունակում.– Հրեն, տեսնո՞ւմ եք

էն աստղերը, կան աստղեր, որ վաղուց հանգած են արդեն, բայց նրանց լույսը շարունաում է հասնել մեզ, լուսավորել մեր ճանապարհը£ Իսկական մարդը նման է էդ աստղին, ինքը, ափսոս, չկա, բայց թողած լավ գործն ապրում, լույս է տալիս ուրիշների ճանապարհին£ Մինչև ինձ, – շարունակում է հայրիկը, – գյուղի անասնաբույժը Վաչագանն էր, Քոլատակ գյուղից£ Խաչենագետի հենց կողքին է էդ գյուղը, բայց ինքը վաղուց էստեղ էր ապրում£ Հազար օղորմի նրան, ի՞նչ մաքուր մարդ էր, ի՞նչ ազնիվ հոգի. մեր էս գյուղարանքում մեկին չես գտնի, որին լավություն արած չլինի£ Աշխարհը, այ, էդ տեսակ մարդկանցով է կանգուն® Մի ուրիշ Վաչագան էլ կար մեր գյուղում® Չէ, Վաչագան չէր՝ Վաղարշակ, – ծիծաղեց հայրիկը£– Սուս ու փուս մարդ էր, գլուխը կախ, չխոսեցնեիր՝ օրերով խոսք չէր խոսի£ Կռվի ժամանակ գերի էր ընկել, երեք տարի գերմանական համակենտրոնացման ճամբարներում էր եղել, մի տասը տարի էլ էստեղ՝ մեր լագերներում էր տանջվել£ Շրջանից մարդ էր եկել, շրջկոմի հրահանգիչ էր, Վաղարշակին հարցնում է՝ «Կյանքդ ո՞նց ես ապրել, հայրիկ»£ «Գերմանական լագերները չհաշված՝ համարյա մի օր չեմ տեսել», – ասում է Վաղարշակը£ Մաքուր ծիծաղ® Էս Վաղարշակը մի աղջիկ ուներ, անունը Ռազմելա, էնքա՜ն սիրուն, էնքա՜ն սիրուն, որ նայելիս մարդու շունչը կանգ էր առնում՝ մազերն էլ ոսկեգանգուր, բա ա՜չքերը, աչքերը®, – հայրիկը շփոթված շուրջը նայեց, ասաց.– Ղազանչի գյուղ մարդու գնաց, մարդու անունն էլ

Մանթաշ® Հա, ինչի՞ մասին էինք խոսում£

– Ռազմելայի մասին, – ասաց մայրիկը£ Բայց ինձ թվաց, թե մի ուրիշ ձևով նա ասաց այդ խոսքը, որովհետև հայրիկն ավելի շփոթվեց, ասաց.– չէ, Ռազմելայի մասին չէր® Հա, հիշեցի, Արմենի հոր մասին էր, լավ մարդ էր, շատ լավ մարդ էր, Արմենը լրիվ նրան է քաշել£

Արգինան նույնպես անտարբեր չէ Արմենի նկատմամբ £ Ես դա վաղուց եմ նկատել£ Նույնիսկ ավելի շուտ, քան միասին գնացել էինք Թարթառի ձորը՝ ջրամբարի կառուցումը դիտելու£ Մենք Թարթառի ձոր գնացինք Արմենի վիլիսով£ Ձորում, գետի հոսանքն ի վեր, ինչպես գետից ելնող գոլորշի՝ նոսր մշուշ էր հոսում, և այդ մշուշի միջով արևի շողերը թափանցում էին գետի մեջ, և ջրերը շողում, շողշողում էին աշնան արևի տակ£

Այստեղ-այնտեղ ճանապարհի աջ ու ձախ կողմերին ինչ-որ տղաներ դույլերի մեջ հոն ու ընկույզ էին վաճառում՝ մեքենա տեսնելիս դույլերը բարձրացնելով վեր£

Արգինան նստել է առջևի նստատեղին, Արմենի մոտ, իսկ ես, մենակ մնալով մեքենայի ետնամասում՝ մեկ այս լուսամուտին էի կպչում, մեկ՝ այն£ Դա անմոռանալի ճանապարհորդություն էր՝ մագնիտոֆոնի ախորժալի երաժշտության ուղեկցությամբ£ Գլուխս հանելով մեքենայից, ես հետաքրքրությամբ նայում էի արևազօծ սարալանջերին, կուսական անտառներին ու պարզկա Թարթառին՝ ներկված լեռների խայտաբղետ գույներով£

Արմենն ու Արգինան՝ զրույցով տարված, համարյա մոռացել էին իմ մասինէ Նրանք անընդհատ խոսում էի ինչ-որ բաների մասին, ծիծաղում, և, չնայած հանդիպական ուժեղ քամուն, ես լսում էի պատառիկներ նրանց զվարթ խոսակցությունից£

Արմենը մեքենան քշում էր մեծ արագությամբ, ինձ անչափ դուր էր գալիս, որ ճանապարհը սրընթաց ետ էր թռչում անիվների տակ, ու քամին անդադար սուլում էր՝ ֆուշ-շ-շ®

– Կամաց քշիր, Արմեն, – խնդրում էր Արգինան՝ ձեռքը թեթև հպելով Արմենի ուսինէ– Չես տեսնում՝ շարունակ ոլորաններ են£

– Վախենո՞ւմ ես, – ժպտում էր Արմենը՝ մի պահ նայելով Արգինայինէ Նրա ձեռքն իջնում էր Արգինայի ձեռքին, և նրա մատները քնքշորեն գրկում էին Արգինայի մատներըէ Նա հիմա միայն ձախ ձեռքով էր վարում մեքենանէ

– Ճանապարհին նայիր՝ մեկ էլ տեսար մեզ գլորեցիր ձորը, – կրկին խնդրում է Արգինանէ

– Իմ մեքենան գիտի, թե ով է այստեղ նստած, նա այդպիսի բան չի անիէ

– Միևնույն է, ճանապարհին նայիրէ Դու, ինչ է, առաջին անգա՞մն ես տեսնում ինձէ

– Ոչ, իհարկե, բայց ամեն անգամ քեզ տեսնելիս, թվում է, թե առաջին անգամ եմ տեսնում և ամեն անգամ սիրահարվում եմ առաջին հայացքիցէ Գիտե՞ս, ինձ մի ակնթարթ էր պետք քեզ տեսնելու համար և ամբողջ մի

կյանք՝ այլևս չմոռանալու համար:

– Եվ դրա համար էլ քիչ է մնում փախցնես, տանես ինչ-որ հեռու-հեռավոր մոլորակ, – ծիծաղում է Արգինան£

– Այո, ճիշտ կռահեցիր£ Որոշել եմ փախցնել£ Պետս բարի ծերուկ է, նա անպայման կտա մեքենան£

– Իսկ ինչո՞ւ փախցնել® երբ ես համաձայն եմ®– Արգինայի աչքերը շողարձակում են խորհրդավոր փայլով, և ժպիտը ծաղկում է նրա ուռուցիկ շուրթերին՝ հետզհետե ծավալվելով ամբողջ դեմքին£

– Ես համաձայն եմ, – կիսաշրջվելով Արմենի կողմը, կրկին ասում է Արգինան£– Փախցրու, բայց ոչ այս մեքենայով£ Քո հին բեռնատարով£ Տար ինձ հեռու-հեռավոր մի մոլորակ£

Արմենը մտացրիվ նայում է Արգինային, ժպտում£

– Դու գիտե՞ս, վերջին ժամանակներս®միայն թե չծիծաղես իմ խոսքերի վրա, լա՞վ£

– Ասա, չեմ ծիծաղի, – պատասխանում է Արգինան£– Միթե՞ ես երբևէ ծիծաղել եմ քո խոսքերի վրա£

– Այն, ինչ ես զգում եմ վերջին ժամանակներս, շատ նման է այն բանին, ինչ կրոնական էքստազի մեջ զգում են հավատացյալները£ Ծիծաղելի է, երևի, բայց ես իմ հին բեռնատարը, որն այժմ դուրս է գրված, ընկած է գարաժի մի անկյունում, մոռանալ չեմ կարողանում£ Եվ մոռանալ չեմ կարողանում այն պատճառով, որ նրանով առաջին անգամ քեզ տարա մինչև գյուղ, և երբեմն ինձ բռնում եմ այն մտքի վրա, որ ուզում եմ մտնել գարաժ և, բոլորից թաքուն, ծնկի

գալ նրա առջև ու երկրպագել ինչպես կուռքի£

Ես Արմենին պատկերացնում եմ հին բեռնատարի առաջ չոքած աղոթելիս և, ազնիվ խոսք, քիչ է մնում բարձր ծիծաղեմ£ Եվ այն էլ ով է ասողը՝ Արմենը® Չէ, ես իմ կարծիքը փոխեցի նրա մասին£ Արգինայի փոխարեն ես լինեի, չէի դիմանա, ուղղակի ուշքս կգնար ծիծաղից £ Իսկ նա® Իսկ նա չի էլ մտածում ծիծաղել, մի տեսակ հետաքրքրասիրությամբ ուշադիր նայում է Արմենին, ասես սպասելով, որ նա էլի խոսի£ Մի՞թե նրան իսկապես, դուր է գալիս լսել այդ ցնդաբանությունը£ Խելքս բան չի կտրում£ Իսկ Արմենն իրենն է շարունակում£

– Ծիծաղելի է երևի®

– Ամենևին£

– Ամեն անգամ, անցնելով գյուղ մտնող մեծ ճանապարհի վրա խոնարհված դեղձենու մոտով, որտեղ բեռնատարից իջար առաջին անգամ, մի քիչ արգելակելով մեքենան, ես ասում եմ. «Ողջույն, ծերուկ, դու նույնիսկ պատկերացնել չես կարող, թե ինչքան ուրախ եմ՝ ամեն անգամ տեսնելով քեզ իմ ճանապարհին»£ Եվ դա ես ասում եմ շատ լրջորեն£ Դու չե՞ս հավատում ինձ£ Ծիծաղիր ինձ վրա, բայց հավատա£

– Հավատում եմ®

Աստված իմ, մի՞թե հնարավոր է հավատալ այդպիսի զառանցանքի£ Եթե ինձ կախ էլ տան, միևնույնն է, չեմ հավատա£ Իսկ Արգինան հավատում է£ Զարմանալի է£ Շատ է զարմանալի® Սպասիր, ի՞նչ դեղձենու մասին է խոսքը£ Գյուղ մտնող մեծ ճանապարհի վրա խոնարհված

դեղձենու® Ուրեմն Արգինան նրա բեռնատարով էր գյուղ եկել այն ժամանակ£ Ահա թե ինչու Արմենն այնպես շուտ մեկնեց® Եվ ոնց էլ ձայնից չէի ճանաչել£ Այն ժամանակ էլ, հիշում եմ, բեռնատարը ծանոթ թվաց, բայց հեռվից հաստատ չկարողացա իմանալ՝ Արմենի՞ մեքենան էր, թե՞ ուրիշի£

Այո, ես շատ բան հասկացա այն ժամանակ Թարթառի ձորում՝ և ամբարտակի վրայից կառույցը դիտելիս, և ճանապարհին, ավելի ճիշտ՝ հաստատվեցին իմ բոլոր կասկածանքները, որ ունեի մինչ այդ£

®Եղրևանու ծաղկեփունջը դրել եմ լուսամուտագոգին, սկահակի մեջ, և անհամբերությամբ սպասում եմ Արգինային£ Աստիճանների վրա ես լսում եմ նրա թեթև ոտնաձայները£ Չգիտեմ ինչու, սիրտս միանգամից սկսում է արագ բաբախել£ Հուզվում եմ երևի£ Արգինան ներս է մտնում լուսափայլ ժպիտը դեմքին՝ իր բարձր տրամադրությամբ համակելով նաև ինձ£

– Հը, ինչպե՞ս ես զգում քեզ, Աբիկ£

– Ոչինչ, վատ չեմ, – ասում եմ ես ժպտալով ու հայացքով ցույց եմ տալիս լուսամուտագոգը£

Արգինան նույնպես նայում է այդ ուղղությամբ£

– Այս ի՞նչ հրաշալի ծաղիկներ են, ո՞վ է բերել£– Վերջին բառերը նա արտաբերում է համարյա շշուկով£ Ես ձևացնում եմ, իբր, ոչինչ չեմ նկատում, և ասում եմ անմեղսապարտ տեսքով£

– Մերուժանը£

– Ո՞վ, – Արգինայի աչքերը նույնիսկ կլորանում են£

– Մերուժանը, – ծիծաղում եմ ես£– Կոշկակար Մերուժանը£

Արգինան մոտենում, վերցնում է ծաղկեփունջը՝ այնտեղից հանելով խողովակաձև փաթաթված մի թուղթ՝ Արմենի երկտողը£ Ես հենց սկզբում էի նկատել այդ թուղթը, երբ դեռ ծաղկեփունջը դրված էր սեղանին£ Մոտավորապես ենթադրում եմ նույնիսկ, թե ինչ է գրված այնտեղ£ Նամակ գրելու փոխարեն, գնար դպրոց, դուրս կանչեր Արգինային և ինչ որ պետք է՝ ասեր նրան£ Դմբռ£ Չէ, երևի չի ուզեցել դպրոց գնալ£ Ես ձևացնում եմ, թե գաղափար անգամ չունեմ երկտողի մասին£ Արգինան բացում է թուղթը և, թեթևակի շիկնելով, հարցնում է.

– Այսպես, ուրեմն, ասում ես, ո՞վ է բերել£

Երկուսով սրտանց ու համերաշխ ծիծաղում ենք, և ես Արգինայի համար աննկատ, աչքի տակով արագ կարդում եմ Արմենի երկտողը. «Ներիր, շտապ գնացի Մարտակերտ: Երեկոյան սպասիր: Քո Արմեն»: Այնուհետև Արգինան ասում է մարող շշուկով.

– Աբիկ, դու ոչ ոքի չես ասի, չէ՞, այս մասին£

– Մի վախենա, չեմ ասի£ Նույնիսկ մայրիկին չեմ ասի, – խոստանում եմ ես£ Իսկ հետո, այնուամենայնիվ, չեմ համբերում և հարցնում եմ.– Իսկ ինչ է, Արմենն իսկապե՞ս քոնն է£

– Ի-ի՞նչ®

– Նա այնտեղ գրում է՝ «Քո Արմեն»£

– Վերջ տուր, Աբիկ£ Ամոթ քեզ, ուրիշի գրածն ինչո՞ւ ես

կարդում£– Եվ, աստված իմ, ինչպես է նրա դեմքը պատում վարդ-շիկնանքով£ Ուղղակի ոնց որ փոքրիկ աղջնակ£

– Իսկ մի՞թե նա ուրիշ է, – այս անգամ խորհրդավոր ժպտում եմ ես£

Արգինան հանդիմանանքով նայում է ինձ, բայց ես պարզ տեսնում եմ. նա բոլորովին չի բարկանում ինձ վրա, նրա շուրթերը բացվում են՝ ինչպես կարմիր վարդն է բացվում ցողաթաց արևի ջերմ հպումից, և ժպիտը տարածվում է գեղասքանչ դեմքին£

8

Իսկ հետո երկինքը միանգամից գունատվեց և կամաց-կամաց սկսեց իջնել գյուղական երեկոն£

Դա օրվա այն ժամն է, երբ կոլտնտեսականները վերադառնում են աշխատանքից, գյուղը լցվում է աշխույժ կանչերով, մեկ-մեկ ու խումբ-խումբ մարդիկ սկսում են հավաքվել գյուղամեջ՝ ցուցադրելու իրենց սրամտությունը, իսկ կոլտնտեսության նախագահ Գաբրիելը, ի տես բոլորի՝ սիգարեթը բերանին կանգնում է գրասենյակի բաց պատշգամբում, և վերևից կարգադրություններ է անում այս ու այն կողմ՝ մեկ իբր բարկանալով, մեկ հանկարծակի քահ-քահ ծիծաղելով խփում իր մոտ կանգնածներից որևէ մեկի մեջքին£

Դա օրվա այն ժամն է նաև, երբ հանդից օրոր-շորոր վերադառնում է նախիրը, ոչ այն է կարոտից, ոչ այն է քաղցից՝ բակերից նվաղուն բառաչում են հորթերը, թաղից-թաղ արձագանքելով իրար՝ բեկբեկուն հաչում են շները, մթնող անտառներից սկսում է կանչել գիշերահավը£

Մայրիկը կթեց կովը, և ես, ամեն օրվա պես, թողեցի, որպեսզի մեր խելառիկ հորթուկը մի կուշտ ծծի մոր ծաղկաբույր կաթը, հետո հորթուկը գցեցի գոմը՝ ոչխարների մոտ, իսկ կովը կապեցի բակում, հողի մեջ խրված երկաթե ցցից, հավերը թոցրի թառ, եփած կարտոֆիլի ու գարու ալյուրի խառնուրդից մի դույլ լակ սարքեցի և, լցնելով

տաշտակի մեջ, տվեցի խոզերին, որ արդեն երկու ամիս է, ինչ գիրացնում ենք, և նոր միայն վազեցի տուն՝ դասերս պատրաստելու£

Գնալով թանձրացավ մութը, այն ձորերից դանդաղորեն ելավ, մտավ գյուղ, և շուտով փողոցներն ու տները ընկղմվեցին մթության մեջ£ Արգինան հագավ իր երկնակապույտ նոր զգեստը, որն այնպես սազում է իրեն, և դուրս եկավ տնից®

Եվ հիմա լուսամուտի առջև նստած, ես սպասում եմ Արգինային£ Լուսինը, նման սեխի շղարթի, անշարժ կախվել է Սառնատուն լեռան վրա£ Իսկ Արգինան չկա ու չկա £ Շուտով լուսինը նույնպես, երևի, հոգնելով լեռների վրա այնպես երկար մնալուց, գնում, անհետանում է սարերի ետևում և, կարծես դրան էր սպասում, մոտիկ անտառից աղիողորմ կանչում է բուն£ Ասես հրամանով՝ ծղրիդները անսպասելի ընդհատում են իրենց ճռճռոցը, պարզորոշ լսվում է Բարակ ջրի միահունչ վշշոցը՝ վը2-2-2, վը2-2-2®

– Մամ, ե՞րբ կգա Արգինան, -հարցնում եմ ես£

– Երբ կգա՝ կգա, ինչո՞ւ ես անհանգստանում, – զարմացած նայում է մայրիկը£

– Ինչպե՞ս թե՝ ինչու ես անհանգստանում, – հուզված ասում եմ ես£– Վաղուց է, չէ՞, գնացել£

– Զբոսնում է երևի£

– Այսքան ո՞ւշ£

Ինձ հանկարծ պատկերանում է, թե ինչպես գիշերային ականակուր խավարի մեջ, անաղմուկ, գաղտագողի

Արգինային է մոտենում կոշկակար Մերուժանը և, նրա բերանը ծածկելով կաշվահոտ իր ափով, փախցնում է սարերը£

– Լսիր, Աբիկ, -ասում է մայրիկը, – դա վերաբերո՞ւմ է քեզ £ Դու քո դասերով զբաղվիր£

Ես ոչինչ չեմ պատասխանում, իսկ մայրիկը շարունակում է.

– Արգինան փոքր երեխա չէ, որպեսզի իրավունք չունենա որևէ ինքնուրույնության£ Իսկ դու ոնց որ բանտի վերակացու, չես թողնում, թե շունչ քաշի խեղճ աղջիկը£

– Ի՞նչ եմ անում, – վիրավորված հարցնում եմ ես£

– Ինչ եմ անում, ինչ եմ անում, – տնազում է մայրիկը, – ի՞նչ պիտի անես, հիմար հարցեր ես տալիս£ Շուտ գնա քնելու, Արգինան քեզնից լավ գիտի տան ճանապարհը£

Ես գլխիկոր քայլում եմ դեպի իմ մահճակալը՝ մտքում հաստատ որոշելով սպասել մինչև Արգինայի գալը£

Սակայն չգիտեմ ինչպես էր ստացվել, ես, այնուամենայնիվ, քնով էի անցել£ Արքնացա գիշերվա կեսին՝ բվի կոնչոցից£ Հիշում եմ, տատս, երբ ողջ էր, ասում էր, որ բվի կոինչը՝ տան բակում, վատ նշան է£ Ականջ եմ դնում£ Բվի կոինչը մեր այգուց է գալիս£ Իսկ տանը լռություն է£ Անձայն ելնում եմ անկողնուց, բացում Արգինայի սենյակի դուռը£ Նա խոր քնած է, փոքր երեխայի պես ձեռափը այտի տակ: Ես որոշ ժամանակ այդպես լուռ կանգնած նայում եմ նրան, հետո նորից զգուշորեն ծածկում եմ դուռը և անշշուկ, ոտքերիս ծայրերի վրա գնում դեպի իմ մահճակալը՝ քնելու£

Դրսում, մթան մեջ, կրկին չարագուշակ կանչում է անիծյալ բունէ

9

– Մինչև արձակուրդները հաշված օրեր են մնացել, – ասում է Արգինան£– Շուտով քեզ հետ կգնանք քաղաք£

– Արմե՞նն էլ է գալու մեզ հետ, -հարցնում եմ ես£

– Այո® Այսինքն՝ նա առանց այն էլ սեսիոն քննությունների է գնում£

– Նա Բաքվո՞ւմ է սովորում£

– Իհարկե£ Դու ինչ է, չգիտեի՞ր այդ մասին£

– Ոչ:– Ես գլուխս տարուբերում եմ բացասաբար£

– Մենք այնտեղ երեքով կշրջենք ծովափին, նավով կգբոսնենք ծովում, կինո կգնանք£ Եթե, իհարկե, դու դեմ չես, – ասում է նա ժպտալով£ Ձեռ է առնում: Իհարկե դեմ չեմ:

Երեկոյան, երբ Արգինան հագնում է իր երկնակապույտ զգեստը, ինձ իսկույն պարուրում է թախծոտությունը, և ես, ինքս էլ չգիտեմ ինչու, հիմարաբար ու անվստահ հարցնում եմ.

– Ե՞ս էլ եմ գալիս հետդ£

Արգինան անսքող աղերսանքով նայում է ինձ£ Ես, իհարկե, հասկանում եմ, այնքան էլ նրա սրտովը չէ, որ ես քարշ եմ գալիս իր ետևից, բայց և չի ուզում վիրավորել£ Ես դա ուշացումով, բայց, այնուամենայնիվ, հասկանում եմ:

– Լավ, չեմ գալիս, – արագ ասում եմ ես£

– Ինչո՞ւ, – հենց այնպես հարցնում է նա:

– Մտադրությունս փոխեցի, – թոթովում եմ ես:– Ավելի լավ է Հովիկին կանչեմ ու միասին շախմատ խաղանք£

Արգինան երախտագիտությամբ համբուրում է այտս և արագ դուրս է գալիս տնից£

Իհարկե, Հովիկի մասին ես ստեցի, այսօր տրամադրություն չունեմ շախմատ խաղալու£ Հայրիկը նույնպես տանը չէ, կանչել են Ստեփանակերտ՝ անասնապահների մարզային հավաքի, իսկ մայրիկն այսօր ամբողջ օրը հիվանդանոցից տուն չի եկել, որովհետև հարևան գյուղից մի մարդու արջը անտառում գզգզել է, և նրան համարյա անհուսալի վիճակում առավոտյան բերել են հիվանդանոց£ Մայրիկը, հավանաբար, գիշերը հերթապահի այնտեղ£

Ես մենակ եմ մնացել տանը, և կյանքում առաջին անգամ զգում եմ, թե ինչքան անտանելի բան է մենակությունը £ Իմ հոգում այնպիսի տրտմություն է, որ քիչ է մնում պայթի սիրտս£ Չգիտեմ, թե ինչ անեմ£ Դուրս եմ գալիս բակ£ Այստեղ նույնպես հետաքրքիր ոչինչ չկա, նույն դատարկությունն է£ Իմ քայլերն ակամաբար ինձ հանում են փողոց, տնամերձ այգիների արանքով ընկած նեղլիկ ճանապարհով, որտեղով անձրևների ժամանակ վազում են գյուղամիջից իջնող պղտոր ջրերը, գնում եմ ձորի կողմը £ Գիտեմ, որ լավ բան չէ արածս, բայց ետ կանգնել իմ մտքից՝ ես անկարող եմ, անհասկանալի ինչ-որ ուժ ասես առաջ է մղում ինձ£ Ես շարունակում եմ քայլել՝ երբեմն թաքնվելով հաստաբուն ծառերի հետևում, երբեմն կռացած,

և սարսափելով բռնում եմ ինձ այն մտքի վրա, որ շատ եմ ուզում լսել, թե Արմենն ու Արգինան ինչի մասին են խոսում հիմա այնտեղ, ձորամերձ այգում, թեպետ դարձյալ զգում եմ, որ դա աններելի քայլ է իմ կողմից, անազնվություն՝ թաքուն ականջ դնել ուրիշի խոսակցությանը£

Լուսնյակը միանգամից դուրս սահեց Թղկոտասարի ետևից՝ իր արծաթ շողերով ներկելով արար աշխարհ£ Քիչ հեռվում, ծառերի տակ կանգնած, երևում են Արմենն ու Արգինան£ Ես պարզ տեսնում եմ՝ Արմենը ինչ-որ բան է պատմում Արգինային, իսկ Արգինան, մեշքով հենված այգու ինչ-որ ծառի, լուռ լսում է նրան, և մերթ ընդ մերթ նրա վարակիչ ծիծաղը, ինչպես ժայռի կրծքից ծնված աղբյուրի կարկաչ, տարածվում է լուսնալույսով ողողված այգու վրա£ Ձգտելով ոչ մի ձայն չհանել, ես սողեսող, աննկատելիորեն մոտենում եմ նրանց և պառկելով հաստաբուն ընկուզենու տակ, մի փոսորակ տեղ, նայում եմ նրանց£ Արգինան դարձյալ կանգնած է՝ մեշքով հենված ծառաբնին, դա պարզ երևում է լուսնալույսի տակ, իսկ Արմենը քնքշանքով շոյում է նրա ձեռքը՝ արմունկից քիչ բարձր, և խոսում է կամացուկ, ինձ համար անլսելի£

Գարնանային մարմանդ հովը թեթևակի օրորում է ծառերի ճյուղերը՝ տարածելով ծաղկած ծաղիկների ու պայթող բողբոջների դեռափթիթ բուրմունքը£ Օրորվում են ճյուղերը, մեղմորեն շնկշնկում են տերևները, ասես ինչ-որ բան են փսփսում իրար՝ ս-ս-ս, ս-ս-ս®

Հեղձուկը բռնում է կոկորդս՝ չթողնելով շնչել£ Ես

դեմքս հպում եմ գետնին, այդպես մնում եմ մի պահ՝ դանդաղ շնչելով կուժկոտրուկի բույրն ու երեսիս զգալով կանաչ խոտերի սառը հպումը£ Քիչ անց բարձրացնում եմ արցունքաթաց աչքերս: Ինչո՞ւ եմ արտասվում, ինչո՞ւ է սիրտս տագնապում այսպես՝ հասկանալ, ըմբռնել չեմ կարողանում… Արմենը, Արգինային սեղմած կրծքին, ինչ-որ խոսքեր է ասում մարող շշուկով և միաժամանակ շոյում է նրա մազերը£

Հարկավոր է անհապաղ հեռանալ£ Բայց մարմինս ասես կապարով է լցված, տեղից շարժվել չեմ կարողանում, վախենում եմ նույնիսկ խոր շնչել, ինձ թվում է՝ մի թեթև շարժում՝ մի ճյուղ կկոտրվի հանկարծ, և նրանք կնկատեն ինձ£ Ես դարձյալ լսում եմ նրանց կամացուկ ձայնը£

– Դու ուրա՞խ ես, որ եկար մեր գյուղ£– Արմենի ձայնն է:

– Այո, իհարկե£ Ես երջանիկ եմ, որ եկա£ Չէ՞ որ այստեղ ես հանդիպեցի քեզ£

– Արգինա® ես կխենթանամ®– շշնջում է Արմենը և, Արգինային ամուր սեղմելով կրծքին, սկսում է համբուրել նրան:

Ես սպասում եմ, որ ահա Արգինան բարկացած մի կողմ կհրի նրան և արցունքն աչքին նեղացած կվազի տուն£ Բայց ոչ, նա ամենևին չի բարկանում, չի հրում Արմենին մի կողմ® Նա թույլ հառաչում է Արմենի գրկում, լուսնալույսի մեջ դեմքը կծկելով՝ ինչպես ցավից, մատներով խճողում է նրա մազերը՝ ավելի ու ավելի սեղմվելով նրան£

Եվ կրկին օրորվում են ծառերի ճյուղերը, մեղմորեն

շնկշնկում են տերևները, և կրկին ասես ինչ-որ բան են փսփսում իրար՝ ս-ս-ս, ս-ս-ս®

Ես պատրաստ եմ գետինը մտնել ոչ այն է անդադար հոսող իմ արցունքների պատճառով, ոչ այն է ամոթից, անտանելիորեն այրվում է դեմքս, և ես չգիտեմ, թե ուր կորչեմ£ Ուզում եմ հոնգուր-հոնգուր լալ, և, որպեսզի լաց չլինեմ, ուժեղ կծում եմ շուրթերս£

Իմ ականջների մեջ ու իմ գլխում շարունակ ինչ-որ տարօրինակ, մի վայրկյան անգամ չընդհատվող աղմուկ է £ Բայց թեթև քամուց իրար խփվող տերևների աղմուկ չէ դա, այլ ավելի շուտ՝ ջրվեժի շառաչ£ Եվ այդ աղմուկի միջից հանկարծ լսվում է գիշերային երկնքով անցնող արագիլների կանչը£ Արգինան ու Արմենը մի պահ նայում են վեր, դեպի երկինք£ Արագիլների թախծական կանչը հետզհետե հեռանում, կորչում է սարերի ետևում£

– Երբ Թարթառի ձորում սկսվեց Սարսանգի ջրամբարի կառուցումը, միաժամանակ որոշում եղավ հատել անտառի այն մասը, ուր ապագա լիճը պետք է լինի, – հայացքը դեռևս հեռավոր սարերին, ասում է Արմենը£– Դե հո անտառը չէին թողնելու ջրի տակ£ Բայց ահա եղան մարդիկ, որ, օգտվելով առիթից, կտրեցին նաև շատ ծառեր՝ լճի սահմաններից շատ հեռու£ Ամբարտակի մոտ մի բարդի կար՝ կատարին արագիլի բույն£ Նրանք կտրեցին նաև այդ բարդու ճյուղերը, բույնն ավերվեց£ Իսկ երբ եկավ գարունը, արագիլները վերադարձան£ Նրանք մոտենում էին թևածելով, ուրախության ճիչեր արձակելով

£ Հասնելով ծանոթ բարդուն, նրանք, երևի հասկացան կատարվածը, տագնապալից կռինչներ հանելով մի քանի անգամ պտտվեցին բարդիների շուրջը, իսկ հետո հեռացան £ Այն գնալն էր, այլևս չվերադարձան…

– Նայիր, Արմեն, տեսնո՞ւմ ես, այնտեղ, գյուղ մտնող ճանապարհի վրա կանգնած մենավոր դեղձենին, – ուշացումով ասում է Արգինան£– Դու համաձա՞յն ես, որ այն դարձնենք մեր թալիսմանը£

– Ի՞նչ թալիսման, – զարմանք արտահայտող ձայնով հարցնում է Արմենը£

Արգինան անհամբերատար թափահարում է գլուխը

– Միայն մի խոսք՝ այո կամ ոչ£

– Այո£ Իհարկե, այո… Բայց չեմ հասկանում, դա ի՞նչ է նշանակում£

– Քանի դեռ այդ ծառը կանգնած է այնտեղ՝ ողջ ու անվնաս, ինձ ոչինչ չի լինի կյանքում՝ ոչ փորձանք, ոչ վիշտ, իսկ եթե չլինի այդ ծառը, որևէ մեկը կտրի այն, կամ կոտրվի ճյուղերից նույնիսկ մեկը՝ մեծ դժբախտություն կպատահի մեզ£

Նա այդ բառերն արտասանում է այնպիսի կրքոտ համոզվածությամբ ու այնպես համոզված, որ սարսափել կարելի է, և ես ակամա մտածում եմ՝ նա խելքը թոցրել է, ինչ է£ Մի՞թե նա չի հասկանում, որ ես տեղնուտեղը կմեռնեմ, եթե նրան մի բան պատահի: Հավանաբար նույնն է մտածում նաև Արմենը, որովհետև գրկելով Արգինայի ուսերը, նա վախեցած հարցնում է.

– Արգինա, մտածիր, տես ինչ ես ասում£

– Ես գիտեմ, թե ինչ եմ ասում£ Ես հավատում եմ նախազգացումներին® Ասա ինձ, դու չես թողնի, չէ՞, որպեսզի որևէ մեկը կտրի այն£

– Երբեք£ Անհոգ մնա£

– Դու ինձ համար շատ ես թանկ, Արմեն®

Արմենը նրան քնքշորեն սեղմում է իր կրծքին և մի որոշ ժամանակ նրանք իրար գրկած լուռ կանգնում են այդպես£ Հետո Արմենը հարցնում է կամացուկ.

– Մինչև աշուն ինչքա՞ն ժամանակ է մնացել£

– Չգիտեմ£ Չեմ հաշվել£

Արմենը մի երկու վայրկյան լռում, այնուհետև ասում է.

– Ուղիղ չորս ամիս£

– Արմեն, սիրելիս, պետք չէ այդ մասին խոսել£

– Ինչո՞ւ£

– Ինձ թվում է մինչ այդ ես չեմ դիմանա… չեմ ապրի£

Ես կիսաբարձրանում եմ տեղից, ուշադիր նայում Արգինային£

– Մեր կողմերում հարսանիքները միայն աշնանն են լինում, – ասում է Արմենը£– Այդպիսին է սովորույթը£

– Ինչպիսի հետամնացություն, – ասում է Արգինան, բայց ես նրա ձայնից զգում եմ, որ նա կատակում է£– Մեր ժամանակներում, երբ անհաշտ պայքար է մղվում իրենց դարն ապրած սովորույթների դեմ, դժբախտաբար, դեռևս գտնվում են մարդիկ, ովքեր պաշտպանում են հին սովորույթները£ Մի՞թե, իրոք, չի կարելի գոնե մի անգամ

խախտել այդ սովորույթը։

Այդ խոսքերից հետո նրանք ուրախ ծիծաղում են։ Հետո Արգինան ասում է.

– Դե, ես գնամ, Արմեն, ուշ է արդեն։

– Ի՞նչ շուտ է անցնում ժամանակը։ Ե՞րբ կհանդիպենք։

– Չգիտեմ։

– Այս չորս ամիսներին ուզում եմ ամեն օր հանդիպել քեզ։

– Իսկ հետո՞, -ասում է Արգինան։

– Իսկ հետո հանդիպել և այլևս չբաժանվել երբեք։

Ես կամաց, առանց որևէ ձայնի, ետ-ետ եմ սողում և, քիչ այն կողմ, մթության մեջ ոտքի կանգնելով, վազում եմ տուն։ Ես վազում եմ արագ՝ երբեմն ետ-ետ նայելով, ասես ինչ-որ մեկը հետևում է ինձ։

Տանը առաջվա պես ոչ ոք չկա։ Մեր Չալկան մի քանի անգամ ընկնում է ոտքերիս տակ, ցատկոտում է այս ու այն կողմ, բայց ես նրան ուշադրություն չեմ դարձնում, բարձրանում եմ տուն և, առանց լույսը մարելու, հապշտապ մտնում եմ անկողին։

Ես երկար սպասում եմ Արգինային, բայց նա չկա։

Ծանր, սևավուն ամպերը ծածկում են լուսնյակի երեսը, դրսում ամեն ինչ ընկղմվում է խավարի մեջ, և այդ անթափանց խավարի մեջ հստակ հնչում է մեր Բարակ ջուր գետի միալար վշշոցը։ Շունչս պահած ու ականջս ձայնի՝ սրտատրոփ սպասում եմ։ Բակում ծանոթ ճռնչյունով բացվում է դարպասի դուռը։ Արգինան է։ Նա անաղմուկ, թեթևաքայլ մտնում է տուն։ Ես ձևացնում եմ, թե քնած եմ,

բայց գաղտուկ հետևում եմ նրան£

Արգինան մոտենում է հայելուն, և ես հայելու մեջ տեսնում եմ նրա քիչ գունատ, բայց չքնաղ դեմքը, նուրբ ռունգերով հմայիչ քիթը, խոշոր, արտահայտիչ աչքերն ու լիքը շուրթերը® Նա, իր սովորության համաձայն, գլխի վարժ շարժումով նետում է ճակատին ընկած մազերը և հանկարծ ձեռքերով ծածկում է դեմքը£ Մի՞թե լաց է լինում® Սիրտս ալեկոծվում է նրա հանդեպ ունեցած անհուն սիրուց ու խղճահարությունից£ Սակայն վախենում եմ ափսոսանքի մի բառ անգամ արտասանել. նա կարող է նեղանալ՝ նկատելով, որ հետևում եմ իրեն£ Դրա համար էլ սկսում եմ թեթևակի խռմփացնել£

Արգինան դանդաղ շրջվում է իմ կողմը£ Ես լսում եմ նրա հուշիկ քայլերը… Նա մոտենում է ինձ, զգուշությամբ նստում է իմ մահճակալի ծայրին, և ես զգում եմ, թե ինչպես է խոնարհվում ինձ վրա, արդեն զգում եմ նրա անուշիկ բուրմունքը£ Արգինայի տաք շուրթերը հպվում են իմ այտին £ Ես արագորեն բացում եմ աչքերս, մի ձեռքով թեթևակի գրկում եմ Արգինային, ուզում եմ համբուրել նրան, սակայն չեմ համարձակվում£

– Դու չէիր քնեել, չէ՞, Աբիկ, – հարցնում է նա, առանց ետ քաշվելու£

– Ոչ, – պատասխանում եմ ես դողդոջուն ձայնով£– Չէի քնել£ Դու այդ որտե՞ղ էիր այսքան ժամանակ, – հարցնում եմ ես՝ աչքերս դարձնելով մի կողմ£

Նա իմ հարցին չի պատասխանում£

– Աբիկ, – ասում է նա, – կարո՞ղ ես հաշվել՝ ինչքա՞ն է մնացել մինչև աշունանՀ

– Ի՞նչ մի դժվար բան է դաՀ Ուղիղ չորս ամիսանՀ

– Դու երջանիկ ես, Աբիկ, քեզ համար չորս ամիսը պարզապես չորս ամիս է, և վերջանՀ

– Իսկ քե՞զ համար, – հարցնում եմ ես, զգալով, թե ինչպես է թրթռում սիրտս:

– Ինձ համարՀ, – Արգինան մի պահ մտածում էանՀ– Ինձ համար՝ մի ամբողջ հավիտենականություն անՀ

10

Այդ գիշեր նա ուշ պառկեցէ Գրավորներ էր ստուգում, բայց պառկեց թե չէ՝ անմիջապես քնեցէ Ես միշտ էլ զարմանում եմ վայրկյանպես քնով անցնելու նրա հմտության վրաէ Ես այդպես չեմ կարողանում՝ մի կողքից մյուսն եմ շրջվում, նորից ու նորից վերհիշում եմ այն ամենը, ինչ տեսա ու լսեցի այնտեղ՝ ձորամերձ այգու ծառերի տակ, սակայն, միևնույն է, քնել չեմ կարողանումէ Իմ լուսամուտից երևում է երկնքի մի ծայրը, բայց երկնքի այդ մասը դեռևս պատված է ամպերով և նայելու բան չկա այնտեղէ Սենյակը տոթ է, երևի անձրև է գալուէ Ես ուզում եմ ելնել, բացել օդանցքը, բայց վախենում եմ Արգինան արթնանաէ Ես կրկին ամուր փակում եմ աչքերս՝ ձգտելով մի կերպ քնով անցնելէ Եվ հանկարծ այդ պահին կալատեղերից ինչ-որ տագնապալից ձայն, փշրելով գարնանային խոր լռությունը, տարածվում է քնած գյուղի վրաէ

– Է հե-հե-հե-ե-ե՜յ®

Այդ անակնկալ աղաղակից ասես սառչում է արյունս, ես արագ նստում եմ անկողնում և սարսափով բռնված նայում շուրջսէ

– Էհե-հե-ե-ե՜յ®– տղամարդու ահասարսուռ կանչը կրկին արձագանքվում, քառապատկվում է լեռներում ու անդնդախոր մթին ձորերումէ

Ես իջնում եմ մահճակալից, վազում եմ Արգինայի մոտ և

սկսում ցնցել նրա ուսը.

– Արգինա, վեր կաց£

Արգինան բացում է աչքերը և նայում ինձ՝ զարմացած, ոչինչ չհասկանալով£ Հետո, հանկարծ ցած թռչելով մահճակալից, նա նետվում է դեպի պատշգամբ£ Ես միայն հիմա եմ նկատում, որ չարագույժ հրացոլքը դրսում բռնել է ամբողջ երկինքը£ Արգինան բազկաթոռի վրայից համարյա պոկում է իր զգեստը, այն նույնը, երկնակապույտը, արագորեն հագնում է այն և ասում է շնչաբեկ ձայնով.

– Աբիկ, այնտեղ, գյուղամիջում® այրվում է հիվանդանոցը®

Նա տնից սրընթաց դուրս է վազում, իր ետևից շրխկոցով ծածկելով դուռը£ Ես նույնպես, հասցնելով մի կերպ հագնել շալվարս, անմիջապես վազում եմ փողոց, սլանում դեպի հիվանդանոց, չէ որ մայրիկս նույնպես այնտեղ է: Բոլոր թաղամասերից՝ հեռու և մոտիկ, տագնապահույզ գոչյուններով, ձեռքերին վառվող ջահեր՝ դեպի գյուղամեջ են վազում մարդիկ£ Իսկ հիվանդանոցը ճարճատում է բոցերի մեջ, կրակի լեզվակները լուսամուտների փեղկերը լիզելով սողոսկում են ներս£

– Երեխաները, երեխաներն այնտեղ են, երկրորդ հարկում, – լսում եմ ես ինչ-որ մեկի աղեկտուր ձայնը£

Հիվանդանոցի գլխավոր մուտքով ու առաջին հարկի լուսամուտներից հապշտապ դուրս են բերում հիվանդներին՝ անթացուպերով, իրար հենված£ Աղմուկ, իրարանցում է, լաց ու հառաչանք, այդ ձայներից ու կրակի կատաղի

ճայթյուններից երկիր ու երկինք ցնցվում են£ Իսկ ո՞ւր են Արգինան, մայրիկը®

– Երեխաները£ Նրանց հարկավոր է դուրս բերել շենքից, – բարձրաձիչ բղավում է ինչ-որ մի կին, և այդ անհամար ձայների ու աղմուկի մեջ ես հազիվ եմ ճանաչում իմ մայրիկի ձայնը£ Մայրիկս ինչ-որ մարդկանց հետ պատգարակի վրա դուրս է բերում մի մարդու. երևի նրան, որին արջը հոշոտել է£ Նա արագ սրսկումներ է անում մարդուն£

Եվ հանկարծ ծխի ու կրակի մեջ ես նշմարում եմ Արգինային£ Դա տևում է մի կարճ ակնթարթ միայն, հաջորդ վայրկյանին նա չքանում է իմ տեսադաշտից£

– Աբիկ, – ետևից կանչում է ինչ-որ մեկը£

Այդ իրարանցման մեջ ես, այնուամենայնիվ, ճանաչում եմ Արգինայի ձայնը£ Շրջվում և առաջին հարկի դռնախորշում տեսնում եմ Արգինային՝ գրկին ինչ-որ երեխա£ Ձեռքերով պաշտպանվելով կրակից ու ծխից շնչահեղձվելով, ես վազում եմ Արգինայի կողմը, նրա ձեռքից վերցնում եմ երեխան և վազում ետ£ Մի պառավ կին իմ ձեռքից վերցնում է երեխան, և ես կրկին վազում եմ դեպի դռնախորշը£ Սակայն այստեղ ոչ ոք չկա£ Ես ուզում եմ մտնել ներս, բայց այնտեղից մի այնպիսի տաքություն է հորդում, որ ակամա ետ եմ ցատկում£ Մարդիկ արդեն տեղ են հասել, և իմ շուրջը ջրով լի դույլերով ու կուժերով դեսուդեն են նետվում նրանք՝ մեր թաղեցիները, ուրիշ թաղամասերից էլ կան, ցաքուցրիվ վազվզում են այս ու այն կողմ, գոռում, աղաղակում են՝

առանց իրար լսելու£

– Զուր բերեք, շուտ£

– Հող լցրեք£

– Բահերով, բահերով հող նետեք£

– Զուր, դեպի այս կողմը, դեպի դռները£

– Շուտով կգա հրշեջ մեքենան, հող շպրտեք£

– Շրջկենատրոնից մինչև այստեղ քառասուն կիլոմետր ճանապարհ է, մինչև կգա, և այն էլ մեր ճանապարհներով, ամեն ինչ մոխիր կդառնա£

Կրակն ավելի է բորբոքվել, դռնախորշին մոտենալ արդեն հնարավոր չէ£

Ես անթարթափ նայում եմ այդ ուղղությամբ, բայց Արգինան չկա£ Ո՞ւր մնաց նա£ Հրդեհի կատաղի ճարճատյունը, մարդկանց բղավոցներն ու ոտքերի դոփյունը, ջրի մեծ շաները թափքերում բեռնատար մեքենաների տագնապալից ազդանշանները՝ այս ամենը վերածվել է ահավոր մի խառնաշփոթության, որից, թվում է, հողն ինքը տնքում, երերում է ոտքերի տակ£ Ո՞ւր է Արգինան£ Ինչո՞ւ նա այլևս չի երևում£ Սարսափը պատում է ինձ£ Ես սկսում եմ լաց լինել£

Ծվվոց, ծկլթոց է ամենուրբ£ Եվ հանկարծ ես տեսնում եմ Արմենին£ Մինչև գոտկատեղը չգիտես ինչու մերկ, մրից լիովին սևացած, նա հենց նոր հիվանդանոցից պատուհանով դուրս է բերել հերթական հիվանդին և հիմա, այս ու այն կողմ ընկած, որոնում է ինչ-որ մեկին®

– Արմեն, – ձայնում եմ ես£– Արմեն, այս կողմ, Արմեն®

Ես նրան ասում եմ, որ այնտեղ, ներսում է Արգինանա£

– Նա ներս մտավ այնտեղ ու մինչև հիմա չկա®

Արմենն առանց վայրկյան կորցնելու, իրեն նետում է դեպի դռնախորշը, որտեղից քուլա-քուլա ելնում է բոցախառն ծուխը£ Սակայն նա հազիվ է չքանում այդ ծխի մեջ, երկրորդ հարկի լուսամուտից կրակը միանգամից դուրս է ժայթքում՝ յոթ գլխանի վիշապի պես լիզելով լուսամուտի փեղկերը, որոնք իսկույն բռնկվում, բոցավառվում են£ Եվս մի երկվայրկյան, ու հանկարծ կայծերի հսկայամեծ խուրձը ծառս է լինում դեպի երկինք, և ահռելի թնդյունի մեջ մի պահ մարում են հավաքվածների սարսափահար ձայներն ու հառաչանքները£

– Տանիքը փլվեց, – կոլտնտեսության վարչական շենքի պատշգամբում կանգնած գոռում է նախագահ Գաբրիել Բալայանը£– Բոլորդ հետ կացեք, տանիքի մի մասը փլվեց, հետ կացեք, հիմա լրիվ կփլվի, հետ®

Ես ակամա մի կողմ եմ ցատկում£ Ես իմ հոգու խորքում դեռևս փայփայում եմ այն հույսը, թե Արմենը կհասցնի փրկել Արգինային® Լաց լինելով վշտից ու անզորությունից, ես արձանացած նայում եմ դռնախորշին£

Արմենը այնտեղից ելնում է ամբողջովին մրի մեջ կորած £ Նրա տաբատը մխում է, բայց նա ուշք չի դարձնում դրան £ Կանգ առնելով, նա հայացքն ուղղում է դեպի երկինք, այդպես քարացած նայում է մի պահ£ Ասես անջատված աշխարհից, ես նույնպես նայում եմ վերև. զարմանալի է, բայց այս գիշեր կարմիր գույն ունի լուսինը£

– Արգինա, – խոպոտ, գազանական զարհուրելի ձայնով բղավում է Արմենն ու, ասես գլխին իջած կոանի ծանր հարվածից, նա երերալով առաջանում է մի երկու քայլ, հետո հանկարծակի ծնկի է իջնում գետնին՝ ձեռքերով ծածկելով դեմքը®

ՎԵՐՋԵՐԳ

Եվ ահա նորից գարուն է մեր գյուղում£ Դեղձենիները ծաղկել են ամենուր, և նրանց ծաղիկները կարմիր են ու մանուշակագույն£

Ես քայլում եմ ծանոթ կածաններով ու քայլերն իմ ինձ ակամա տանում են դեպի այնտեղ, ուր տարին չորս բոլոր ծաղիկներ են, ու արտույտներն անուշ գեղգեղում են այս ու այնտեղ£

Իմ սրտին մոտ ու հարազատ կածաններ£ Ես քայլում եմ առաջ£ Ահա Բախչուտի ձորը£ Ահա և գյուղի այծապահ Ռոման՝ նստած բլրի վրա£ Նա նայում է գյուղի կողմը£ Իսկ գյուղում գարուն է, և ձվածան հավերը կչկչում են զիլ£

Բախչուտի ձորից մի աղջիկ է ելնում՝ կուժն ուսին£ Նա գնում է գյուղ տանող կածանով, և պղնձե թաց կուժը փայլկտում է արևի տակ£ Ամեն ինչ նույնն է, ամեն ինչ ցավալիորեն անփոփոխ£ Ահա և գյուղի հանգստարանը £ Գարնան արևի շողերում քամին տարուբերում է բարձր խոտը£ Իմ աչքերը սահում են ծանոթ քարերի վրայով, հայացքս ընկնում է մեծ ու սպիտակ քարի վրա փորագրված ոսկեգույն տառերին՝ Արգինա, դու ծաղիկ էիր սիրում® Դու էլ ծաղիկ էիր անթառամ®

Ես մոտենում, ձեռքս դնում եմ սառը քարին. գյուղական սովորություն է, որ նշանակում է՝ բարև, սիրելիս, ես քեզ չեմ մոռացել®

Հեռվում, կակաչներից հուրհրատին տալով, թեթևաշարժ ալիքվում են արտերը, թախծալուր կանչում են մարգարտալորերը՝ կախ-կըղա, շախ-կըղա, շախ-կըղա, կախ-կըղա®

Ես երկար կանգնում եմ լռին և ինձ այնպես է թվում, թե հեռավոր մի ձայն հազիվ լսելի շշնջում է. «Ես այս գյուղից ոչ մի տեղ չեմ գնալու: Ընդմիշտ մնալու եմ ձեզ մոտ®»:

Խեղդելով հառաչանքը, ես շրջվում, նայում եմ գյուղի կողմը£ Ներքևում՝ ձորում, փայլում, իր հին ձայնով երգում է Բարակ ջուր գետը, երևում է գյուղ մտնող մեծ ճանապարհի վրա խոնարհված մենավոր դեղձենին, որի ճյուղը կոտրվել, կորցրել է իր գարունը£

Այդ ճյուղը չտեսավ այս ծաղիկները, որ կան հիմա և կլինեն ամեն տարի, երբ գարունը կգա, և դեղձենիները կծաղկեն նորից՝ կարմիր ու մանուշակագույն…

Ի Ր Ի Կ Ն Ա Յ Ի Ն Ա Ղ Զ Ա Մ Ո Ւ Ղ Զ

®Հետո սկսեց հալվել, ցրտել տաք գիշերը, այգու վրայով անցավ վաղորդյան հովը, ծառերը լսելի աղմկեցին£ Հետո բեկբեկուն կանչեց առաջին աքաղաղը, նրան միանգամից ձայնակցեցին մեկ այստեղ, մեկ այնտեղ՝ գյուղի մյուս ծայրին £ Հետո երկար, շատ երկար ժամանակ լռություն էր£ Սարերի վրա հետզհետե պարզվում էր երկինքը, հետո ինչ-որ տեղ, լուսամուտից այն կողմ, իրար ընդհատելով երգեցին գեղգեղիկները՝ ճրնկ-ճրնկ, ճրնկ-ճրնկ, ճրնկ-ճրնկ,

այնուհետև՝ ֆյութի-ֆյութի-ֆյութի®

Այնտեղ, հնդկական Սուրաթ քաղաքում, այստեղից հազարավոր կիլոմետր հեռու, չնայած դեկտեմբեր ամսի վերջերին, ինչպես ուշ գարունքին՝ մեզ մոտ, կանաչ հագած պուրակում երգում էին թռչունները՝ ճընկ-ճընկ, ճընկ-ճընկ, ճընկ-ճընկ, այնուհետև՝ ինչպես հիմա այստեղ, նույն քաղցրահունչ դայլայլը՝ ֆյութի, ֆյութի, ֆյութի®

…Կամացուկ, որպեսզի չարթնացնեմ Լուսինեին, ելնում եմ դուրս£ Հեռվում, մշուշապատ ձորերից ու վերձիգ սարերից անդին, երկնքի կապույտի մեջ ճերմակին տվող Կաչաղակաբերդի վրա, մերկ՝ ինչպես հրաշամանուկ, խնդումներես կանգնել է արևը, և նրա տեսքից ամբողջ երկինքը շառագունել, հուրհրում է£

Օդը նոսր է, եղյամի պես սառը£ Բայց ես ցուրտ չեմ զգում. երբեք ու ոչ մի տեղ մարդ, երևի, իրեն այնպես լավ չի կարող զգալ, ինչպես հայրենական իր փոքրիկ տան շեմին£ Որովհետև այնտեղ են անցել մանկության ու պատանեկության հրաշունչ օրերդ, և այդ օրերը հավիտենորեն անբաժան են քեզանից՝ քո վաղանցուկ կյանքի արշալույսից մինչև մայրամուտ£

Իմ հայացքն ակամայորեն ընկնում է ապակեպատ երկարուկ պատշգամբին, ուր իր անշարժուն դիրքով՝ ասես աշխարհից տարանջատ, նստած է մեծ մայրս£ Նույն դիրքով, ինչպես երեկոյան թողեցինք նրան£ Ես դանդաղ բարձրանում եմ պատշգամբ և, մոտենալով նրան, նստում եմ թախտի ծայրին£

– Բարի լույս, Շահում այա, ո՞նց եսէ

Ինքն իրեն անլսելի ինչ-որ բան է մրմնջում£ Ձեռքս դնում եմ չորչորուկ ջղուտ ձեռքին, նա իմ մատներն արագ առնում է տաքուկ ափերի մեջ և, կարծես ի պատասխան իմ հարցի, թեպետ, գիտեմ, չի լսել ինձ, ասում է.

– Գլուխս, է՞, ղոռում, դնգդնգում է, հարսանիք է, ինչ է, հասկանում չեմ®– ու շարունակում է՝ գլուխն օրորելով, մի տեսակ ասես երգելով, – մարդուս բաժին կյանքն էս աշխարհում շատ է կարճ, այան քեզ մատաղ£ Ամեն ինչ հոսում է, կյանքն էլ է հոսում ոնց որ ջուրը, բայց իմ ջուրն արդեն վերևից, է՞, ակունքից կտրած է, մնացել է մի ծլլոկ, էն էլ որտեղ որ է՝ էսա կկտրվի®

Դրսից եկող պարզունակ ձայներին, թռչունների դայլայլին, առավոտվա անապակ լույսին, տերևների երգեցիկ սվսվոցին, ամեն-ամեն ինչին անհաղորդ, հեռավոր մտքերին, վերհուշներին տրված՝ տարուբերում է գլուխը, երբեմն ննջում՝ դեմքն իջեցրած կրծքին, բայց մի կիսավայրկյան միայն, կրկին բացվում են աչքերը, նայում է դուրս, թեպետ վաղուց, մի տարուց ավել է արդեն, ինչ զրկվել է տեսողությունից էլ, լսողությունից էլ£ Լույսն ու խավարն է նշմարում սոսկ՝ մնացածը մշուշ է ու լռություն£

…Այդ լռության ու մշուշի մեջ երբեմն առ երբեմն զարկում են թմբուկներ, գլում են զուռնաներ, համբարձման տոն է, ջահել հարսն ու աղջիկներ՝ նոր շորեր հագած, ծփուն ծամերին գույնզգույն ժապավեններ ու ակներով սանրեր, շուրջպարի երգում են, և նրանց մեջ ամենից գեղեցիկն ինքն է,

և իր ձայնն էլ ամենից դուրեկանն է, մեներգը ինքն է երգում.

– Իմ ծաղիկս քաղա՞ծ է®

Խումբը, զարնան հովի հետ, թոցնում է երգը.

– Զա՞ն գյուլում, ջա՞ն, ջա՞ն®

Նորից ինքը՝

– Բարձր սարին պահա՞ծ է®

Ու նորից խումբը՝

– Զա՞ն, ծաղիկ, ջա՞ն, ջա՞ն®

Տոնախմբությունը դեռ երեկ էր սկսվել, աղջիկները, խմբերի բաժանված, հանդերից գունեղ ծաղիկներ են քաղել, կավե կճուճների մեջ աղբյուրներից հավաքած ջուր լցրել և, ծաղիկները դնելով այնտեղ, տարել եկեղեցի, որպեսզի ժամերգությանը օրհնի տերտերը£ Իսկ հետո, կճուճներն առած, երգելով շրջել են տնետուն՝ օրհնված ծաղիկներից դնելով խնոցու վրա, որ կարագն անպակաս լինի, կապել կովերի պոզերին՝ որ կաթն առատ լինի, օրհնած ջրից ցողել են դաշտերի վրա, որ շուտ հասնի արտը®

Երգն արձագանքվում, գյուղը երեք կողմից շրջափակված բարձրակա ժայռերում բեկբեկվում է.

Իմ ծաղիկս քաղա՞ծ է,

Զա՞ն գյուլում, ջա՞ն, ջա՞ն,

Բարձր սարին պահա՞ծ է,

Զա՞ն ծաղիկ, ջա՞ն, ջա՞ն®

Շուրջպարի ժամանակ ինքն զգում էր ինչ-որ մեկի ուշակալ հայացքն իր վրա, ու սիրտ չէր անում բարձրացնել

աչքերը, թեպետ ներքուստ զգում էր, գիտեր, թե ով է £ Ինքը, իհարկե, լսել էր նրա մասին, բայց երեկ, երկդասյա վարժարանից տուն վերադառնալիս առաջին անգամ տեսավ մոտիկից. Դերունց թաղում էր դա, իրենց տնից ոչ այնքան հեռու, քարքարոտ նեղ կածան էր, անհնարին էր, որ մեկը մի կողմ չկանգներ՝ մյուսին ճանապարհ տալու£ Երևում էր, տղան վաղուց էր սպասում այստեղ, սակայն, իրեն տեսնելուն պես, չգիտես ինչու, ձևացրեց, թե իբր հենց այնպես, արահետն ընկած գնում է դեպի վարժարան£ Հասան իրար, և, տղան քիչ խոպոտված, բայց համարձակ ձայնով ասաց. «Մի րոպեով կարելի՞ է, օրիորդ, խոսք ունեմ ասելու»£ Ինքը մի վայրկյան նայեց միայն, լոկ սև հոնքերի տակից այրող նրա սև աչքերը տեսավ և պատանեկան խավամազով երիզված շուրթերը, որոնք թեթևակի ժպտում էին£ Աղջիկն արագ փախցրեց հայացքը ու մնաց կանգնած՝ անկարող մի քայլ անելու£ «Ներեցեք, խնդրում եմ, -ասաց տղան շփոթված ժպտալով, – ես Գրիգորյան Մուխանի տղան եմ, անունս Նիկոլայ է, վաղուց է, ինչ գյուղում չեմ լինում, գուցեն չճանաչեք ինձ® Բայց ես® Քանի օր է, ուզում եմ խոսել ձեզ հետ, չի հաջողվում, ժամանակն էլ սուղ է, կարևոր գործով շտապ տեղ պիտի գնամ®»: «Այդ բոլորն ինչո՞ւ է իրեն ասում. ինքն առանց հեր մի աղքատ աղջիկ, նա՝ հարուստի տղա»£ Նորից նայեց տղային և զգաց, որ վերջ, ամբողջ կյանքում չի մոռանա նրանց£ Ուզենա էլ՝ չի կարողանա մոռանալ£ «Իմ ընտրած ուղին դժվար ուղի է, միայն դու և ուրիշ ոչ ոք, միայն քեզ

հետ կարող եմ անցնել այդ ճանապարհը»£ Շահումը, ոնց որ երազի մեջ, լսում ու ոչինչ չէր կարողանում ըմբռնել նրա ասածներից£ «Այն օրվանից, ինչ եկա վարժարանի վարիչ Հայկ Շաքարյանի մոտ, և այնտեղ, միջանցքում, պատահաբար տեսա ձեզ, քուն ու հանգիստ չունեմ, – նկատելի շփոթմունքով շարունակեց տղան£– Մի խոսքով, ես ուզում եմ մերոնց ուղարկել ձեր տուն»£ Նիկոլայը ակամա փորձ արեց՝ բռնելու աղջկա ձեռքը, սակայն Շահումը, ասես մատները կրակի կպան, արագ ետ քաշեց ձեռքը ու փախավ դեպի տուն՝ չհամարձակվելով (ախ, այնքան էր ուզում) գոնե մի անգամ նայել ետ£

Տանը, ինչպես թոչնակը վանդակում, նա պատեպատ էր զարկվում, մեկ խնդում, մեկ արտասվում էր՝ անհանգիստ նայելով լուսամուտից, և նրան շարունակ թվում էր, թե օդը չի հերիքում£ Երեկոյան ամեն ինչ պատմեց մորը՝ ավելացնելով, որ կամ նա, կամ էլ ոչ ոք£ Մայրը՝ Թագին, անօգնական, մի տեսակ ասես անտեղյակ, նայում էր աղջկան, չնայած, իհարկե, զգացվում էր, որ գիտեր արդեն այդ մասին, հարևաններն էին, երևի, իրենց միասին տեսել £ «Ախր, սար ու ձորի տարբերություն կա ձեր մեջ, մենք՝ ով, նրանք՝ ով, – խոսեց մայրը ընկճված ձայնով, նրա տեսքը խեղճ ու ողորմելի էր, Շահումի սիրտը միանգամից ճմլվեց կրծքի տակ£-Նիկոլայը, խոսք չունեմ, վատ տղա չի, ուրիշ երկրներում էլ, ասում են, ուսում է ստացել, կրթված, գրագետ, իզուր տեղը չի, որ նրան կարմիր պարտիզան են ասում£ Բայց ծնողները, հատկապես մերը,

չեն համաձայնվի® Դա գլուխ եկող բան չի, բալաս, գործ չունես, մտքիցդ հանիր նրան®»£ Եվ հիմա տղաների խմբում կանգնած, հեռվից հեռու նայում էր իրեն, և ինքը գիտեր, որ Նիկոլայն է, և սիրտը թրթռում էր արտասովոր ու տագնապիչ զգացումից£ Իսկ խումբն արդեն ուրիշ երգի էր անցել.

Խաչենը փրփրում է,
Ափերը քրքրում է,
Ամեն քեզ տեսնելիս՝
Սիրտս թրթռում է®

Աստված, գոնե ուրիշ կողմ թեքեր հայացքը, ուրիշ ուղղությամբ նայեր, ամբողջ գյուղի առջև ինչո՞ւ է այդպես նայում, եղբայրները՝ Սահակն ու Առուստամը, նույնպես այնտեղ են, ժողովրդի մեջ կանգնած նայում են իրենց, ի՞նչ կմտածենն, եթե տեսնեն նրան՝ իրեն նայելիս£ Այլայլվել, դեմքը կրակի պես այրվում էր, իսկ ընկերուհիներն արմունկներով թեթև հրում էին. «Աղջի, Շահում, մի տես ոնց է հայիլ-մայիլ նայում քեզ», ժպտահայաց ակնարկներ էին նետում՝ մտքներում, երևի, նախանձելով նրա բախտին: Էհ, թե աղջիկներն իմանային առջևում ինչ բախտ է սպասում իրենց ընկերուհուն®

…Դեղձանիկները շարունակում են ցայգալույսի իրենց երգը£ Ես հիմա տեսնում եմ նրանց՝ ոսկեկանաչ փոքրիկ երգիչներին, թթենիների վրա, երբեմն թաքնվելով դեղնագորշագույն տերևների մեջ, երբեմն հանելով իրենց հետաքրքրասեր կտուցները, ուրախ ոստոստում, ճախրում

են ծառերն ի վեր և անընդհատ հնչեղ ու սահուն ծորում է նրանց երգը՝ ֆյութի-ֆյութի-ֆյութի, ապա մի պահ ասես երգն ընդհատվում է, բայց մի կարճ պահ միայն, այն կրկին հնչում է՝ այս անգամ քնքուշ ու նվաղուն՝ ֆյուուութի®

Հեռուներից՝ ոչ այն է կոլտնտեսային դաշտերից, ուր ալյակ-ալյակ ծփում են դեղնած արտերը և ասես տաքություն են բուրում, ոչ այն է գյուղամիջով փախչող գետակն ի վար ձգված անտառից, զնգուն ձայնակցում են արտույտները£

– Այա, ուզո՞ւմ ես ուտելու մի բան բերեմ£

Ասես հանկարծակիի եկած՝ աչքերը թարթում, իմ վրայով նայում է ինչ-որ տեղ£

– Վու՜յ, քո անցվորանց գերեզմանին լույս գա, բա ես բա՞ն եմ ուտում® Ուտեմ որ ի՞նչ. պառավի կերածը կորած է, այան քեզ մատաղ£– Քմծիծաղում է, բարակ շուրթերին երևում ու անմիջապես էլ հանգչում է թույլ ժպիտը£– Իմ մասին ինչի՞ ես մտածում, մատաղ, իմն արդեն անցել է, էսօր վերջին օրն է, էգուց չեմ լինելու®Այան գլխովդ շոռ տա, Սամվելիկիս գտիր, – նրա ձայնը դողդողաց, լացախառն ասաց.– Գտիր, անպայման գտիր, այան մատաղ£

– Գտնելու եմ, այա, – հառաչանքս խեղդած՝ հուսադրեցի ես, -անպայման գտնելու եմ£

– Գտնելու ես, բայց ես չեմ լինելու, անունին ու ձենին մատաղ նրա®

– Դու դեռ աղջիկներիս՝ Գոհարի ու Լիլիթի հարսանիքին պար պիտի գաս, էդ ինչե՞ր ես խոսում£

Նույն քմծիծաղն ու հուսակորույս ժպիտը՝ շուրթերի ծայրերին£

– Բարով կռիվ չլինի, խաղաղություն լինի, Սամվելիկը տուն գա, դու էլ բարով երեխեքին տեղաց անես, հացը բոլ լինի, սով չտեսնաք, – ինչպես օրհնանք մրմնջում է նա£– Աստված ձեզ հազար ճողնը շինի ու երեսներդ լվացած տեղը վարդ ու մանիշակ բսնի£– Նա խոսքն անսպասելիորեն փոխում է.– Այան մատաղ, ինչի՞ ես էստեղ նստել, գնա, հանդերը ման եկ, մարդ երեխա ժամանակ ման եկած տեղերը շատ կկարոտի£

Ես ելնում, դուրս եմ գալիս բակ£ Գյուղն արդեն արթնացել է, այստեղ-այնտեղ մարդիկ ձայնում են իրար, երդիկներից ծուխ է բարձրանում, երկար գալարվում է տանիքների վրա՝ մեկ կպչելով տանիքներին, մեկ քամու հետ մագլցելով վեր: Ինչ-որ տեղ, հավանաբար, կալերում, միանգամից հոնդաց տրակտորն ու լռեց£ Նայում եմ շրջակա լեռներին ու անտառներին, երեկ, երբ գյուղ հասանք, դրանք ծածկված էին թանձր քաշաթխպով, իսկ հիմա, ասես շաղով լվացած, ցոլցլում են արեգակի շողերից£ Ներքևում, ձորում, խլածայն աղմկում է գետը, որ գալիս է հեռվից, Վարդանաբերանց սարերից, և, գյուղը կիսելով երկու մասի, թթայգիներով գնում, կորչում է Խաչենագետի հովտում£

Այդ այգիներում էին տեղի ունենում համբարձման տոները, ճերմակազգեստ փոքրիկ աղջիկները՝ երեսները ծածկած ճերմակ շղարշով, ձեռքները զգույշ իջեցնելով կճուճների մեջ, վիճակ էին հանում, իսկ մեծերը սրտի

թրթիռով սպասում էին, թե ինչպիսին դուրս կգա իրենց բախտը£

…Կարմիր պարտիզան Նիկոլայը, ծառերի տակ, տղաների մեջ կանգնած, շարունակ նայում էր Շահումին՝ իր կրակուն աչքերով հետևելով նրա յուրաքանչյուր շարժումին, իսկ երեկոյան հարազատների հետ եկավ նրանց տուն՝ խոսք առնելու£ Դա անչափ բախտավոր օր էր Շահումի համար, հնար լիներ՝ թև կառներ, կթռչեր երջանկությունից£ Բայց ինչո՞ւ և ո՞ւր թռչեր, երբ այստեղ է նրա երջանկությունը, ահա նստած է նա պատշգամբում, ցածրաձայն զրուցում է, և ինքն՝ ասես հիպնոսացած, ոչ մի կերպ չի կարողանում ըմբռնել նրա ասածների իմաստը, չի համարձակվում գոնե մի անգամ նայել նրան£ Միայն մի բան հասկացավ Շահումը, և դա վերաբերում էր հարսանիքին. Նիկոլայը վաղը գնում է, ամսի վերջին կգա, հարսանիք կանեն, և իրենք կճանապարհվեն Բաքու£ Աստված, ե՞րբ կգա ամսի վերջը, միթե՞ չեն հասկանում, որ իր սիրտը չի դիմանա այդ անջատմանը£ Շահումը նույնիսկ զարմանում էր՝ այդ ինչպե՞ս էր պատահել, որ ինքը մինչ այդ կարողացել էր ապրել առանց նրա գոյության, ուրեմն անիմա՞ստ է եղել իր կյանքը մինչև հիմա® Ստացվում է, որ, այո, անիմաստ ու անարժեք էր եղել, այլապես սիրտը կրակի մեջ չէր այրվի այսպես, կարոտից հալ ու մաշ չէր լինի® Լավ էր, որ ամենամոտ ընկերուհին՝ Մարգարիտը, շարունակ կողքին էր, ծիծաղում, սիրտ էր տալիս, բայց մեկ էր, տագնապալից էր սպասումը մինչև

հարսանիք, իսկ հարսանիքին մի օր մնացած՝ ուղղակի քիչ էր մնում սիրտը կանգներ անհամբերությունից® կարգ կար այդպիսի այն հեռու ժամանակներում. հարսանիքի օրը, մինչև եկեղեցի գնալն ու եկեղեցուց հետո՝ մինչև հարսանիքի վերջը, աղջիկն իրավունք չուներ տեսնելու իր նշանածին, խոսելու նրա հետ£ Ծաղկավոր մետաքսից կարված զանդրուկը հագցրած գլխին, զուռնա-դհոլի ուղեկցությամբ, հրացանների համազարկով, ուրախ բացականչություններով նրանց տարան գյուղամեջ, Սուրբ Աստվածածին եկեղեցին£ Դեմառդեմ ու ձեռք-ձեռքի կանգնել էին նրանք տեր Վարդանի առջև, ինքը ոչինչ չէր տեսնում անթափանց շղարշի տակից, հայացքը գետնին, տրոփող սրտով լսեց տերտերի օրհնանքը. «Տեսէք որդեակք, աստուածային հրամանն՝ և կանոնիւք սուրբ հայրապատայն եկեալ էք ի սուրբ եկեղեցիս, պսակիլ օրինօք ի սուրբ ամուսնութիւն£ Ապա տեսէք, որ յաշխարհիս վերայ պէսպէս փորձութիւնք կան. թե հիվանդութիւն, և թե աղքատութիւն, և թե այլ ինչ նեղութիւն. Աստուած զձեզ յամենայն փորձութենէ հեռի պահեսցէ, միաբան սիրով պահեսցէ, ի խոր ծերութիւն հասուսցէ, և անթառամ պսակին արժանացուսցէ®»£ Եվ տեր հոր հարցին, որ կրկնվեց երեք անգամ. „Որդյակ իմ, և դու մինչև ի մահ հնազա՞նդ ես“, արձագանքեց շշուկով ու շիկնանքով, և կրկնեց դա երեք անգամ. „Այո, հայր սուրբ, հնազանդ եմ հրամանն Աստուծոյ“£ Հետո նրանց դուրս բերեցին բակ, դարձյալ նույն նվագն էր, ցնծուն բացականչություններն

էին, եկեղեցու զանգերը ախորժալուր ղողանջում էին, այս ու այնտեղ երկար ձողերին ամրացրած ջահերի վրա կրակում էին հրացաններից, աղջիկներն ինչ-որ ծիծաղելի պատմություններ էին անում, իսկ ինքն ասես երազի մեջ լիներ, ոչինչ չէր կարողանում ըմբռնել, ինչ-որ անհայտ ու տագնապալի բանից սիրտը տարօրինակ կերպով խփում էր, իսկ թե ինչից էր դա, հասկանալ չէր կարողանում£ Մենակ Մարգարիտն էր, որ, չգիտես ինչու, մի տեսակ տխուր էր և հայացքը շարունակ փախցնում էր՝ կարծես թե չուզենալով ուղիղ նայել ընկերուհուն£ „“Միթե նախանձում է, – Շահումը նույնիսկ վիրավորվեց ներքուստ£– Իսկ գուցե մի բան գիտի ու չի՞ ասում իրեն£ Բայց ի՞նչ պիտի իմանա»£ Իսկ տագնապը չէր անցնում, այդ տագնապը չէր լքում նրան նույնիսկ հարսանքի ժամանակ, իր համար առանձնացրած սենյակում նստած, ականջում հարսանքավորների խնդուն աղմուկը, նա սպասում էր, որ ահա ուր որ է մեկը ներս կմտնի և անպայման մի վատ բան կհաղորդի նրան Նիկոլայի մասին£ «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո… Եվ մի տանիր զմեզ ի փորձություն, այլ փրկեա զմեզ չարէ», – անընդհատ ու անլսելի շշնջում էին նրա տոչոր շուրթերը £ Եղավ մի պահ, երբ ընկերուհիները միանգամից ելան և, մեկ-մեկ գրկելով ու համբուրելով նրան, ճռվողելով դուրս եկան£ Նա հասկացավ, որ հիմա Նիկոլայը ներս կմտնի £ Սիրտն սկսեց ավելի արագ խփել՝ ասես ցանկանալով դուրս թռչել կրծքից£ Դռան ձայնից նա շտապ դարձավ դեպի լուսամուտը՝ սիրտ չանելով շրջվել նրա կողմը£ Թույլ

չրխկաց դռան մոլակը: Շահումի շունչն ասես կանգ առավ£

– Շահո՞ւմ£

Ոնց որ օձ խայթի՝ Շահումն արագորեն շրջվեց ձայնի վրա և, տեսնելով Նիկոլայի եղբորը՝ Աղաբեկին, թիկունքով սեղմվեց լուսամուտագոգին£ Աղաբեկը՝ դեմքի մի մասը, աչքի ու շրթունքի հետ միասին, մանկուց այրված, սարսափազդու տեսքով, ծանր շնչելով նայում էր նրան£

– Նիկոլային բա՞ն է պատահել, – արտասանեց Շահումը՝ հազիվ կարողանալով շունչը ետ բերել£– Աստված իմ, դու ինչ-որ բան ես թաքցնում ինձնից£ Ինչո՞ւ ես լռում, – ահագնացող վախով շարունակեց նա, – ես հո կույր չեմ՝ նրան վատ բան է պատահել. ես դա զգում էի£

– Ոչ£– Աղաբեկը թափահարեց գլուխը և միանգամից, կարծես ծանր բեռից ազատվելով, ասաց.– Քեզ նրա համար չենք բերել, Շահում£ Քեզ ինձ համար ենք բերել®

Շահումը քարացած նայում էր ձայնի ուղղությամբ՝ առանց խոսակցին տեսնելու£

– Նիկոլայի համար ինչ կա, – ինչպես խոր անդունդից՝ գալիս էր Աղաբեկի ձայնը£– Նա ինձ նման անբախտ չի, ում էլ ասես՝ կառնի® Իմ բանն ուրիշ է, ինքդ էլ տեսնում ես, թե ինչ օրի եմ® Եղբորդ՝ Առուստամի հետ էդպես որոշեցինք, սկզբում դեմ կանգնեց, բայց դե, ինչի՞ պիտի դեմ կանգնի, համաձայնեց£ Մի մտածիր, իմացած եղիր, որ ես քեզ Նիկոլայից պակաս չեմ պահելու, լավ եմ պահելու®

– Ոչ, ոչ, չեմ ուզում, ոչ, – բերանով օդ որսալով՝ շնչասպառ ու գունաթափ՝ անկարող անգամ ցավից

ճչալու՝ Շահումը գլխապտույտ զգաց և ուշակորույս փռվեց հատակին®

…Ես շրջվում, կրկին նայում եմ ետ՝ պատշգամբին, ուր արևի գունեղ շողերն արդեն լուսամուտներից ներս են մտել և բակի ծառերի մեղմիկ շարժումից վետվետում են սևացած պատերին£ Այնտեղ, պատշգամբում, իր հնամենի թախտին նստած, մեծ մայրս ինքն իրեն խոսում է, կամկար շարժում ձեռքերը, ասես ինչ-որ բան է ուզում ապացուցել երևակայական զրուցակցին£ Հնարավո՞ր է գիտենալ՝ ի՞նչ է մտածում մարդ ահա այս պահին, երբ արդեն հասել է կյանքի վերջնագծին և բոլորը գիտեն ու ինքն էլ գիտի, որ դա այդպես է, ավարտված է կյանքը, վերջ՝ ինքն այս մեծ ու կանաչ աշխարհում չի լինելու այլևս£ Ի՞նչ է հիշում հիմա իր անցած օրերից և առհասարակ որևէ բան հիշո՞ւմ է, թե ամեն ինչ այնտեղ, հոգու խորքում իրար է խճճված®

Շատ տարիներ առաջ, երբ մայրս բերեց ինձ գյուղ և, թողնելով պառավ սկեսրոջ խնամքին, գնաց քաղաք՝ վայելելու իր երջանկությունը նոր ամուսնու հետ, հիշում եմ, մեծ մայրս հեքիաթներ էր պատմում, ըստ երևույթին, ուզում էր սփոփել ինձ, որ շատ չտխրեմ առանց մորս£ Իսկ ես չէի էլ տխրում, թեպետ երբեմն առ երբեմն ես ինձ զգում էի մենակ, արհամարված ու լքված բոլորից£ Բայց դա սկզբնական շրջանում էր, հետո ես սրտակից ընկերներ ունեցա, մանկական միամիտ ու մաքուր սիրով սիրեցի և° նրանց, և° գյուղը, և°, իհարկե, Շահում մեծ մորս, առանց որի ես իմ կյանքը չէի պատկերացնում այլևս£ Նա ձեռքս

բռնած ինձ առաջին դասարան տարավ, իսկ երբ ավարտեցի դպրոցը, հասունության ատեստատը կրծքին սեղմած երկար լաց էր լինում, և ես չէի կարողանում մխիթարանքի խոսքեր գտնել նրան ասելու£

Մեծ մորս պատմած բազում հեքիաթներից մեկն իր մասին էր. «Եղել է, չի եղել, մի սիրուն աղջիկ է եղել£ Աչքերը՝ ոնց գիշեր՝ սև են եղել, բերանը պողի նման կարմիր, մեջքը ճապկի պես նուրբ ու բարակ է եղել՝ ու ինքն էլ տասնչորս տարեկան: Կուժն՝ ուսին երբ ջուրն է գնացել, երբ սարերից քշել է իրենց ուլերը, կամ եղբայրներին հաց է տարել հանդ ու թեթևաքայլ տուն է եկել, ամբողջ գյուղը կանգնել, հեռվից հեռու զմայլված նայել է նրան՝ մտքում երանի տալով էն բախտավոր տղին, որ կառնի նրան®»

Պատմում էր նա, և նրա ձայնը, ոնց որ քամու հետ եկող ջրի խոխոջ, մեկ հանկարծ իջնում, մեկ կրկին բարձրանում էր, ես մտովի տեսնում էի կարմիր պարտիզան տղային, որ «բարձրահասակ էր, ինչպես չինարի, սև աչք-ունքով էր ու խոսելիս հմայում էր քեզ իր անուշ ձենով»£ Մեծ մորս ձայնը դողում, կտրվող լարի պես թրթռում էր, երբ հեքիաթը հասնում էր վերջին՝ ավետելով այն մասին, թե մեծերն ինչքան դաժանորեն խաբեցին ջահել սիրահարներին£ Բայց այն, որ այդ հեքիաթում իր կյանքն էր պատկերված, ես շատ տարիներ հետո միայն հասկացա£ Ես նրան հարցրի.

– Այա, իսկ ի՞նչ դառավ կարմիր պարտիզան Նիկոլայը, նա որտե՞ղ մնաց£

Նա և° զարմացած էր, որ ես վերջապես գլխի եմ ընկել,

թե ում մասին է հեքիաթը, և° մի տեսակ սրտովն էլ էր, որ ես իմանամ այդ պատմությունը£ Վաղնջական գեղեցկությունը կորցրած դեմքին թեթևակի ժպիտ մարմրեց£ Քմծիծաղեց, ինչպես սովոր էր, և թառանչանքով ասաց.

– Գնաց ու էն գնալն էր, էլ չեկավ, խռովեց բոլորից էլ, աշխարհից էլ ու էլ չեկավ. Հետո լսեցինք, որ Բաքվի պաշտպանության ժամանակ սպանվել է և, որպես հերոս, թաղված է Էնտեղի հայոց ամենամեծ եկեղեցու բակում, հազար ողորմի, ջահել-ջիվան գնաց կորավ…

…Իսկապես, տեսնես որևէ բան հիշվում է, թե ամեն ինչ վաղուց մոռացության է տրվել£ Մի՞թե մարդկային կյանքն այնքան երկարատև է, որ մարդ վերջին ժամին չկարողանա հիշել իր գլխովն անցածը£ Եվ հնարավո՞ր է մոռանալ£ Այն նույն աղջիկներով, որոնց հետ ոչ հեռու ժամանակներում վիճակախաղի ցնծուն երգեր էին երգում համբարձման տոներին, այժմ սուգ էին ասում գերեզմանատանը£ Դժվար, անասելի դժվար ժամանակներ էին, գյուղում տիֆի համաճարակ էր տարածվել, չկար մի օր, որ հինգ վեց մարդ չմեռներ£ Հնձի ժամանակ էր, տղամարդիկ վախենալով, թե կարող են վարակվել, սարերից տուն չէին վերադառնում£ Գյուղում մնացածներն էլ չափարների տակով կուզեկուզ էին գնում£ Աղաբեկը նույնպես սարերում էր, Մեղրաքերծից այն կողմ՝ Խասին խութում գտնվող իրենց հանդերում, և Շահումին ծանոթ հին տագնապը հանգիստ չէր տալիս նրան£ Ներս ու դուրս էր անում, վախվորած նայում երեխաներին, որոնք՝ մոր

տեսքից իրենք ևս սսկված, կուչ էին եկել£ Նրա աչքերի արցունքը չէր չորացել դեռ. տարվա սկզբին եղբայրը՝ Առուստամը, սայլի տակ ընկավ, մահացավ, իսկ գարնան վերջերին, գիշերը ժայռից մի վիթխարի բեկոր պոկվեց և քրոջ ընտանիքը՝ քրոջ, նրա ամուսնու և տասնչորս տարեկան որդու՝ Միշայի հետ միասին, թողեց տակը£ Դրանից երկու շաբաթ չանցած՝ կայծակից բռնկվեց բակի կաղնին, կաղնուց էլ խոտով լիքը մարագն ու տունը, թեպետ ողջ գյուղը հավաքվել էր, ձայներից զրնգում էր շուրջը, սակայն ոչինչ փրկել հնարավոր չեղավ. տունը մինչև վերջ այրվեց, մոխիր դարձավ£ «Դերունց Տանիելի աղջկա ոտքը կոտրվեր՝ տունս չմտներ, այ ժողովուրդ, – ծնկանը խփելով անիծեց սկեսուրը £– Ամենազոր աստված, էս ի՞նչ պատուհաս էր, որ դա բերեց մեր գլխին»£ Շահումը բարձրաձայն լաց եղավ£ «Աղջի, ամոթ է, – այս ու այն կողմից ասացին մեծահասակ կանայք, – խեղճն ի՞նչ անի, ո՞վ կուզենա, որ իր քորփեքը դռնեդուռ ընկնեն»£ Մուխանն ու կինը փոխադրվեցին աներոջ ներքնահարկը, որտեղ շատ չանցած, Մուխանը կաթվածահար եղավ, մահացավ, իսկ Շահումը՝ Աղաբեկի ու երեխաների հետ, ժամանակավոր եկան մոր մոտ, միչև աշնանը նոր տան հոգս կանեին, կամ կվերանորոգեին հորական տունը£ Սկեսրոջ խոսքերը գալիս, իրեն էին հասնում, երբեմն էլ որևէ տեղ պատահելիս, սկեսուրը ցուցադրաբար երեսը շրջում, թեքում էր ճամփան£ Շահումը մտամոլոր քայլում էր դեպի տուն՝ իր թիկունքին զգալով նրա չարագույժ հայացքները£ Սկեսուրը աչքով աչք չուներ

իրեն տեսնելու, – դա պարզ էր, բայց, ախր, ինքն ինչո՞վ է մեղավոր, ո՞րն է իր մեղքը և մի՞թե իր՝ Շահումի համար հեշտ է£ Մայրը նրան սիրտ տվեց. «Զրին ասել են՝ ինչի՞ ես էդքան վշվշում, ասել է՝ ընկերս քարն է£ Նրա կյանքը պալատներում է անցել, սիրտը չի դիմանում, հերսոտվել է, ուշադրություն մի դարձրու»£ Այդպես էլ կար՝ չդիմացավ. շուտով մահացավ սրտի հիվանդությունից£ Իբր այսքանը քիչ էր, թուրքերն էլ մի կողմից էին նեղում£ Խաչենի էն կողմում ու Շուշվա մոտերքում, ասում էին, մի քանի գյուղեր են վառել, մարդկանց անխնա կոտորել£ Քանի անգամ երեխոցով թողեցին գյուղը, պահվեցին Վարդանաբերանց սարերում, մինչև որ Հայաստանից դաշնակները լեռներով օգնության եկան£ Իբր դա էլ էր քիչ, հիմա էլ այդ անտեր հիվանդությունն էր տարածվել և աջ ու ձախ հնձում էր մարդկանց£

Ծանր մտատանջության մեջ՝ Շահումը հանկարծակի լարվեց՝ լսելով ինչ-որ մեկի ձայնը£ Նա արագ ելավ բակ և մնաց քարացած. ամուսինը կանգնած էր տնից ոչ այնքան հեռու, ցանկապատից այն կողմ և սարսափից ավելի այլանդակված, լայնացած աչքերով նայում էր իր կողմը£ Նա քայլ արեց՝ առաջ գնալու, սակայն ամուսինը ձեռքով նշան արեց չմոտենալ£

– Էդ զուլումն ինձ էլ կպավ, Շահում®– Նրա այտամկանները ձգվել էին, և նա ուժով էր պահում իրեն, որ չհեկեկա£– Ասացի չեմ հասցնելու վերջին անգամ տեսնեմ քեզ, լսեմ ձենդ® Տուն չեմ ուզում մտնել, կարող եմ վարակել,

դու էլ մի մոտեցիր£ Նամարդ դուրս եկա, երեխեքը թողեցի վզիդ® Էսօր հիսուն խորթն եմ հնձել®, – այդպես խոսքը կիսատ՝ ասես թիկունքից կրակեցին, նա միանգամից չոքեց, կծկվեց ու ընկավ գետնին£

Շահումը աղեկտուր ճչաց, տնից դուրս թափվեցին երեխաները£ Մայրը գարնանից անկողին էր ընկել, տանը պառկած էր, աղջկա ձայնից ցնցվեց, մի քանի անգամ կանչեց, բայց նրան լսող չկար£ Վազելով եկան հարևանուհիները՝ Մարիամը, Բաջին, քիչ անց վազեվազ եկավ նաև Մարգարիտը£ Եվ Շահումը հանկարծ սարսափով մտածեց այն մասին, որ ամուսինն ընկած էր այն նույն տեղը, ուր Նիկոլայն այն ժամանակ խոստովանեց իր սերը® Հարևանուհիների հետ միասին հենց այդպես շորերով, հին, քրքրված կարպետի մեջ փաթաթած, ամուսնուն քարշ տալով տարան գերեզմանատուն, հանձնեցին հողին, իսկ մթնալուսին, դեռ լույսը չծագած, փոքրերին՝ Արամին, Վաղարշակին, Հովհաննեսին ու Մարգոյին թողնելով հիվանդ մոր մոտ, Սահակին ու Գրիշային, որոնք արդեն տասը-տասներկու տերեկան մեծ տղաներ էին, վերցրած գնաց Խասին խութի սարերը՝ իրեց կիսատ արտը հնձելու£

Լուսնյակը մայր էր մտել, բայց աստղերը դեռևս լուսավորում էին արար աշխարհ: Ուր որ է՝լույսը կբացվի: Շահումը մանգաղով արագ-արագ հնձում էր արտը, արցունքները հոսում էին այտերն ի վար, սակայն նա կծում էր շուրթերը, զսպում իրեն, որպեսզի երեխաները չնկատեն

£ Ինչ-որ մեկը հեռու հանդում, լուսաբացի շամանդաղում ծորուն երգեց, և այդ երգն Շահումի սրտով էր, ասես նրա հոգու խորքից բխած.

Գնա՜մ, գնա՜մ, հեռանամ,
Էլ ուժ չունեմ՝ դիմանամ,
Մեռնե՜մ, մտնեմ գերեզման,
Գուցե դարդս մոռանամ®

…Կանգնեց արտում, ականջ դրեց, հեղձուկը դեմ առավ կոկորդում, շնչելը դարձավ դժվար£ Այս ու այնտեղ երգում էին թռչունները, մոտիկ ու հեռու հանդերից մարդկանց ձայներ էին լսվում, Շահումը նայեց որդիներին, որոնք, խոզանի մեջ հազիվ երևալով, քրտնքի մեջ աշխատում էին՝ մոր հնձածը խրձեր անելով ու դասավորելով իրար վրա£ Հույսի հեռավոր մի շող առկայծեց Շահումի հոգում, նա ինքն էլ սկսեց հավատալ, որ կկարողանա մեծացնել իր որբերին £ «Առստամը ողջ լիներ, կօգներ, հենարան կկանգներ, – մտածում էր Շահումը, – այդպես էլ մենք իրարից խռով՝ գնաց այս աշխարհից, չիմանալով, որ վաղուց ներել էի նրան՝ ինձ այսպիսի ճակատագրի արժանացնելու համար £ Ով գիտի, գուցե իմ լավն է ուզեցել£ Սահակը ևս, թե չգնար հեռու քաղաքներ՝ մի կտոր հաց վաստակելու, հիմա այստեղ կլիներ£ Նա ևս չէր թողնի, որ իր անբախտ քույրը մենակ տանջվի»£ Այո, կկարողանա մեծացնել, մտորում էր Շահումը, շարունակելով հնձել, աշխարհն այսպես չի մնա, Ճամփան ինչքան էլ որ երկար լինի, մեկ է, էլի վերջ ունի®

Կալերում կրկին հոնդաց տրակտորը, տրակտորը

չէր երևում, ծուխը գալարվեց այնտեղ, մերվեց երկնքի կապույտինէ Արևն ահագին բարձրացել էր, բայց օդը սառցասառն էրէ Ցանկապատի տակ սարդը ոստայն էր հյուսել, սարդոստայնից կախված ցողի աղամանդյա կաթիլները շողշողում էին արևի ճառագայթներիցէ Դուրս գալով բակից, ես իջա դեպի ձորը, այնուհետև ձորն ի վեր, գետի հակառակ ուղղությամբ, քայլեցի սարերի կողմըէ

Ի՞նչ քաղցր ու միևնույն ժամանակ ինչքա՞ն տխուր է հանդիպումը անցած օրերի հետ. ինչ-որ անհայտ վշտից, թե անձկությունից սիրտս սեղմվում էէ Քիչ ներքև, ինչպես իմ մանկութ օրերին, չի երգում այլևս ինձ ծանոթ առուն® Իմ հեռու-հեռավոր հիշողության մեջ զնգում է այդ առուն, մեղմիկ խոխոջում՝ ողջունելով ինձ, թիթեռնիկներին, հավքերին պես-պես և ծաղիկներին՝ սյուքից օրորվող®

Դու իմ մանկության սիրելի առու, որ զրնգալով, խնդուն խայտալով, վազում էիր ցած՝ քեզ հետ տանելով երազներն իմ ջինջ, ո՞ւր ես դու հիմի, ո՞րտեղ է մարել ձայնդ երգեցիկէ Հեռու-հեռավոր հուշերի խորքից ետ եկ, իմ առու, անանմոռանալի սիրելի ընկեր, ետ բեր օրերն իմ անհոգ ու ազատ ուրախ մանկության, ետ բեր օրերն իմ, իմ ընկերներին, թող կյանքը լցվի նրանց ձայներով՝ անհոգ, երջանիկ®

Այս ու այնտեղ, երփներանգ թևերը խաղացնելով արևի տակ, մի շամբուտից մյուսն է անցնում չարդը՝ ծղրտոցով կտրելով կանաչ մարգագետինը, պոչխաղուկները թռչում են ջրի վրայով և, նստելով քարերի վրա, գլուխները թեքած

նայում են փրփրած գետին ու տարուբերում են երկարուկ պոչերը:

Ես զուր չարթնացրի Լուսինեին, հետո պիտի նեղանա, որ իրեն չեմ վերցրել հետս£ Ծառերի արանքից երևում է խոր երկինքը£ Երկինքը շատ է հեռու երևում, և կապույտը նույնպես չափից դուրս շատ է, կարծես լեղակած է երկինքը £ Ասես ոչինչ չի փոխվել իմ մանկության ժամանակներից ի վեր£ Ահա այստեղ կրակ են արել, կրակի տեղը խոտը այրված է, դատարկ ծխախոտատուփ կա ընկած, լուցկու վառած հատիկներ կան, այստեղ, ահա ինչ-որ մեկը պառկել է, խոտը շրջված, կպած է գետնին£ Թվում է երեկ այստեղ էի, այս կրակն էլ ես եմ արել թվում է, ծխախոտի դատարկ տուփն ու լուցկու հատիկներն էլ իմն են. նույնն է, սիրտ ցավացնելու չափ ամեն ինչ նույնն է, անցած օրերն են, որ չկան այլևս£

Ձորեզրին մեկը արածացնում էր կովը և կամացուկ ինչ-որ եղանակ էր սուլում£ Նայեցի նրան£ Մեր հարևան Մխիթարն էր, բարձրացրի ձեռքս՝ ողջունելու£ Մխիթարը նման է հորը՝ կարճահասակ ու հաստլիկ, ոնց որ լցրած պարկ£ Զարմանալի է, մարդիկ ծերանալով ավելի են նմանվում իրեց ծնողներին£ Մխիթարը թեպետ կաղալով, բայց արագ, գայթուն քայլերով սկսեց մոտենալ, ես նույնպես ընդառաջ գնացի, բարևեցինք£

– Էն ով է, ասում է՝ մի հիշիր դու վայրերը գեղեցիկ պատանեկության. ո՞չ վայրերն են հիմի գեղեցիկ, և ո՞չ էլ դու ես էն պատանին£– Մխիթարը մի պահ ժպտում, հետո,

միանգամից լուրջ դեմք ընդունելով, ասում է.– Դե, պառավի համար ես եկել, պարզ է£ Ո՞նց է հիմի£

– Լավ չի£ Ասում է՝ էսօր վերջին օրս է, վաղը չեմ լինելու£

– Վա՜հ, մի տես է£-Մխիթարը զարմացած օրորեց ճերմակ գլուխը£– Մի տես ոնց է իմանում է® Լավ կնիկ էր, էդպիսիները հարյուր տարին մի անգամ են աշխարհ գալիս £ Քեզ պահեց, մեծացրեց, գնացիր քաղաք՝ սովորելու, ու մնացիր էնտեղ, հետո հորաքույրդ՝ Մարգուշան, ամուսնուց բաժանվեց, ասում են մի ավազակ շան տղա էր, բաժանվեց, երեխին բերեց, թողեց պառավի գլխին ու էն գնալն էր, որ գնաց® Նրա հույսն ու մխիթարանքը քեզանից հետո Սամվելիկը դառավ, նա էլ Աֆղանստանի կոիվներում զոհվեց, թե կորավ՝ էդպես էլ մնաց անհայտ® Մի հարցնող չեղավ՝ էդ զորքերն ինչի՞ մտցրին Աֆղանստան£ Մեր էս փոքրիկ Ղարաբաղում գյուղ չկար, որ զոհ չունենար էդ կռվում£ Դագաղներն էլ իրավունք չկար բացելու, պլոմբած բերում էին, պլոմբած՝ թաղում£ Էդպես էր£ Հարցնող չեղավ, բայց դե շահագրգիռ մարդիկ կային, այլապես էսօրվա օրը ամեն մեկը մի քանի հեկտար զավթած՝ գեներալները դղյակներ չէին կառուցի Մոսկվայի մոտ ու երկրի ամենալավ տեղերում՝ Սոչիում, Կիսլովոդսկում, Ղրիմում® Մեծ մերդ հավատացած էր, որ ողջ է թոռը, ասում էր՝ գերի է, ուզում է, բայց չի կարողանում գալ£ Քո հոր՝ Գրիշայի նման, որ պատերազմից տաս տարի հետո հայտնվեց միայն® Գյուղն ուրախացավ, շատ ուրախացավ, բայց դե, կարճ տևեց էդ ուրախությունը, Մարտունու մոտ, Կուրոպատկինոյում,

գարի բեռնած ավտոմեքենայով վթարի ենթարկվեց խեղճը £ Հերդ գերմանական մի քանի լագերներում էր եղել՝ Մայդանեկ, Բուխենվալդ, բայց, ասում էր, անմարդկային, գազանային էն դաժանությունը, որ սովետական լագերների քննիչներն ու առհասարակ էդ լագերների ղեկավար անձնակազմն էր ցուցաբերում մարդկանց նկատմամբ, գերմանական ոչ մի լագերում չի տեսել£ Քննիչների ու բանտապահների վարվեցողությունը բանտարկյալների հետ, ասում էր, այնպիսին էր, որ նրանցից շատերն ինքնասպան էին լինում կամ խելագարվում: Գերմանական լագերներից փախավ, ընկավ սովետի լագերները£ Տաս տարի ծառ կտրել տվեցին Սիբիրի ու Վորկուտայի սառնամանիքներում, եկավ իր տան-դռանը զոհվեց£ Էհ, էդպես եղավ£ Ում բախտը ծռվեց, նրա ձին ախոռում էշ կդառնա: Գոնե ճանաչե՞ց քեզ£

– Իհարկե£

– Հիշում եմ, մի մատ երեխա էիր, որ բերեցին մոտը£ Ձեռքիցդ բռնած գնում էր հանդ, իրիկունը հետը բերում£ Եթե ճիշտը կուզենաս, – Մխիթարը մի տեսակ մեղավոր ժպտաց, – նա քեզ և° հերություն է արել, և° մերություն£ Բա ոնց, մենակ պահեց, կրթություն տվեց£ Կնիկ կա՝ օխտը տղամարդ արժի£ Քու տատ էդպիսի կնիկ էր£ Ամեն մարդու բան չի է, որբին ջան ասող շատ կլինի, հաց տվող չի լինի£ Գործերդ խմբագրությունում ինչպես են, լա՞վ են£

– Ոչինչ£

– Մեկ-մեկ կարդում ենք գրածներդ® Դե որ գյուղում

ապրեիր, իհարկե, իր համար լավ կլիներ, չորս պատի արանքում մենակ ապրելը ծանր բան է£– Մխիթարը մտասույզ նայեց ինձ, փոխեց խոսքը£– Էհ, ինչ եմ ասում, մենակ հո դու չես, բոլորը հիմի փախչում են գյուղերից£ Կար ժամանակ էս շենը մարդկանցով լիքն էր՝ ջահել տղաներ, աղջիկներ, դպրոցում մոտ հինգ հարյուր աշակերտ էր սովորում£ Բայց երեք կարևոր բան կա, որ գյուղի մեջքը կոտրեցին£ Ասեմ. մեկը պատերազմն էր, երկուհարյուր հիսուն հոգի մասնակցեցին կռվին, որից տասնմեկը աղջիկներ, ի՞նչ ջահել-ջիվան տղերք գնացին ու ետ չեկան, մյուսը ֆեզոն էր, երևի չիմանաս, պատերազմից հետո, հիսունական թվականների սկզբներին գյուղերից քաղաք՝ Բաքու, Սումգայիթ, աշխատուժ էին հավաքագրում՝ գյուղի համարյա կեսը գնաց£ Մեկն էլ էս խոպանը. մարտի սկզբներին ամբողջ գյուղը՝ մեծ ու պուճուր, ոնց որ չվող թռչուններ, ճանապարհվում են Ռուսաստանի խորքերը, նոյեմբերի վերջերին, ձյունը դրած, գալիս են£ Ափսոս, հազար ափսոս, ավերվեց էս դրախտ գյուղը, մի նայիր է, բա էս ձևի տեղ կա՞ աշխարհում®

Կովը մտել էր արտը, Մխիթարը վիրավոր ոտքը քարշ տալով, գնաց՝ թողնելով ինձ ձորափին կանգնած£

Ձորն ի վեր բարձրացող նեղլիկ արահետով շարունակեցի ճանապարհս£ Վերևից, սաղարթների արանքից, մերթ ընդ մերթ ցոլցոլում է արևը, մոշահավերը պնդուկի ծառերի վրայից շատ ցածր, համարյա գետնին քսվելով թռչում, կորչում են անտառի մեջ£ Այս արահետով, որ մի ժամանակ

բանուկ ճանապարհ էր և հիմա ոտքի կարոտից է այսպես բարակել, մաշվել ու ծածկվել մասրենու ճյուղերով, Շահում Մեծ մորս հետ ինչքան ենք բարձրացել սարերը՝ խոտ բերելու, հասկ հավաքելու, կարտոֆիլ հանելու. «Անցած օրին օր չի հասնի», – մի անգամ ասաց Մեծ մայրս£ Այդ բառերի իմաստը ես լոկ հիմա եմ հասկանում, երբ այնքան ջրեր են հոսել այն օրերից ի վեր£ Անտառային լռություն է, ոչ մի ձայն, ծպտուն՝ բացի սերինոսների սրտացունց երգից® Հին ընկերներից գոնե մեկը լիներ® Այս օդը, այս չքնաղ վայրերը թողած նրանք բոլորն էլ քաղաքներում են, գյուղ են գալիս երկու-երեք տարին մի անգամ, կարևոր-կարևոր քայլում են գյուղի փողոցներով, ժամերով նստում են գյուղական ակումբի առջև՝ մինչև կլրանա աշխատանքային արձակուրդը, ու թողնում, գնում են®Էհ, իսկ մի՞թե նրանցից մեկն էլ ես չեմ£

Իսկ այստեղ շարունակում են բուրել ծաղիկները, արևը ծառերի արանքից ընկնում է բացատների վրա և, չնայած եղյամ է դնում արդեն սարերին, մյուս բոլոր ծաղիկները չնայած վաղուց են խամրել, բացատներում բացվում է վարդը՝ բարակ թերթերով, բարակ ոտքի վրա կանգնած կարմիր վարդը£

Ամառ է, տաք է, մեծ, դեղնակարմիր ճանճերը՝ կլոր աչքերով, անշարժ կանգնել են ոսկեփայլ օդում, նրանք իմ ոտնաձայներին ուշադրություն չեն դարձնում, բազմերանգ թիթեռները պարսերով իջնում են անասունների ոտնահետքերում հավաքված անձրևաջրերի

վրա, պարսերով բարձրանում են ջրերի վրայից, մի տեսակ թեք ճախրելով գնում, պտտվում, կրկին վերադառնում են նույն փոսերի վրա£

Հիշում եմ, ամռան մի շոգ օր Սամվելիկին վերցրի ինձ հետ, եկանք այստեղ£ Աղբյուրի մոտ գով էր, նստեցինք՝ ջրի քչքչոցը մեր ականջում, իսկ շուրջը՝ հավքի դայլայլ, մեղվի գվվոց, կկվի կանչ, հեռվում, ծառերի արանքից երևում էր գյուղը՝ փռված ժայռեղեն ձորալանջերին, երերուն մղեղի մեջ՝ գառան մայուն, խրխնջոց, ինչ-որ ծիծաղ, զանգի ղողանջ, շնահաչ, քամու թևին՝ գյուղից եկող բեկբեկուն ձայներ® Ութերորդ դասարան էր փոխադրվել Սամվելիկն արդեն, աղջկա մի լուսանկար ցույց տվեց£ «Լավիկն է, չէ՞», -ամաչելով ու նաև կարծես թե պարծենալով, հարցրեց նա £ Սիրունատես աղջիկ էր, մազերը կարճ կտրած, հրացայտ խաժ աչքերով£ «Լավիկն է, – հաստատեցի ես, – ո՞ւմ աղջիկն է»£ «Մեր ուսմասվարի, – ինքն էլ մի պահ ակնածանքով դիտելով նկարը, ասաց նա£– Ընկեր Թելյանի աղջիկն է: Յոթերորդում է սովորում, անունն էլ Ազնեսա£ Լավ անուն է, չէ՞»£ Ես ժպտացի£ Լուսանկարը, որ նա երևի հատուկ վերցրել էր՝ ինձ ցույց տալու համար, խնամքով դրեց գրպանը£ Պարզ երևում էր՝ սրտովն էր, որ գովեցի իր ընտրությունը£

Ես ծնկի եմ իջնում քարե գուռին՝ ջուր խմելու, գուռի հատակին ջուրը փոս է փորել և մանրիկ ավազները ծփանքի միջից դողում են£ Այն հեռու ժամանակներում, ետմիջօրեին, սարերից տուն վերադառնալիս, այստեղ կանգ

առան հոգնած, ուժասպառ եղած ջահել մայրն ու երկու որդին՝ Սահակն ու Գրիշան£

Ամառ էր ու շոգ էր, մանրիկ, սև մժեղները կախվում էին նովի բորբոսնող ջրի վրա, հետո բարձրանում, պտտվում էին թեղու ստվերում, սյունաձև փայլում£ Որդիների տեսքից՝ այդպես ընկճված, հնամաշ շորերին՝ կարկատաններ, ոտաբոբիկ, – Շահումի սիրտը ճմլվում էր£ Շահումը վարժարանում սերտած մի ոտանավոր հիշեց, որ ասես իր մասին էր գրված, այդ օրվա իր կյանքի մասին£

Լուսնյակը դուրս է եկել,
Աչքերիս լույս է եկել£
Լուսնի լույսով մանեմ ես,
Սիպտակ ոստեր անեմ ես,
Աղքատ օրով ու լացով
Որբեր պահեմ մանածով®

«Հա, ամեն ինչ կանեմ, – ասես ի պատասխան այդ ոտանավորի, արտասանեց նա, – գիշերը ցերեկ կանեմ, ճախարակով կպահեմ ձեզ, բայց չեմ թողնի, որ ուրիշի դռան վիզ ծռեք»£ Բերքն այդ տարի լավ էր, Սահակի ու Գրիշայի օգնությամբ հնձեց արտը, կալսեց, երեսուն փութ ցորեն ստացավ£ Երկու փութ տարավ ջրաղաց, մի շաբաթ նստեց Թուլունց ջրաղացներում, մեծ հերթ էր, կես փութ աղաց և շալակած վերադարձավ£ Երեխաները, տան մոտ, խաղով տարված, հանկարծակի նկատեցին մորը և վեցը միասին աղմուկ-աղաղակով, ճովողությունով եկան £ Անկարող լացը զսպելու, Շահումը ալյուրը շալակին,

կանգնել, սրտի անդիմադրելի մղումով նայում էր նրանց £ Ամենափոքր որդին՝ Հովհաննեսը, ինչ-որ բանով ընկավ, թավալվեց գետնին, բայց իսկույն վեր կացավ, վազելով եկան, փաթաթվեցին թուլացած ոտքերին, և Հովհաննեսը, պինդ գրկելով ոտքերը, ասաց. «Մամա, քեզանից սպիտակ հացի հոտ է գալիս»£ Իսկ Մարգուշան, ցեխոտ դեմքով, գետնին նսած նայում էր£ Եվ այդտեղ նույնպես Շահումը մրմնջաց. «Մեծացնեմ, տեղ հասցնեմ ձեզ ու էլ դարդ չունեմ»£ Սահակն ու Գրիշան արդեն դպրոց էին գնում, ամբողջ մի տարի տեր Վարդանի համար ձրի հաց էր թխում, որպեսզի սա պարապեր որդիների հետ, իսկ ձմռան երկար գիշերները նստած գորգ էր գործում£ Գարնան վերջերին, ճամփաները բացվելուն պես, Խաչենագետի էն կողմից, Բալուջա գյուղից եկան գորգ առնելու£ Տրամադրությունը լավ էր, մտածում էր էդ փողով Շուշի քաղաքից շորեր բերել տալ, երեխեքը տկլոր են£ Զուր պատրանքներ՝ փողը փոխվել էր, և դրանք արժեքազրկված փողեր էին. խաբել էին նրան£ «Դե, եթե ինձ նման անբախտ մարդուն էլ են խաբում, ինչ ասեմ, – լաց եղավ նա, – թող նրանց կանայք իմ օրը չընկնեն, թող նրանց արածն իմի նման ջուրը չտանի»£

…Կռունկների երամը անուշ կանչով անցավ անտառների վրայով£ Ես բարձրացրի հայացքս, սակայն ոչինչ տեսնել չկարողացա£ Ծառերը ծածկել էին երկինքը£ Ինչ-որ տեղ վայրի աղավնիները ղունղունում էին, փայտփորիկը, կրծքով չոր կեղևին կպած, տկտկացնում հա տկտկացնում էր£ Չէր երևում և կկուն, որ հաճարկենու կատարին

բազմած անդադրում կանչում էր, և նրա կանչը՝ նման սրտի զարկերի, թախծական էր կուսական անտառի համատարած անդորրի մեջ£

Հուշերի մեջ խորասույզ՝ կապույտ ստվերներով շղարշված ճանապարհով ես քայլեցի դեպի մոտիկ բլրակը, մտածելով այն մասին, որ այս վայրերի հետ ինձ կապող շատ քիչ բան է մնացել£ Այստեղից, բլրակի վրայից, ինչպես ափի մեջ, երևում է ձորի զառիվեր ափերն ի վար սփռված գյուղը£ Գյուղագլխին, ուղղակի ժայռին թառած, պահակում է հին գերեզմանատունը£ Ութերորդում, հին աշխարհի պատմության դասին, ամբողջ դասարանով գնացինք այնտեղ՝ պեղումներ կատարելու£ Մամռակալած քարերից մեկին, որ ընկած էր աղբյուրի մոտ՝ կիսով չափ խրված հողի մեջ, մեծ ճիգերով կարողացանք կարդալ՝ «Թիւն ՅԼ էր£ Ես նուաստ վարպետ Ներսէս շինեցի զաղբիւրս £ Յաղութս յիշեցեք»£ Իսկ թե դա ինչ էր նշանակում՝ այն ժամանակ ոչ մենք, ոչ էլ ընկեր Ղուլյանը՝ մեր դասատուն, կարգին վերծանել չկարողացանք£ Կոլխոզի ստեղծման առաջին տարիների նախագահ Մնացական դային՝ Մխիթարի հայրը, էշը նստած գնում էր սար՝ խոտ հարելու£ Մեզնից ով էր՝ կանչեց նրան£ Նա էշի գլուխը շուռ տվեց մեր կողմը և դեռ հեռվից սկսեց. «Էստեղ ի՞նչ եք անում, ո՞վ է իրավունք տվել, ես ձեր տիրումները»£ Աղջիկները փոթկացրին, ընկեր Ղուլյանը մինչև ականջները կարմրեց, իսկ մենք ծիծաղեցինք և, աշակերտական տետրում արտագրած մակագրությունը ցույց տալով նրան, ասացինք.

«Մնացական դայի, ոչ ոք չի հասկանում, գուցե դու իմանաս»£ Չնայած շոգին, Մնացական դային ականջավոր գլխարկով էր, գլխարկի մի ականջը կախված էր, մյուսը վեր տնկված, երկար քուղերը ծածանվում էին խոսելիս£ Ընկեր Ղուլյանն այտը ծռած, խորհրդավոր կիսաժպիտով նայում էր նրան՝ իբր, մարդ եք գտել բան հարցնելու£ Մնացական դային որսաց այդ հայացքը, սղալեց երկար բեղերն ու ասաց. «Ես ձեր տիրումները®Հայոց ՅԼ-ն դա մեր ութհարյուր ութանասունմեկ թվականն է£ Ասված է, որ էս աղբյուրը շինեցի ես, վարպետ Ներսեսս, ձեր աղոթքների մեջ հիշեցեք ինձ£ – Մնացական դային աչքի մեկը կկոցած նայեց ընկեր Ղուլյանին, քրքռալով ծիծաղեց ու հենց այնպես, ծիծաղի միջից ասաց.– Ղուլյան Վահան, բա քեզ դպրոցում ինչի՞ համար են ռոճիկ տալիս, ես քու տիրումները® Խելք բաժանելիս էստեղ ես եղել է, էստեղ» էշի քամակին խփելով, դարձյալ ծիծաղեց նա£ Մենք քիչ էր մնում կոտորվեինք հրճվանքից, իսկ ընկեր Ղուլյանը, կրկին մինչև ականջները կարմրած, շփոթված՝ չգիտեր նրա՞ն նախատեր, թե՞ մեզ վրա բարկանար£

Հին գերեզմանատնից ձախ՝ ներքևում, նոր գերեզմանատունն էր£ Շահում մեծ մորս հետ (նա աջ ձեռքում գավազանը, ձախով իմ ձեռքը բռնած) ՝ դանդաղ, այստեղ-այնտեղ կանգ առնելով, որպեսզի հանգստանար, գնում էինք այնտեղ£ Չորս բոլորը կանաչ խոտ, տեսակ-տեսակ ծաղիկներ, թռչունների երգ£ Մեծ մայրս գունատվում էր, շուրթերը սկսում էին դողալ£ «Գնա

էն կողմը ծաղիկ քաղիր, բեր դիր քարերին», -պատվիրում էր ինձ£ Ես գնում էի ծաղիկ քաղելու, իսկ ինքը գետնին չոքած երգով լալիս էր երկար՝ մի քարից անցնելով մյուսին£ Իրավ, ոչինչ չի փոխվել ասես£ Մեղրաքերծի իր բնից մի քարարծիվ պոկվեց և սրատես հայացքը ներքև, դանդաղասահ և վեհափառորեն սկսեց պտտվել կիրճի վրա£ Սալկուհոտից գյուղ իջնող սանդղանման քարքարոտ ճանապարհով, ուշք չդարձնելով ո°չ արծվին և ո°չ էլ մերթ ընդ մերթ հնչող նրա կռինչներին, մի երկու տղա բարձր վիճելով քշում էին իրենց ուլերը£ Հեռվում, Խաչենագետի կողմերից բեռնատար մի մեքենա էր բարձրանում դեպի գյուղ, փոշին, որ ասես թափքից է թափվում, երկար մնում է կանգնած ճանապարհի վրա£ Քիչ այն կողմ, ճանապարհի եզրին, ձի կար կապած, ձին պարանի երկարությամբ արածել է շուրջը և հեռվից այնպես է թվում, թե ձիու չորս բոլորքը գերանդիով հնձած է՝ մաքուր-հավասարաչափ£ Ամեն ինչ նույնն է, երկար տարիներ չեն անցել ասես£

Գյուղում կչկչում են հավերը£ Հավ թուխս դնելիս, մեծ մայրս կանչում էր ինձ£ «Արի, արի, ասում էր, ինքդ դեռ անմեղ, ձեռքդ արդար, ձուն դիր հավի տակ»£ Ձյունասպիտակ սառը ձվերը ես զգուշորեն տեղավորում էի թխսկանի տաք թևերի տակ, իսկ մեծ մայրս, դեղին մի ձու վերցրած, երեք անգամ դանդաղ պտտում էր բնի վրա՝ հետն էլ կամացուկ երգելով. «Օձը գա իր ճտերովը, լոկը գա իր ճտերովը. ամեն անասունք գա իր ճտերովը, դու էլ գաս քո ճտերովդ, լոխ սաղ, մեկը՝ լակ»£ Ասում էր, ձուն դնում

հավի տակ£

Ինձնից մի քանի քայլի վրա երգեց արտույտը£ Ես շրջվեցի ձայնի կողմը£ Փոքրիկ ու շականակագույն՝ մուգ պուտերով ու խալերով՝ արտույտը թեթև վազեց, շարունակ ետ նայելով և, քիչ անց ալոճենու թփուտների ետևից կրկին լսվեց նրա զրնգուն երգը£

Ես երկար նստեցի բլրակին, հետո իջա գյուղ և, տնամերձ բանջարանոցների արանքով ընկած նեղլիկ ճանապարհով, որ մի ժամանակ առվի դեր էր կատարում, գնացի տուն£

Լուսինեն դրսում, թթենու տակ, կրակը վառել, կաթ էր տաքացնում£ Գոհարն ու Լիլիթը չկային, նրանց ձայնը այգուց էր գալիս£ Մեծ մայրս նստած էր նույն դիրքում£

– Ոչինչ չի՞ կերել£

– Չի ուզում ուտել, – դժգոհեց Լուսինեն£– Ինքդ փորձիր, գուցե համաձայնի£

Այնտեղ, կալերում, մինչև հիմա չէին կարողանում գործի գցել տրակտորը£ Այն մեկ հոնդում, մեկ որոշ ժամանակ միալար աշխատելուց հետո՝ թրկ-թրկ-թրկ, լռում էր£ Կալերից եկող այն հոնդյունը մեծ մորս երևի տանում էր մի ուրիշ աշխարհ£ Ինչքան հուշեր կային՝ կապված այդ կալերի հետ£ Տարիներ են գալիս ու անցնում, բայց ամառային էն սև օրը, չէ, մոռանալ չի լինում£

…Անտանելի, հեղձացուցիչ տոթ էր, հատիկների ծանրությունից ճկված չոր, տաք խրձերը ընկերուհիների հետ միասին երկշարք փռեցին կալում, որպեսզի ընդմիջումից հետո բերեին եզներն ու սկսեին կամնով

կալսելէ Շահումը մանգաղով կտրում էր կեմերը՝ խրձերը բացում է Նա ինքն էլ չգիտեր, թե ինչու մի տեսակ ընկած էր տրամադրությունը է Հին ժամանակների ծանոթ տագնապը առավոտվանից սողոսկել էր նրա ներսը ու հանգիստ չէր տալիս է Եվ ինչի՞ց էր դա՝ հասկանալ չէր կարողանում է Որպես օդակավար՝ գործերը ոնց որ վատ չեն գնում, առավոտվանից կալսում էին առանց դադարի, շեղջը նկատելի իջել էր, կալսածի մի մասը էրանել էին, մի մասն էլ՝ սպասում էին իրիկվա դեմ քամին բարձրանա է Ամեն ինչ կարգին է, բերքն էլ, փառք աստծո, վատ չի, և° պետական պլանները կտան, և° աշխօրին ահագին կբաժանեն է Բայց, միևնույն է, սիրտն ինչ-որ վախ էր ընկել է Որտեղից-որտեղ միանգամայն անսպասելի հիշեց վաղուց անցած-գնացած այն օրը, երբ ինքը կես փութ ալյուր շալակած եկավ տուն, և երեխաները, հեռվից տեսնելով իրեն, վազեվազ եկան, փաթաթվեցին իրեն, Հովհաննեսը, մոր ծնկները պինդ գրկած, ասաց. «Մամա, քեզնից սպիտակ հացի հոտ է գալիս» է Աստված, տարիներն այս ինչ արագությամբ են թռչում, քարի փոքրը չի մեծանում, երեխի փոքրը մեծանում է, հրեն, աստված թող շատ չհամարի, երեխեքը մեծացել են արդեն է Քիչ է մնացել, շուտով բանակից կվերադառնան Սահակն ու Գրիշան է Ոնց որ գյուղից դուրս են եկել, մինչև հիմա էլ միասին են ծառայում՝ Մինսկ քաղաքում է Իր մտքով չէր էլ անցնում, թե Գրիշան կարող է գնալ է Նա, ախր, շրջկենտրոն՝ եղբորը ճանապարհելու էր գնացել է Հետո էնտեղ, զինկոմում խնդրել է իրեն էլ եղբոր հետ

ուղարկել, որովհետև, մեկ է, հաջորդ տարին էլ ինքն է գնալու, ավելի լավ է եղբոր հետ գնա ու եղբոր հետ էլ հետ գա£ Հարգել էին խնդրանքը, թույլատրել£ Սկզբում Շահումին շատ վշտացրեց այդ դեպքը, երկու օր շարունակ տեղը տեղ չէր տալիս, մի գլուխ լաց էր լինում, բայց այս ու այնտեղից սիրտ տվին, թե ավելի լավը դա է, շուտ գնացել է, շուտ էլ տուն կգա£ Ոչինչ, նրանք կգան, հետո էլ Արամն ու Վաղարշակը կգնան՝ հայրենիքին իրենց պարտքը կատարելու£ Մնում է Հովհաննեսը£ Դե, Հովհաննեսի բանը հեշտ է, դպրոցի աշքն է, հիմա էլ բարձր դասարանների աշակերտներից արտադրական բրիգադ է կազմել, օգնում է կոլտնտեսությանը£ Էն առաջին օրը դիրեկտորն ասաց. «Պրծավ թե չէ՝ ժամեր եմ տալու, թող դաս տա£ Հովհաննեսը համալսարան պիտի ավարտի, նրանը գիտությունն է»£ Քանի ձեռքումը ուժ կա, կօգնի որդիներն էլ կօգնեն, բա ո՞ր օրվա եղբայրներ են£ Հրեն Վաղարշակը ֆերմայում է աշխատում, ավելի շատ աշխօր է վաստակում, քան ինքն ու Արամը միասին վերցրած£ Չէ, դժվարը մնացել է ետևում £ Կգան որդիները, երկհարկանի տուն կկառուցեն՝ մի քանի սենյակներից բաղկացած£ Ահագին շինանյութ են կուտակել £ Իսկ հետո կամուսնացնի նրանց, կօգնի հարսներին, ինչով կարող է, ինչո՞ւ չպիտի օգնի®

Ամպրոպի խուլ ու հեռավոր ձայն լսվեց£ Աչքերը արևից կկոցած՝ Շահումը նայեց երկնքին£

– Էս տերը մեռածը հանկարծ անձրև չանի£– Մարգարիտը նույնպես, ձեռքը հովանի անելով ճակատին,

նայեց վերէ

Ինչպես փոքրիկ սառցակտորները ջրում, առնետի ճերմակության ամպամալանչները դանդաղ լողում էին երկնքում£

– Չէ, անձրև չի լինելու, – մտացիր արձագանքեց Շահումը £– Չե՞ս տեսնում՝ քամի չկա, – և դառնալով հին օրերի ընկերուհուն, անսպասելի ասաց.¬ Լսիր, քեզ հետ էլ է պատահու՞մ՝ մեկ էլ տեսար անհասկանալի ինչ որ բանից սիրտս սկսեց թրթռալ, միանգամից և օդն է պակասում, և ոտքերս են մի տեսակ թուլանում£ Էդ ինչի՞ց է£ Թարսի պես էլ, – շարունակեց նա, – մորս երազում տեսել եմ£ Ամեն անգամ մորս երազում տեսա թե չէ, մի բան պիտի պատահի £ Լույսը բացվելու վրա աչքս փակեցի և իսկույն տեսա. կանգնել ու մի տեսակ վախեցած նայում էր£ Կարծես թե ինչ-որ բան էր ուզում ասել ու սիրտ չէր անում£ Էդ էր, էլ աչքիս քուն չեկավ£

– Լուսահոգի մերդ սրբի պես կնիկ էր£– Մարգարիտը հոգնած շտկեց մեջքը£– Լսել եմ, ասում են, երազում ավելի լավ է՝ վատ մարդկանց տեսնես, քան լավ£

– Ինչո՞ւ, – էն կողմից հարցրեց Վարդանուշը£

– Ի՞նչ իմանամ£ Իբր թե՝ երազում լավ մարդ տեսնելիս՝ էդ օրը անպայման մի վատ բան է կատարվում£– Մարգարիտը նայեց Շահումին, փոխեց խոսքը£ – Էն ո՞վ է հիմի երազներին հավատում, բանիդ կաց£

– Հակառակի պես լեզուս կսկծում է- դարձյալ շարունակեց Շահումը£ – Բաքվից եղբորս՝ Սահակի

սպանության լուրը ստանալու օրն էլ էդպես էր, առավոտվանից լեզուս կսկծում էր, իսկ իրիկունը լուրը եկավ հասավ® Աստված, մի բան չպատահի երեխոցս£

Բրիգադավար Մնացականը գիշերն իր կովի համար խոտ էր հնձել Բուրջալում, և հիմա մարագի ստվերում պառկած, կոտրում էր աչքի քունը£ Նա շրջվեց կանանց կողմը£

– Ի՞նչ եք լեզուներիդ տալիս, – դժգոհ փնթփնթաց նա պառկած տեղից£ -Որ ամեն երազ ճիշտ լիներ, է՞, հազար անգամ մեր էս Մարգարիտին դուրս արած կլինեի ու Սիրանին բերած մեր տուն£

– Որտեղի՞ց ինձ էդպիսի բախտը, – կեղծ ափսոսանքով գլուխն օրորեց Սիրանը£

– Հողվես դու, մի սրան նայիր, – խաղի մեջ մտավ Մարգարիտը£– Ուր է, թե մի էդպիսի բան անեիր՝ հոգիս ազատվեր£ Երեխաների խաթեր մնում եմ, սա էլ կարծում է, թե մի բանի պետք է£

Սրանց կռիվն ամենօրյա կռիվ էր՝ սովորական դարձած, մի քանիսը ծիծաղեցին, բայց Մնացականը խոսքի տակ մնացողը չէր, ասաց.

– Այ աղչի, հազար մանեթով ձեռք բերած մարդուդ մի մանեթով ինչի՞ ես ծախում£

Սակայն Մարգարիտը չհասցրեց պատասխանել, շրջանցելով մարագները, գյուղխորհրդի նախագահ Աստատուրի մոխրագույն Հրեղենը քառատրոփ գալիս էր դեպի կալերը£

– Ոնց որ թե էստեղ է գալիս, – ասաց ինչ-որ մեկը £ Կանանցից նրանք, ովքեր նստել էին շեղջի ստվերում՝ քիչ հանգստանալու, վեր կացան£ Շահումը, ինչ-որ վատ բանի կանխազգացումից թրթռացող սրտով մնաց կանգնած, Մարգարիտը, ձեռքը հերթական խրձին՝ սպասեց® Մնացականը նույնպես ելավ տեղից և, չգիտես ինչու, մի տեսակ անհամբերությամբ, սկսեց նայել ճանապարհին£ Ձին կորած էր քափ ու քրտինքի մեջ, լկամը կրծելով վարգով անցավ կալերի միջով, բայց հեծյալը՝ կատարածու Աբգարը կարողացավ ձգել, պահել սանձը, կատաղած հովատակը, շուռ գալով մարդկանց կողմը, կանգ առավ՝ ղրճտացնելով դարչնագույն ատամներն ու անհանգիստ դոփելով տեղում£ Աբգարը, առանց ձիուց իջնելու, խզված ձայնով ասաց.

– Դե, ինչ ասեմ, այ ժողովուրդ, մեծ կռիվ է սկսվել, գերմանացի զորքերը հարձակվել են մեր զորքերի վրա£

Հավաքվածների վրա ասես կրակ մաղվեց£

– Վույ, լեզուդ լալկվի, Աբգար, – ձեռքերը ծնկներին խփելով անիծեց Մարգարիտը£– Էս ինչ խաբար բերեցիր£

– Աբգարն ինչ անի, այ քույրիկ, – խեղճացած արդարացավ կատարածուն£– Հրեն շրջանից հեռախոսները կոտրատում են£ Ասծատուրին հրամայել են մի մետր անգամ չհեռանալ գյուղխորհրդից£ Ինձ էլ ուղարկեց բրիգադիրներին հայտնեմ, որ իրիկունս միտինգ է, բոլորը պիտի ներկա լինեն£

Մի քանիսը սկսեցին բարակ ձայնով լաց լինել£

– Դե, ես գնամ մյուս բրիգադներին էլ ասեմ, – ասաց

Աբգարը և ձին վարգով դուրս բերեց երրորդ բրիգադի կալերից։ Շահումն ասես քարացել էր, ասես ոչինչ չէր լսում, և այն, ինչ ասվեց այստեղ, նրա գիտակցությանը չէր հասնում դեռ։ Նա մտամոլոր, ոչինչ չտեսնող հայացքով նայում էր շուրջը։

Մնացականը լրագրից հաստ գլանակ սարքեց, դողդոջ մատներով վառեց, բայց ծխել չհասցրեց, խեղդող հազը միանգամից բռնեց։ Լեզուն խողովակի պես դուրս հանած, երկար հազում էր, և գլխարկի քուղերը շարժվում էին հազի ցնցումներից։ Նրա որդին՝ Մխիթարը, նույնպես բանակում էր, և նա մի տեսակ վախ զգաց նայել կնոջը, ասես ինչ-որ բանում ինքը մեղք ուներ։ Մխիթարը սահմանից հեռու է, Ուրալից էն կողմ՝ Բառնաուլ քաղաքում է ծառայում, բայց, դե, դա ի՞նչ նշանակություն ունի, իր որդին ռազմաճակատից հեռու է, մյուսների որդիները հո էնտեղ են։ Նա սիրտ չարեց նայել նաև Շահումին, որի որդիները՝ Սահակն ու Գրիշան, սահմանային զորամասում են ծառայում հիմա, ամենայն հավանականությամբ, կռվի առաջին գծում են, կրակների տակ։ Մնացականը բարձրացրեց աչքերն ու վախեցավ՝ տեսնելով Շահումի՝ հողի գույն ստացած դեմքն ու անարյուն շուրթերը, որ շարժվում էին, սակայն որևէ բան արտաբերել անկարող էին։ Մարգարիտը քիչ դենը, գետնին չոքած լալիս էր՝ ձեռքերով ծածկած դեմքը։

– Աղջի, հավաքեք ձեզ, ամոթ է, ճշմարտությունը դեռ ոչ ոք չգիտի, ինչ իմանաս, կարող է նույնիսկ պրովոկացիա է, – քիչ անց մի կերպ արտաբերեց Մնացականը՝

ինքն էլ չհավատալով իր խոսքերինֆ– Ես դրանց, էդ գերմանացիներին տասնվեց թվականից եմ ճանաչում® Մի բան ասեմ ձեզ®– սակայն բրիգադավարի խոսքը մնաց օդում կախված, կանանցից մի քանի հոգի, ուղիղ կտրելով կարտոֆիլի դաշտը, վազեվազ իջնում էին դեպի գյուղֆ

Ամենից վերջում, անդադար հոսող աղի արցունքները լիզելով ու հազիվ շարժելով թուլացած ոտքերը, գնում էր Շահումըֆ Մնացականը երկար նայեց հեռացող կանանց ետևից, հետո մտախոհ թափ տվեց ձեռքը և, կալում մնացած կանանց հավաքելով, գնացին հացահատիկն էրանելուֆ Օդի նվազագույն շարժում անգամ չէր զգացվումֆ Մնացականը բաց արեց մարագների դարպասները, միջանցիկ քամի փչեց, և այդ քամու տակ էլ սկսեցին էրանելֆ

– Շուտ արեք, ձեզ մատաղ, – շարունակ կրկնում էր Մնացականը՝ ձեռքը ճակատին հովանի արած ստեպ-ստեպ նայելով գյուղի կողմըֆ– Շուտ արեք վերջացնենք, գնանք տեսնենք ինչ է գալիս գլուխներս, ես դրանց տիրումերը®

…Լուսինեն հավաքեց սեղանը ու մեծ մայրս այդպես էլ ոչինչ չկերավ, չխմեցֆ Ձեռքերը տեղաշորին, գլուխը հակած կրծքին, լուռ, անշարժ նստած էր նա՝ ասես իրոք անհաղորդ դրսի բոլոր ձայներինֆ

Տան ետևում, ճանապարհին, մարդատար մեքենայի հոնդյուն լսվեցֆ Ես շրջվեցի ետ՝ ներըմբռնողաբար զգալով, որ մայրս է եկելֆ Զարմանալի ու նաև աններելի է՝ ոչ մի զգացմունք չունեմ նրա հանդեպ՝ ո՞չ սեր, ո՞չ ատելություն ֆ Ինչո՞ւ է այդպես՝ հասկանալ, առավելին՝ բացատրել, չեմ

կարողանում£ Գուցե մանկութ օրերի ինչ-որ վիրավորանք պահ մտած ապրում է իմ մեջ£ Բայց չէ՞ որ նրան մեղադրելու հիմք նույնպես չունեմ£ Մի անգամ Շահում մեծ մորս ասացի. «Ես նրան որպես հարազատ ընդունել չեմ կարողանում, չգիտեմ ինչու, բայց դա այդպես է£ Նա ինձ համար միշտ էլ օտար է եղել£ Եվ եթե մեկը կա, որ ինձ հարազատ է՝ դու ես»£ Նրա համար, իհարկե, հաճելի էր իմ խոստովանությունը, բայց ցույց չտվեց, ասաց. «Այան քե մատաղ, գուցե նա մեղավոր չի, կյանքում միշտ չի, որ մարդ կարող է անել էն, ինչ սիրտն է ուզում, պատահում է, որ ամեն ինչ հակառակ մարդու ուզածի է դասավորվում»£ «Բայց չէ՞ որ նա մեզ լքեց, – առարկեցի ես, – և° ինձ, և° քեզ»£ Մեծ մայրս տարուբերեց գլուխը, դառը քմծիծաղ տվեց, ասաց. «Վայ էն մարդուն, որի կնիկը նախշուն կլինի»£ Նրա ասածն ինձ անհասկանալի էր, թեպետ վեցերորդ դասարանի աշակերտ էի արդեն£ Այնուամենայնիվ ասացի. «Հետո՞ ինչ»£ Մեծ մայս ժպտաց£ Բայց անուրախ ժպիտ էր դա£ «Էն, որ նախշուն կնիկը կարմիր խնձոր է, քարով տվող շատ կլինի, – ուշացումով արձագանքեց նա£– Մերդ գիտե՞ս ինչպիսին էր, երբ հորդ հետ եկան գերությունից£ Նա առաջին ռուսն էր մեր գյուղում, բոլորը ապշած նայում էինք£ Բոյը բարձր, մազերը շեկ, ծիծաղը բերանինք£ Որ խոսում էր, ոնց որ թե երգ էր ասում՝ էնքան դուրալի էր ձենը, չնայած լեզուն չէինք հասկանում£ Բայց դե շուտով ինքն արդեն մեզնից ավելի լավ էր խոսում հայերենք£ Հա, շատ էր սիրուն, սաղ գյուղի բերանը մնացել էր բաց®– Նա մի պահ մտածեց և

ասաց.– Իսկ հետո էնպես ստացվեց, որ կապվեց քաղաքից եկած էդ երկրաբանի հետ»£ «Իսկ դու ասում ես, թե գուցե մեղավոր չի», – դարձյալ առարկեցի ես£ «Մեղավոր է, թե մեղավոր չի, հիմի արդեն անցած է, – տխուր ասաց նա, – բայց էն ժամանակ շատ ծանր ազդեց ինձ վրա £ Գյուղի հիվանդանոցում բուժքույր էր, էդ երկրաբանն անտառում ծառի տակ էր ընկել, թե ինչ՝ ոտքը վնասված բերել էին հիվանդանոց£ Էնտեղ էլ կապվեցինք£ Լսեցի ու ոնց որ եռացած ջուր թափեն գլխիս£ Ուղիղ գնացի աշխատանքի տեղը£ „Տկլորը բարձրացավ սարը, սարի անունը խայտառակ արեց, ասացի£ Գնա որտեղ ուզում ես, ես հարյուր տարի նամուս չեմ պահել, որ դու երկու օրում ցեխոտես“£ Էդպես եղավ, էդ երկրաբանի հետ գնացին քաղաք£ Որոշ ժամանակ անց քեզ բերեց, թողեց ինձ մոտ»£

Իրոք, ինչո՞ւ է այսպես, ինչո՞ւ անկողմնակալ չեմ կարող վերաբերվել մորս£ Ո՞րն է նրա մեղքը£ Իսկ գուցե կանխակալ սառնությունը պայմանավորված է այն բանով, որ մեծ մորս գոնե մի անգամ չտարավ իր մոտ, չպահեց£ Բայց այս ինչի՞ մասին եմ մտածում£ Մի՞թե նա քաղաքում մնացող էլ£ Վերջին անգամ ինչքան հորդորեցի, ինչքան խնդրեցի՝ մինչև կարողացա մի քանի շաբթով տանել Բաքու՝ ինձ մոտ£ Տարա թե չէ, մի երկու օր չանցած սկսեց. «Ինձ տար գյուղ, այան անունիդ մատաղ, սիրտս դիմանում չի»£ Առավոտվանից իրիկուն նույնը. «Թե ուզում ես երկու օր շատ ապրեմ, ինձ տար իմ տուն, քեզնից էլ եմ գոհ, երեխաներիցդ էլ, կնկանիցդ էլ եմ շատ գոհ, բայց մնալ չեմ կարա, տար, թե

չէ մեռնելու եմ, գլխիդ հոգս դառնամ»£ «Կմեռնես, քաղաքում կթաղենք», – գրկելով ուսերը, կատակով ասացի ես£ «Չէ, չէ, չէ, տար, այան մատաղ, թե ինձ հարգում ես, տար», – ասաց նա և մեղմաձայն մրմնջաց.

Որ մեռնեմ, տարեք Արշաձոր թաղեք,
Թող մոտս լինեն իմ լեռ ու սարս,
Էհ, ի՜նչ արած, թե տար չունի քարս
Էնտեղ են թաղված ախպերս, մարքս®

Նրա սիրտն, այո, նրան քաշում էր գյուղ, այնտեղ ամեն մի քար, ամեն մի ծառ հիշեցնում էր որդիներին£ Նա ուզում էր այնտեղ լինել, միայն այնտեղ, հուշերի հարազատ աշխարհում®

…Վերջին անգամ® Վերջին անգամ որդիներին՝ Վաղարշակին ու Արամին, ռազմաճակատ ճանապարհելուց հետո գնացին կալեր, կալսեցին մինչև ուշ, Հովհաննեսն էլ իր հետ էր, Հովհաննեսը եզներն արձակեց կամներից, Մնացականը եզները քշեց հանդ, իսկ ինքը կանանց հետ քայլեց դեպի տուն՝ շարունակ նայելով դեպի ետ, դեպի Խաչենագետն ի վար իջնող ճանապարհը, որը հեռվից, աստղալույսի տակ, սպիտակին էր տալիս և ասես գետ լիներ, ուր հոսում էր Խաչենին զուգահեռ և ոլոր-մոլոր գնում, կորչում էր մթին ձորերում£

Այդ ճանապարհով գնացին իր որդիները, և որտե՞ղ են տեսնես հիմա նրանք. մեկնե՞լ են արդեն, թե դեռևս այնտեղ, շրջկենտրոնում են£

Կանայք այդ օրը շատ էին աղի արցունք հեղել, հիշելով

կռիվ մեկնած իրենց հարազատներին, շատ էին խոսել, հուսադրել, սիրտ տվել իրար, այժմ լուռ քայլում էին, և նա գիտեր՝ նրանցից յուրաքանչյուրին հիմա նույն միտքն էր մտատանջում՝ շուտ կվերջանա՞, արդյոք, պատերազմը £ Նա նույնպես քայլում էր լուռ, գլխահակ, ինչպես ծանր բեռան տակ՝ քիչ առաջ թեքված, և հակընդդեմ, տագնապահույզ մտքերը հանգիստ չէին տալիս նրանք£ «Որտե՞ղ են, տեսնես, Գրիշան, Սահակը, – շվար մտածում էր նա, – էս հանդ ու սարերին, ազատության սովոր խեղճ երեխեքս ի՞նչ են անում հիմի էնտեղ՝ կրակի ու մահվան բերանում£– Աչքերը լցվեցին, ճանապարհը մշուշի մեջ երերաց£– Իսկ Արամս ու Վաղարշակս, – մտովի շարունակեց, – նրանցից ի՞նչ կռվող, երեկվա անմեղ, էս աշխարհի շառ ու խերին անտեղյակ միամիտ երեխեք են, նրանք ի՞նչ գիտեն, թե ինչ ասել է կռիվ ու մահ»£

Շահումը նայեց առջևից քայլող որդուն, և այն մտքից, որ նրան նույնպես կարող են տանել ճակատ, սարսռաց£ «Հովհաննեսին դեռ չեն տանի», – ինքն իրեն սիրտ տվեց, իսկ մինչ էդ՝ մյուսներն էլ կգան£ Արամն ասաց, լեզվիդ մատաղ, բալաս, ասաց, որ կարող է պատահի դեռ ճակատ չհասած՝ պատերազմը վերջանա, և իրենք ետ գան տուն £ Չէ, Հովհաննեսին չեն տանի£ Ժամանակն ի՞նչ շուտ է անցնում£ Էն ե՞րբ էր, գարունը նոր-նոր բացվել էր, տան պատի տակ, տաք արևի մեջ նստած, զնգուն ձենով ոտանավոր էր սովորում.

Արագիլ, բարով եկար,

Հայ, արագիլ, բարով եկար£
Դու մեզ գարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր®

Հա, էդ մեկը որ ճիշտ էր, ուրախ սրտով, երջանիկ ապրում էին՝ իրենք էլ չիմանալով, որ երջանկությունն էլ հենց էն է, որ սոված լինես, թե կուշտ՝ միայն թե երեխեքդ ողջառողջ մոտդ լինեն£

Հովհաննեսին հետևելով՝ աննկատելի անգիր էր արել այդ ոտանավորը, մտքում շարունակ արտասանում էր՝ ինքն իրեն ժպտալով£ Ակամա մտաբերեց գարնանային այդ անուշ օրը. Էմման՝ աշխույժ, ուղղակի կրակի կտոր, իրենց բակում, ծառի ետևում կանգնած, հայելու կտորով արևի շողքը գցում էր Հովհաննեսի աչքերին, ծիծաղում£ Այն ժամանակ ժպտաց՝ երկար դիտելով նրանց անհոգ խաղն ու ներքուստ ուրախանալով, որ ընկերուհու՝ Մարգարիտի աղջիկը, դուր է գալիս իր որդուն£ «Բարով իրար արժանանան ու բախտավոր լինեն», – շշնջաց նա այն ժամանակ£

Հիշելով այդ օրը, Շահումը հառաչեց, օրորեց գլուխը£ Իրոք, էդ ե՞րբ էր, ասես տաս տարի առաջ էր, այնինչ շատ-շատ՝ երեք-չորս տարի է անցել£ Չէ, ժամանակը կարծես չի գնում, փախչում է£ Ձենն էլ է փոխվել՝ մտածեց նա կրտսեր որդու մասին. տեսնողն էլ կկարծի տղամարդ է, բայց ի՞նչ տղամարդ, երեկ չէ էն մյուս օրվա երեխան է, պարզապես հեր չունի, իսկ առանց հեր երեխեքը շուտ են հասունանում£

Առջևում, ծառերի արանքից, երևաց գյուղը՝ անհյուրընկալ

ու լքված£ Ճանապարհի երկու կողմին, ճանապարհի ամբողջ երկարությամբ, առանց հոգնելու, միալար ճռճռում էին ծղրիդները, խոտերի կամ թփերի մեջ կանաչավուն լույսով փայլկտում էին կայծոռիկները՝ թարթելով իրենց կախարդական լապտերիկները£

Շահումը կրկին շրջվեց, մի պահ նայեց ետ, ուր ամեն ինչ սուզվել, կորել էր խավարի մեջ, բացի հեռավոր Կաչաղակաբերդից, որ իր անհասկանալի բարձունքից հսկում էր գիշերային տագնապալից անդորրը£

Հովհաննեսին, չէ, չեն տանի՝ մրմնջում էր Շահումը® Նա չգիտեր, որ շուտով, շատ շուտով այս մեկին էլ կտանեն, և ինքը կմնա մենակ, մեն-մենակ դատարկ տան մեջ՝ կարոտ աչքն իր հինգ որդիների ճանապարհին®

…Այգուց դուրս նետվելով ու ճանապարհին, կոատուկների տակ կուչ եկած ննջան հավերին թոցնելով, վազեվազ եկան Գոհարն ու Լիլիթը, և, ուշադրություն չդարձնելով ինձ վրա, գնացին դեպի տան ետևը, որտեղից գալիս էր արդեն մորս ձայնը£ Ես նույնպես քայլեցի ճանապարհի կողմը£ Այնտեղ, ճանապարհի եզրին, մեքենայի մոտ զրուցում էին Մխիթարն ու իմ երկրաբան հերացուն£ Առանց երեխաների էին եկել£ Մայրս գալիս էր աղջիկներիս թևանցուկ, նրանք, իրար ընդհատելով, ինչ-որ բան էին պատմում նրան և մայրս, գլխով անելով, ժպտում էր£ Մի քայլ ետ՝ նրանց ետևից գալիս էր Մխիթարի կինը՝ Սաթենիկը£ Սաթիկը փոստում հեռախոսավարուհի է, նրանց, հավանաբար, նա է հայտնել մեծ մորս մասին£

– Մի տես ինչ գեղեցկուհիներ են, – ասում է մայրս՝ գորովանքով մեկընդմեջ նայելով Գոհարին ու Լիլիթին£– Զգույշ կաց քաղաքում չփախցնեն£– Ինչպե՞ս ես, որդիս£

– Ոչինչ, – պատասխանում եմ£– Դու ինչպե՞ս ես£

– Ինչպես տեսնում ես£– Ժպիտը, ինչպես հովի ալիքից ծնված ծփանքը՝ ծովում, տարածվում է դեմքին£– Գիտես, վերջերս մի գիրք եմ կարդացել, այնտեղ հանդիպեցի այսպիսի մի մտքի. ոչ ոք չի զգում, թե ինչպես է անցնում ջահելությունը, սակայն ամեն ոք զգում է, երբ արդեն այն անցել է£ Բայց տարիքի, ինչպես նաև երաժշտության մասին, ասում են, չպետք է բարձր խոսել, ճի՞շտ է դա£

– Երևի, – անորոշ թոթվում եմ ուսերս£

– Լսել եմ, ասում են՝ հասել ես մինչև Հնդկաստան, հաջողվե՞ց մի բան իմանալ Սամվելի մասին£

– Ոչ, – կարճ պատասխանեցի ես£

Մայրս թեթևակի օրորեց գլուխը, ասաց.

– Մարդկության ողջ իմաստությունը պարփակված է երկու բառի մեջ ՝սպասել և հուսալ:

Լուսինեն կարճ շրջազգեստով, թեթևաքայլ գալիս է մեր կողմը, և մորս ժպիտը հիմա նրան է ուղղված£ Ես քայլում եմ տղամարդկանց ընդառաջ£

Մխիթարը հերացուիս կողքից քայլելով, ոգևորված ինչ-որ բան էր պատմում նրան, նա էլ անտարբեր գլխով էր անում՝ մեկ նայելով դիմացի լեռներին, մեկ շրջվելով ետ, երկար դիտելով սարերն ի վար գլորվող ճանապարհը£

Հասնելով նրանց, լուռ սեղմեցի հերացուիս ձեռքը,

սպասելով Մխիթարի պատմության ավարտին£

– Ձուկն ինչ է, ձուկն իր ձուկ տեղով լողում է մի մատնաչափ խորություն ունեցող գետում, փորը հատակին քսելով, կողքերը քարերին տալով լողում է ու չկա մի ուժ, որ կարողանա ետ շրջել նրան դեպի ծով£ Որովհետև ձկնկիթից նա այնտեղ է ծնվել և պետք է, որ այնտեղ էլ լույս աշխարհ գա նրա սերունդը£ Քո մասին եմ, է, պատմում, – շրջվելով իմ կողմը, անսպասելի ասաց Մխիթարը կարմրելով£– Տեսա, թե ինչպես էիր առավոտը գնում դեպի սարերը ու մտածեցի՝ ուր էլ լինի, որտեղ էլ որ ապրի, էս հանդ ու ձորերը նա իր սրտից հանողը չի£

– Երկրաբանական մեր արշավախմբի հետ այս սարերում շատ եմ ման եկել, և դա ոնց որ երեկ եղած լիներ, – նայելով սլացքի մեջ քարացած հեռավոր լեռների կողմը, ասաց հերացուս£ Նա լռեց, լռեց, ասաց.– Էհ, իշքան մեծանում ենք, էնքան ժամանակն ավելի արագ է թռչում, ու մենք ավելի հաճախակի ենք մտածում անցած օրերի, ջահելության մասին£

Մխիթարը օրորեց գլուխը, քմծիծաղով ասաց.

– Ողորմածիկ հերս ասում էր, որ ծերության ողբերգությունը մենակ էն չի, որ մարդ ծերանում է, այլև էն, որ հոգով մնում է ջահել, նա ասում էր նաև, որ երբ մարդ հասակն առնում է, աչքերը ճակատից տեղափոխվում են ծոծրակի վրա, և նա սկսում է ետ նայել ու ոչինչ չտեսնել, այսինքս՝ ուզում է ասել, որ գալիս է ժամանակ, երբ մարդ դադարում է հույսերով ապրելուց և ապրում է միայն

հուշերով£

– Հա, երևի էդպես է, – անորոշ արձագանքեց հերացուս և, շրջվելով դեպի Մխիթարը, հարցրեց.

– Մխիթար, էլի բանաստեղծություն-բան գրո՞ւմ ես, թե՞ թողեցիր£

– Մեկ-մեկ գրում եմ, շրջանային թերթը տպում է£ Ոչ մի բառ չեն փոխում, ոնց որ գրում եմ՝ էնպես էլ տպում են£ Բայց դե փող քիչ են տալիս£

– Այ մարդ, հարյուր տարվա պահեստապետ ես, կոլտնտեսության ամբողջ ունեցվածքը ձեռքիդ, փողն ինչի՞դ է պետք£

– Կարծում ես մի շատ ուրա՞խ եմ, որ պահեստապետ եմ, – Մխիթարը շուրթերը ծռմռեց£– Ես գործ անող մարդ եմ, գործից չեմ վախենում: Ամենևին: Գործ անողի համար ամենածանր բանը անգործ մնալն է£ Ոտքս վիրավոր չլիներ, վաղուց թողել էի պահեստը£ Ի՞նչ եմ ստանում, կգնայի ֆերմա, էնտեղ շատ են ստանում£

Հերացուս աչքով արեց ինձ, ասաց.

– Մխիթար, էդ ճի՞շտ է, որ ասում են, իբր թե, մարդիկ են եղել, որ կռվի թունդ ժամանակ թաքուն կրակել են իրենց ձեռքին կամ ոտքին£

Մխիթարը, իբր, երկար մտածում էր£

– Թշնամու խոսք է, – ի վերջո ասաց նա£– Չի կարող պատահի£ Ախր, ո՞վ կհավատա£ Մեկն էլ դու, կհավատա՞ս £

– Ե՞ս® Ինչո՞ւ չեմ հավատա, – խնդմնդաց հերացուս, և,

Մխիթարի հետ իր գործն ավարտած համարելով, դարձավ ինձ.– պառավը ո՞նց է, ո՞ղջ է, թե արդեն գործուղման է մեկնել£– Դարձյալ ծիծաղեց՝ այս անգամ իր անհամ սրախոսության վրա, իսկ հետո լրջանալով ասաց.– Ի՞նչ աստվածային կնիկ էր® Նա մեռնելուց չպիտի վախենա, դժոխքն էս կյանքում տեսել է արդեն£

– Իմաստունի հետ քար քաշիր, հիմարի հետ փլավ մի կեր, – հերացուիս հեռանալուց հետո դժգոհ փնթփնթաց Մխիթարը£– Հիմար մարդը լավ կանի, որ չխոսա, բայց, դե, եթե էդքանն ընբռնի, էլ ինչի պիտի խոսա: Խելոք մարդը երկու բան գիտի՝ շատ մտածել, քիչ խոսել£ Մարդ պիտի ինքն իրեն հարգի, որ ուրիշներն էլ հարգեն£ Էդպես է, մարդ որ հիմար ծնվեց, հիմար էլ կմնա, մեկը չի էլ հասկանում, թե վարդն ինչու է բուրում, մյուսը խոտ ու ծաղկից դեղ է սարքում, բուժում մարդկանց£ Աչքերը բռնի հորս արածը£ Դա որ անտառում ընկել էր ծառի տակ, ոտքը փշրել, ո՞վ է բերել հիվանդանոց£ Հերս է բերել սայլով£ Բա՞® Մարդ կա, մի կոպեկի լավություն անես, մինչև կյանքի վերջը կհիշի, մյուսին կյանքդ էլ տաս՝ չի գնահատի£ Աշխարհն էդպես է ստեղծված, ոչինչ չես փոխի® Խելք բաժանելիս բացակա է եղել£ Հիմար-հիմար խոսում է: Մեկն ասի՝ տեսե՞լ ես կրակելիս® Բայց մի բանում ճիշտ էր, – ամենայն հավանականությամբ՝ խոսակցության թեման փոխելու նպատակով, ավելացրեց.– Ձեր Շահում աքան էս կյանքում իր բաժին դժոխքն իրոք տեսել է արդեն, էն աշխարհում վախենալու բան չունի£ Բա

ոնց, տեսել է£ Գյուղում Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձան էր կանգնեցվել, շրջանային «Բարեկամություն» թերթում գրել եմ էդ մասին, էն որ վերևում, դպրոցի մոտ կանգնած է, էդ հուշարձանը£ Ուրեմս, հուշարձանը բացվեց շատ շուքով, Շահում աքան, որ մարդկանց մեջ մինչև էդ լուռ, շուրթերը սեղմած գունատված կանգնած էր, հանկարծ չոքեչոք, ինչպես առաջները գնում էին սրբի դուռը, էդպես չոքեչոք մոտեցավ հուշարձանին, գլուխը դրեց պատվանդանին ու դառը լաց եղավ£ Իսկ հուշարձանին, տեսել ես, պատերազմում զոհված նրա չորս որդիների անուններն էին՝ Աբրահամյան Սահակ, Աբրահամյան Արամ, Աբրահամյան Վաղարշակ, Աբրահամյան Հովհաննես® Հովհաննեսի մասին հրամանատարությունից պաշտոնական նամակ կար, շրջանային զինկոմը կարդաց նամակը, ուր գրված էր, որ մարտական առաջադրանքների կատարման ժամանակ 1945-ի մայիսի 7-ին հերոսաբար զոհվեց գվարդիայի ավագ լեյտենանտ, տանկի հրամանատար Հովհաննես Աղաբեկի Աբրահամյանը£ Գրված էր նաև, որ նրան տրված Կարմիր դրոշի շքանշանը, Կարմիր աստղի շքանշանը և մի շարք մեդալներ հետմահու ուղարկվել է Մարտակերտի զինկոմիսարիատ: Վերջում հրամանատարությունը հայտնում էր, որ ծնողները պետք է հպարտանան այդպիսի խիզախ որդի դաստիարակելու համար£ Բա, էդպես էր® Շահում աքան ամեն օր, պատկերացնո՞ւմ ես, ամեն օր լուսը-լուսին գալիս էր

հուշարձանի մոտ, ավլում, սրբում էր շուրջը, թաց շորով մաքրում հուշարձանի փոշին£ «Իմ տունն էստեղ է, ասում էր, իմ երեխեքն էստեղ են»£ Հետո քարի մոտ նստած գուլպա էր գործում, ինչպես որ անում էր Հայրենական Մեծ պատերազմի օրերին և ծարավ անցորդներին ջուր էր տալիս իր հին մեծ փարչով, որով խմում էին որդիները® Հետո Սամվելիկին բերեցին, մի մատ երեխա էր, դպրոց էլ չէր գնում դեռ, վիշտը ոնց որ մի քիչ մեղմացավ, կյանքը կարծես թե նոր իմաստ ստացավ, սկսեց թոռան հետ միասին ապրել, ասես նորից ջահելացել էր, բայց դե, աստված էդ էլ երևի շատ համարեց® Է՞հ, կյանք ասողի հերն անիծեմ£ Գյուղում գիտե՞ս ինչ են ասում£

– Ի՞նչ են ասում£

– Ես խոսքը մարդու ճակատին ասող եմ, դրա համար շատերը չեն սիրում ինձ: Ասում են, որ ուզենայիր՝ կազատեիր բանակից, չէիր թողնի, որ տանեին Աֆղանստան£ Մեծ-մեծ մարդկանց հետ ես նստում-վերկենում, նրանց մի խոսքը բավական էր, որ նրան Աֆղանստան չուղարկեին£

…Այնտեղ, Սուրաթում, երբ Փեշավարից հետո կարծես թե հաջողվել էր գտնել Սամվելի հետքը, ես շարունակ այդ մասին էի մտածում£ Գուցե հենց դա էր հիմնական պատճառը՝ սեփական մեղսագիտակցության զգացումը, որ իսկույն համաձայնեցի կատարել Շահում մեծ մորս խնդրանքը՝ գնալ ու փնտրել Սամվելիկին£ «Գետնից մինչև երկինք շնորհակալ կլինեմ, – ասաց նա, – գնա գտիր,

սիրտս ասում է, որ գնաս՝ գտնելու ես»£ Չգիտեմ ինչու, ես նույնպես հավատացած էի, որ ողջ է նա, որովհետև լուրեր էին պտտվում, որ ինչ-որ տեղ, աֆղանական Ծինդանդ գավառի ղշլաղներից մեկում տեսնող է եղել, թե ինչպես են մոջահեդները նրան՝ ծանր վիրավոր, գերի վերցրել £ Այդ հավատն ինձ Աֆղանստանի վրայով տարավ մինչև Փեշավար՝ սովետական հյուպատոսություն, ուր հյուպատոսության զինվորական կցորդը՝ քաղաքացիական հագուստով, անչափ բարի ռուս մի մարդ, հաստատեց, որ, համաձայն հետախուզական տեղեկությունների, այո, հնդկական Սուրաթ քաղաքի մոտերքում կա մի հայ՝ Հերաթի հարյուրմեկերորդ մոտոհրաձգային գնդի մեր նախկին զինվորներից, բայց թե ինչպես է անունը, դժբախտաբար, ասել չի կարող, նախ, որ ահագին ժամանակ է անցել, գերիների հարցերով իրենք չեն զբաղվում այլևս, երկրորդն էլ՝ աֆղանական պատերազմում կորած մեր զինվորները վախից թաքցնում են իրենց իսկական անուն-ազգանունները, շատերը հավատափոխ են եղել, դժվար թե հաջողվի որևէ մեկին գտնել: Ես ուզում էի հետ դառնալ այդտեղից, բայց այդքան որոնելուց հետո որոշեցի այդ տեղեկությունը ևս ստուգել. գուցե իրո՞ք Սամվելիկն է այդ հայը£ Փեշավարից մեծ դժվարությամբ հասա մինչև Դելի, այդտեղից Սուրաթ՝ գնացքով մի օրվա ճանապարհ էր£ Ես գնացքի պատուհանից նայում էի թեյի ու ծխախոտի անծայրածիր կանաչ տնկադաշտերին, մեկը մյուսին հաջորդող Ջայպուր, Ահմեդաբադ, Ուդայպուր,

Աշմեր, Բհարուչ քաղաքների մրջնանոց հիշեցնող կեղտոտ կայարաններին՝ էժանագին ձիթայուղի անդուր հոտով, մուրացիկ տկլոր երեխաներով, և շարունակ մտածում էի Սամվելիկի մասին£ Վերջապես կհաջողվի՞, արդյոք, գտնել նրան, թե իմ այս վերջին չարչարանքը նույնպես իզուր է£

Կեղտի, ծխի ու մրի մեջ կորած բազմամիլիոն Սուրաթում ես տեղավորվեցի կայարանամերձ «Ալ-Սաուդի» հարմարավետ հյուրանոցում և սկսեցի որոնումները£ Հաջորդ օրվա վերջին քաղաքային թերթերից մեկի խմբագրատանն ինձ ասացին, որ այստեղից ոչ հեռու, Բոմբեյ տանող ճանապարհից աջ, ծովափնյա Ալևա փոքրիկ մի ավանում Շեյխ Աբդուլլա անունով մի հայ է ապրում և որ մարդ կա՝ ոստիկանության հետ կապված, որը, վարձատրության դեպքում, իհարկե, վաղը նրան կարող է բերել ինձ մոտ£

Մինչև լույս ես չկարողացա աչք փակել£ Մեքենաների ու երկանիվ ռիկշաների անվերջ հոսքն ու նրանց զիլ ազդանշանները չէին միայն իմ անքնության պատճառը. ես դարձյալ մտածում էի՝ մի՞թե իսկապես կգտնեմ Սամվելին և կտանեմ տուն՝ հուրախություն մեր Մեծ մոր ու մեզ բոլորիս £ Վերջապես կողքի պուրակից եկող թռչունների դայլայլով՝ ճրնկ-ճրնկ, ճրնկ-ճրնկ, հետո ֆյութի-ֆյութի-ֆյութի, բացվեց օրը, մի երկու ժամ ևս անցավ, և, ահա, վերջապես ծեծեցին դուռը£ Հուզմունքը միանգամից համակեց ինձ, շնչելը կարծես թե դառավ անհնարին£ Ես բաց արեցի դուռը և մնացի քարացած. Սամվելիկն էր կանգնած իմ դեմ՝

չալմայով, անչափ նիհար, արևախանձ գունատ դեմքով, երկար միրուքով, ոտից-գլուխ սպիտակ երկար շորով£ Ես շնչահատ առաջ մղվեցի՝ նրան իմ գիրկն առնելու, բայց նա սառը անցավ իմ կողքով և, կաղալով շրջանցելով սենյակի կենտրոնում դրված սեղանը, նստեց բազմոցի ծայրին£

– Գիտե՞ս ինչքան եմ ման եկել քեզ, – ասացի ես, որոշ չափով ընկճված ու շփոթված նրա սառը վերաբերմունքից£– Որտեղ ասես, որ չեմ եղել: Թերմեզով անցել եմ Մազարի-Շարիֆ, այնտեղից Կանդազար, Հերաթ, իսկ Փեշավարից՝ ուղիղ Պակիստան, տեղեկություններ հավաքելով քո հետքով հասել եմ Ֆեյսալաբադ£ Շատ տեղերում եմ որոնել քեզ, Սամվելիկ, շատ տեղերում, և ահա այստեղ եմ՝ Սուրաթ քաղաքում: Սովետական դեսպանատանը՝ Դելիում, ինձ շատ օգնեցին քո հարցում, և ահա այստեղ եմ, – նորից կրկնեցի ես, – վերջապես գտել եմ քեզ®

Նա վհատ ու սառը նայում էր£ Սմքած շուրթերի ոչ մի շարժում, ոչ մի արձագանք£

– Վերջապես գտա քեզ, – դարձյալ հուզված կրկնեցի ես£– Արդեն հույս չունեի համարյա, թե կգտնեմ£ Այո, հույս չունեի, բայցև միաժամանակ չէի կորցնում հույսս£ Ճիշտ են ասում, որ մարդ, առանձնապես մեծահասակ մարդ, ամեն գիշեր պառկում է քնելու՝ առանց որևէ երաշխիքի, թե հաջորդ օրն առավոտյան արթնանալու է, սակայն ամեն դեպքում նա նորից ու նորից լարում է զաթուցիչը£ Դա հենց հույսն է որ կա £ Այան այդ հույսով է ապրում, Սամվելիկ, նա կուրախանա, գիտես, աշխարհի չափ կուրախանա®

Նրա այտամկանը լարվեց£ Նա տրտում օրորեց գլուխը, բայց ոչինչ չասաց£

– Նա համոզված է, որ դու ողջ-առողջ ես, նրա սիրտը վկայում է դա£ Նա շատ տանջված, բայց իմաստուն կին է, Սամվելիկ, նա շարունակ քո անունն է տալիս£ Գիշեր-ցերեկ քո անունն է տալիս® Հիշո՞ւմ ես Ագնեսային, – ակամա ավելացրի ես, – նկարը ցույց էիր տալիս ինձ, հիշո՞ւմ ես®

Նա բարձրացավ տեղից, մոտեցավ լուսամուտին£ Երկար նայում էր դուրս, մի տեսակ կուչ եկած, փոքրացած, հետո շրջվեց, այլայլված, բայց սառնությամբ ասաց.

– Ուշ է, ուշ է արդեն® Ես ընտանիքի տեր եմ, կին, երեխաներ ունեմ, ուշ է® Ժամանակին պիտի որոնեիր, ժամանակին, – նա ընդոստ մի շարժումով ու դարձյալ կաղալով մոտեցավ դռանը, շուռ եկավ, ակնդետ նայեց ինձ, և ես հասկացա, ցավագնորեն հասկացա, որ վերջին անգամ եմ տեսնում նրան£– Մի որոնեք ինձ, – կրկնեց նա նույն սառցասառն տոնով£– Իմ հավատն ուրիշ է® Մի որոնեք ինձ®

Նա դանդաղ ելավ սենյակից, իր ետևից ծածկելով դուռը£

Ես երկար, շատ երկար ժամանակ նստած էի՝ անկարող ընկալելու այն ամենը, ինչ տեղի ունեցավ հիմա՝ այս հեռավոր, օտար աշխարհում®

– Իմ ասածից մի նեղացիր, – կրկին խոսեց Մխիթարը£– Խոսք էր, ասացի՝ մոռացիր£ Ինչ վերաբերվում է Շահում աքային, ինչ ասեմ, մոտ հարևաններ ենք, միշտ աչքներս վրան է եղել, լավ ենք նայել, թե վատ՝ էդ է, աստված թող

տեսնի, և ամենքին իր սրտի ուզածով տա® Քեզնից էլ դժգոհ չէր, իր բախտն էր, ի՞նչ անենք, դու քնած՝ բախտն արթուն, ու՞ր կարող ես փախչել՝ ոչ մի տեղ® Ինքը քաղաքում չէր կարողանում, քո գործն էլ գյուղում չկար, էդպես էր®– Նա նայեց ճանապարհի կողմը, բարձր հարցրեց.

– Ապետնա՜կ, էդ ի՞նչ ես տանում դույլով, բերանն էլ փակել ես£

– Արա, որ պիտի ասեմ, բերանն ինչի՞ եմ փակել£

– Տեսա՞ր ինչ ասաց, – դառնալով ինձ, նեղացած ասաց Մխիթարը£– Գուցե ռումբ է մեջը, բա չիմանա՞նք ինչ է տանում£ Մի գրամ խելք չունեն, բայց սրամիտ-սրամիտ խոսում են£ Երեկ իրիկունը մտա բանջարանոց՝ մի երկու կարտոֆիլ հանելու, մեկ էլ տեսա՝ մեկը ծառերի ետևում բահով փորփրում է, նայեմ-տեսնեմ՝ մեր էս վերևի Վանոյի լակոտը, այ տղա, ասում եմ, էդ ի՞նչ ես անում, ասում է՝ կարտոլ եմ հանում, բայց, ախր, ասում եմ, էդ կարտոլի տերը ես եմ, ասում է՝ դե, որ տերը դու ես, օգնիր: Բա՜…էն օրն էլ տեսնեմ մեր էս հարևան Արտաշը, խելքից պակաս մեկն էլ դա է, բանջարանոցի խրտվիլակին գեղեցիկ շորեր է հագցնում, փողկապ է կապում, ասում եմ՝ հիմար հո չես, այ տղա, փողկապն ինչի՞ ես կապում, ասում է՝ խրտվիլակից վախեցող թռչուններին էլ պետք է հարգել: Սաղ գյուղով մեկ սրամիտ են: Ամեն գյուղում մի հիմար կլինի, բայց մեր գյուղում նրանց թիվը վերջերս շատացել է£ Խմողների թիվն էլ£ Չխմած՝ կատու են, խմած ժամանակ՝ առյուծ£ Դրանցից մեկն էլ հենց Արտաշն է£ Իր հիմարության պատճառով էն

խեղճ Մանվելին երկու տարով ուղարկեցին Շուշի՝ բանտ£

– Մանվելն ո՞վ է£

– Սուրենի տղան£ Շոֆեր է£ Էս Սուրենը մի բարեկամ ունի Մարտակերտում, հերը մեռել էր, դե, գյուղացի մարդ՝ ի՞նչ պիտի տանի, ինքն էլ ուստա մարդ, ասում է՝ դագաղի հոգս չքաշեք, ես կբերեմ£ Չափսն էլ գիտեր, երևի ժամանակին աչքաչափով վերցրել էր£ Սարքեց, նախագահից թույլտվություն վերցրեց, տղայի՝ Մանվելի բեռնատարով տարավ£ Ներքևի գյուղերում սրանք շրջկենտրոն գնացող մի թուրք դասատու են վերցնում £ Բայց չեն ասում, որ թափքում դագաղ կա, էդ էլ դագաղ ու մեռելից սաստիկ վախեցող էշի գլուխ£ Որոշ ժամանակ անց սա հանկարծ նկատում է, որ դագաղի կափարիչը կամաց բարձրանում է ու էնտեղից մարդու մի ձեռք է դուրս գալիս £ Վախից էս դասատուն թափքից ցատկում, թավալվում է ճամփի փոշու մեջ, ոտուձեռը կոտրում£ Պարզվում է, որ գյուղում Էս ախմախ Արտաշն էլ է մեքենա նստել, իբր թե էլեկտրացանցում գործ ունի£ Ճանապարհին ուժեղ անձրև է սկսում, մտնում, առոք-փառոք պառկում է դագաղում, ձեռքը հանել է, որ տեսնի՝ կտրե՞լ է անձրևը£ Երկու տարի տվին Մանվելին, կին ու երեխեք թողին անտեր® Բա, կոլխոզի ժողովում մեր էս բերանբաց Բենիկն ինչ ասի, որ լավ լինի, – շարունակեց Մխիթարը£– Ասում է՝ Սովետական Միությունում մենք հազիվ թե լավ ապրենք, միակ ելքն այն է, ասում է, որ Սովետական Միությունը պատերազմ հայտարարի Ամերիկային ու Չինաստանին,

նրանք շատ են, մեզ կհաղթեն ու նրանց հաշվին մարդավարի կապրենք: Որոշեցի դրա սանձը ձեռքս հավաքել, ասում եմ՝ բա որ հանկարծ մե՞նք հաղթեցինք… Բերանը մնաց բաց, խոսք չգտավ, թե պատասխանս տա: Էդպես է, թողնես հակա-հակա խոսեն… Գիտե՞ս ես ոնց եմ ամուսնացել, – աշխուժացավ Մխիթարը£– Երևանից ուսանող տղերքը եկել էին արձակուրդի, ուզում էին քեֆ անել, ինձ ուղարկեցին էս կողքի գյուղը՝ Շահմասուր, մսացու գտնելու£ Տնետուն ման գալով հարցնում եմ՝ «Ծախու գա՞ռ չունեք»£ «Չէ»£ «Ու՞լ», «Չէ», «Գո՞ճի», «Չէ»£ Տեսնեմ մի տան պատշգամբում մի երկու աղջիկ ծիծաղելով զրուցում են£ Հարցրի՝ «Բա մարդու տալու աղջի՞կ»£ Ասացին՝ «Ունենք»£ Սաթիկի հետ էդպես ամուսնացա£

Նա դարձյալ նայեց ճանապարհի կողմը, էշը խոտով բեռնած մի մարդ էր գնում ճանապարհով, առջևից մի տղա երեխա՝ շվշվացնելով£

– Ա՜յ տղա, ա՜յ տղա, – ներքևից նախատեց Մխիթարը£ - Էշը ինչո՞ւ դու չես քշում, հերդ է քշում£

– Էհ, էշն ինչ գիտի՝ ես եմ քշում, թե հերս, – պատասխանեց տղան, շարունակելով շվշվացնելով քայլել առջևից£

– Տեսա՞ր, – նորից հարցրեց Մխիթարը£– Ասում եմ չէ՝ խելքի պատառ չկա գլխներումը, բայց թողնես սրամտեն, հիմար-հիմար դուրս տան, ես ձեր դաստիարակողի հերն եմ անիծել£

Հերացուս դուրս եկավ տնից, ծխախոտ վառելով

առաջացավ դեպի մեզ£

– Ամեն ինչի ճար կլինի, մեռնողին ճար չի լինի, – փիլիսոփայեց նա և, Մխիթարի տան կողմը նայելով, ավելացրեց, – Մխիթար, տեսնում եմ, խոտի հոգս չես քաշել, ձմռանն ի՞նչ ես անելու£

– Գելը թողե՞ց, որ խոտի հոգս քաշեմ, – նեղսրտեց Մխիթարը£– Անտերը եկել, հենց մեր տան մոտ, չափարի տակ կերել է էշս£

– Բա հո չէր տանելու ռեստորանում ուտի, – քահ-քահ ծիծաղեց հերացուս£

Մխիթարը նեղացավ, սակայն անպատասխան թողեց նրան£ Նա այլ բան ասաց£

– Ամեն ինչ մաշվում է, – ասաց, – նույնիսկ վիշտը, ժամանակը բուժում է բոլոր վերքերը, բացի հարազատ զավակի կորստի վիշտը£– Նա խորը հառաչեց, ավելացրեց.– Մարդ մի օր ծնվում, մի օր էլ պիտի մեռնի, վախենում ես մեռնելուց, թե չէ՝ մեկ է, նա գալու է£

Հաջորդ օրվա երեկոյան դեմ Մեծ մայրս մահացավ £ Զարմանալի բան. այդ պահին կռունկների երամ էր անցնում գյուղի վրայով, միանգամայն անսպասելի, երամը հանկարծակի փոխեց ուղղությունը, եկավ, երկու անգամ պտտվեց մեր տան վրա ու թևածելով՝ կուրլու՜-կուրլու՜-կուրլու՜, գնա՜ց, կորավ իրիկնային աղջամուղջի ոսկե շողերի մեջ£ Կռունկները չէին երևում այլևս, բայց նրանց հեռացող, թախծածոր կանչը դեռևս լսվում էր երկար£

Մի օր անց մենք հողին հանձնեցինք նրան գյուղական

մեր հին գերեզմանոցում, որտեղից երևում էր Խաչենի ընդարձակ ձորահովիտը£ Այդ ձորահովիտով է անցնում շրջկենտրոն տանող ճանապարհը£

Տարիներ առաջ այդ ճանապարհով գնացին նրա որդիները, որպեսզի այլևս չվերադառնան®

Իսկ հետո գյուղի վրա նոր օր բացվեց£ Ծառերը՝ լուսաբացի սառը հովից արթնացած, խշխշացին, հատուկենտ թռչուններ՝ այս ու այնտեղ, իրար ձայն տալով սկսեցին գեղգեղալ, և նրանց քաղցրահունչ երգը գնալով սաստկանում էր£

Մի տեսակ ընկալելի ու անընկալելի՝ գյուղի վրա բացվում էր լույսը և տարօրինակ էր մտածել, որ այդ լույսը հույս և ուրախություն կբերի բոլոր մարդկանց՝ թե մեծ, թե փոքր, բայց ոչ բնավ նրանց, որ այլևս չկան®

==========

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՑՐՏԵՐ

Աղմկեցին, անցան անձրևները աշնան®
Մովսես Յախշունց

Աննկատելի սկսվեց ու անցավ ձմեռը՝ ձնառատ ու տաք£ Հետո, ինչպես տոնական երկու խնդուն օր, ցոլացին և անցան գարունն ու ամառը£ Եվ ահա եկել է աշունը՝ անձրևներով, հազվադեպ արևի պայծառ, արդեն սառը վերջին փայլով, ծառերի տակ թափված գույնզգույն թոշնած տերևներով, պաղ օդով, առավոտյան դրած եղյամով ու անթափանց խոնավ մառախուղներով£

Վերջին շաբաթվա ընթացքում առաջին օրն էր, որ անձրև չտեղաց, առավոտվանից արև էր, և աշնան արևի տակ տնամերձ այգիներում, փողոցներում ու գյուղի շուրջը փռված անտառներում ծառերը փայլածում, հուրհրատում էին բազմերանգ գույներով՝ մաքուր ոսկուց սկսած մինչև փիրուզ£

Իսկ հետո միանգամից իջավ մութ երեկոն£ Անահիտը բարի գիշեր մաղթեց հերթապահ բժշկին ու բուժքրոջը և դուրս եկավ հիվանդանոցից£ Լուսինն իր հեռավոր ճանապարհին էր, դեռ չէր հասել լեռների մեջ կորսված հնձախութ գյուղին, և շուրջը ամեն ինչ՝ դաշտերը, անտառները, լեռներն ու ձորերը ընկղմված էին ակնակուր մթության մեջ£ Հիվանդանոցի բակում լորենիների բարձր

ճյուղերն էին միայն աչքի համար հազիվ նկատելի օրորվում անաստղ երկնքի կապտավուն հեռանկարի վրա£

Չգիտես ինչու, աշնանայի այդ երեկոն Անահիտին թվաց մի տեսակ ոչ սովորական£ Դա արտասավոր երեկո էր, իսկ թե ինչու միանգամից այդպես թվաց՝ Անահիտը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ£ Սիրտն անհանգիստ էր£ Սիրտն ինչ որ բան էր զգում՝ ոչ այն է կարոտալի, ոչ այն է տագնապալից£ Հոգնել էր երևի£ Նա մի քանի վայրկյան կանգնեց գյուղական հիվանդանոցի փայտե աստիճաններին՝ մինչև աչքերը կընտելանային մթությանը, ու նոր միայն գնաց անձրևներից հետո տոփանված արահետով£

Սկզբնական շրջանում, երբ նա, Ստեփանակերտում ավարտելով բժշկական ուսումնարանը, եկավ գյուղ և աշխատանքի անցավ հիվանդանոցում, երկրորդ հերթի ընկնելիս, մայրը միշտ գալիս էր նրան դիմավորելու£ Մայրը, ցանկապատի մյուս կողմում, մթության մեջ կանգնած, սպասում էր նրան£ Հետո դուրս էր գալիս Անահիտը, և, տեսնելով մորը, ասում էր. «Մամա, էլի՞ ես եկել£ Ես ճանապարհը չգիտե՞մ, ինչ է®»£ Նա թևանցուկ էր անում մորը, և նրանք՝ մայր ու աղջիկ, բռնում էին տուն տանող ճանապարհը£ Անահիտը չէր ուզում, որ մայրը, դաշտային գործերից հոգնած, գար իրեն դիմավորելու£ Բայց մայրը չէր լսում նրան, ամեն երեկո գալիս էր£ Անահիտը քայլում էր լուռ, գլխահակ, իսկ մայրն անդադար խոսում էր, և խոսում էր համարյա միշտ նույն բաների շուրջը. այն մասին,

որ դաշտերում ահագին կարտոֆիլ մնաց հանելու, իսկ այսօր վաղը մեկ էլ տեսար ձյուն եկավ, հրեն գիշերը եղյամ է դնում սարերին, որ կաթնապրանքային ֆերմայում հիմա լավ են վաստակում, առաջ այդպես չէր, խոսում էր Անահիտի փնթփնթան հորից, որի մարմնում մնացած պատերազմական բեկորները, եղանակների փոփոխման հետ, իրենց զգացնել էին տալիս£ Բայց ամենից շատ պատմում էր իր մասին, թե ինչպիսի դժվարություններ է քաշել ինքը ջահել ժամանակ, թե ինչպես մի կտոր հացի համար մարդու տվին իրեն տասնչորս տարեկանում® «Միթե՞ հնարավոր է համեմատել էսօրվա կյանքի հետ£ Ռադիոն կա, հեռուստացույցը կա, սառնարանն ու լվացքի մեքենան տանը, խանութն ամեն ինչ լիքը, ամսվա վերջին թոշակը բերում են տուն՝ ստացիր ու սիրտդ ուզածին պես ապրիր® Բայց ապրելու ժամանակն անցել է£ Ի՞նչ ապրելու մասին է խոսքը, երբ յոթանասունդ լրացել է արդեն, էդ տարիքում հոգիդ աստծուն ավանդելու մասին ես մտածում և ոչ թե ապրելու»£

Անահիտի համար տխուր ու ձանձրալի էր շարունակ լսել նույն պատմությունները, և նա ամեն անգամ ներքուստ ուրախանում էր, երբ առաջին հերթ էր ընկնում£

Հիմա նրան ոչ ոք չի դիմավորում երեկոները, թեպետ և մայրն է մնում, և ամուսին ունի, և որդի® Անահիտը դուրս է գալիս հիվանդանոցից և, մտքերի մեջ խորասույզ, քայլում ցանկապատերի և տների արանքով ընկած ճանապարհով, այդ ճանապարհը քնած գյուղի միջով թեքվում է այս ու

այն կողմ, հետո ուղղվում, իջնում է ձորը, անցնում փայտե կամրջով, որի տակ մանրիկ խոխոջում է լեռներից եկող անանուն փոքրիկ գետակը, և երկար բարձրանում մինչև դիմացի սարի գագաթին թառած իրենց թաղամասը£ Լռիկ քայլում է նա մթության մեջ սպիտակին տվող ճանապարհով, և ոչ ոք չի խանգարում նրան՝ տրվել իր խոհերին, հիշողության մեջ օր-օրի հաջորդաբար վերարտադրել իր կյանքը£ Գիշերային խավարի մեջ հեշտ է մտածելը, մտքերն իրենք իրենց գալիս, շարվում են իրար ետևից, վաղուց անցած իրադարձությունները վերստին շունչ են առնում, և Անահիտը ամեն անգամ զարմանում է՝ ինչո՞ւ իր կյանքն այդպես անիմաստ ու հիմարաբար դասավորվեց £ Ե՞րբ, ո՞ր օրը ճեղք տվեց այն, և այդ ճեղքը գնալով մեծացավ՝ դառնալով անդունդի նման խոր, և օրեցօր ավելի սարսափելի է թվում նայել այդ վիհի խորքը£ Ո՞վ է մեղավոր այն բանի համար, որ դու ամեն ինչ ունես՝ սիրելի որդի ու քեզ սիրող ամուսին, տունուտեղ, սրտովդ է նաև աշխատանքդ, ամեն ինչ կա՝ բացի մի բանից, որին տենչում ես ամբողջ կյանքում՝ մի քիչ երջանկություն£ Տարիներ առաջ, երբ հայրը ողջ էր, մի խոսք ասաց£ Վերջերս, չգիտես ինչու, Անահիտը հաճախակի էր հիշում այդ խոսքը£ «Կաղնավուն մի թռչուն կա, հանդերում է լինում, երջանկությունը նման է էդ թռչունին, – ասաց հայրն այն ժամանակ£– Նստում է աչքիդ առաջ, մի երկու քայլի վրա, ուզում ես բռնել, ցատկում, մի քիչ էն կողմ է կանգնում, ասում ես՝ մի քայլ էլ անեմ՝ կբռնեմ£ Խաբելով տանում է, է՜, աստված գիտի, թե որտեղ£

Մարդու երջանկությունը նման է էդ փոքրիկ թռչունին, թվում է ահա մոտ է արդեն, հասնում ես երջանկությանդ, բայց, չէ, էն թռչունի պես նորից իր ետևից տանում է քեզ ու մինչև վերջ էլ էդպես գնում ես երջանկության ետևից ու երբեք չես հասնում»£

Իսկ մի՞թե հնարավոր չէ ապրել առանց այդ երջանկության£ Հնարավոր է, իհարկե, բայց դրա հետ միասին երկինքը պարզապես մնում է անծայրածիր երկինք՝ սև դատարկությամբ, աստղերը՝ սովորական աստղեր, որոնք ոչ թե ժպտում, աչքով են անում գիշերային երկնքից, այլ հենց այնպես հղում են իրենց հեռավոր սառը լույսը, տան կողքով անցնող առուն չի կարկաչում մանկան զվարթ ծիծաղով, պարզապես իր համար հոսում է՝ լեռներից բերած աղբրաջրերը տանելով դեպի կոլտնտեսային բանջարանոցները®

Ի՞սկ չէ որ կար ժամանակ՝ ուրիշ կերպ էր ամեն ինչ՝ և աստղերն էին ուրախ աչքով անում թավշյա մութ երկնքում, և առվակն էր ծիծաղում մանկան զնգուն ծիծաղով® Եղե՞լ է այդ ամենը, թե՞ ինքը՝ Անահիտն է հնարել վաղանցուկ այն մի քանի շաբաթները՝ Կարենի հետ£ Ոչ, եղել է, ամեն ինչ եղել է, այն շաբաթները նույնպես եղել են, դրանք այնպես արագ անցան® Երբեմն Անահիտին այնպես էր թվում, թե ինքը կխենթանա երջանկությունից£ Տեսնես որտե՞ղ է հիմա Կարենը£ Ո՞ր հեռուներն է նետել նրան ճակատագիրը£ Իսկ գուցե նա ինչ-որ բոլորովին մոտիկ տեղ է£ Բայց մի՞թե մեկ չէ, թե որտեղ է նա£ Եթե նա նույնիսկ այստեղ, իր

կողքին լիներ, Անահիտի համար նույնն էր, թե նա գտնվում է աշխարհի մյուս ծայրին£ Մի անգամ ինչ-որ առիթով նա Անահիտին ասաց. «Հիշիր խոսքս. կգա ժամանակ՝ կկործանի քեզ անհաստատ բնավորությունդ»£

Ոտնաձայներ լսելով ձորում՝ ուռենիների տակ, անհանգիստ կոկռացին գորտերը£ Անահիտն անցավ փայտե կամրջակը, որի տակ մի կարճ պահ խոխոջաց գետակը, և սկսեց բարձրանալ դիք ճանապարհով£ Նա կրկին հիշեց Կարենին, դառը քմծիծաղեց մթան մեջ£ Ընդհանուր առմամբ, Կարենի ասածի մեջ ճշմարտություն կար£ Գուցե կայուն բնավորություն ունենար՝ իր կյանքում ամեն ինչ այդպես չդասավորվեր£ Հետաքրքիր է, իսկ ինչպե՞ս է դասավորվել իր՝ Կարենի կյանքը, նա շատ էր հպարտանում իր անհողդողդ կամքով ու չափից դուրս անսասան բնավորությամբ£ Ով գիտի, երևի նրա կյանքը լավ է դասավորվել, այլապես գոնե մի անգամ գյուղ կգար. արդեն մի քանի տարի է հարազատ գյուղում չի եղել£ Ծնողներին Կարենը, ամենայն հավանականությամբ, նամակ-բան գրում է£ Մի ժամանակ, դա շատ վաղուց էր, Անահիտը ցանկացավ ծնողներից վերցնել Կարենի հասցեն £ Ինքն այդ օրը չէր աշխատում, և հարևաններից ով էր՝ հիմա չի հիշում, ասաց, որ Կարենի հայրն իրեն վատ է զգում, գիշերը սրտի նոպա է ունեցել, շրջկենտրոնից շտապ օգնություն են կանչել£ Վոլոկորդին և վալիդոլ վերցրեց, վազեց նրանց տուն£ Մտածում էր միաժամանակ վերցնել Կարենի հասցեն£ Սակայն Կարենի մայրը բավականին

կոպտաբար դիմավորեց նրանք։ Դու ոչ միայն Կարենի, այլև մեր կյանքն էլ ես փչացրել, ասաց նա այն ժամանակ, որովհետև, եթե դու չլինեիր, մեր տղան հիմա ապրելիս կլիներ մեզ հետ և էսօրվա օրը նրա ծերացած ծնողները ստիպված չէին լինի վիզ ծռել ուրիշների առաջ, էն մարդուն դու ես հիվանդացրել, քո պատճառով էր ամեն ինչ, և չփորձես երևալ նրա աչքին։ Անահիտը կանգնել էր բակում՝ ամոթահար, շվար, չգիտեր ինչ անել։ Հազիվ զսպելով իրեն, որ չփոձկա վիրավորանքից, նա շուռ եկավ և մոլոր քայլերով գնաց տունք։ Տանը ոչ ոք չկար։ Հուզմունքից դողում էին Անահիտի շուրթերը, բայց նա չէր լալիս, իսկ սիրտը գնալով նվաղում էր։ Մոտենալով սեղանին, նա դողացող մատներով միացրեց պատերազմական ժամանակներից մնացած հին պատեֆոնը, և պատեֆոնը տխրաձայն երգեց.

Հրաժեշտի համար շալը եզրավոր
Կապիր, օ, կապիր ինձ տուր,
Այդ հանգույցի պես մի օր բախտավոր
Մենք կապված էինք ամուր։

Այլևս անուժ զսպելու իրեն, երեսնիվայր ընկավ մահճակալին և երկար ժամանակ լալիս էր։ Ինքն ինչո՞վ է մեղավոր, որ նրանք մենակ են, որ ծանր է նրանց համար՝ մեն-մենակ չորս պատի արանքում։ Ի՞նչ մեղք ունի ինքը դրանում, և մի՞թե իր՝ Անահիտի համար հեշտ է։ Անահիտն ինքը քիչ պատճառներ չունի մեղադրելու

իրենց՝ Կարենի ծնողներին, հենց այն բանում, որ նրանք խորտակել են իր կյանքը£ Բայց ինչո՞ւ փորփրել հին վերքերը£ Մի՞թե դա որևէ բան կարող է տալ£ Եվ մի՞թե բանն այն է, որ հին են վերքերը, վերքերը թարմ են միշտ, մինչև մահ-գերեզման այդպես էլ կմնան թարմ ու կճզմեն, կցավացնեն Անահիտի սիրտը, և նա չի կարողանա այդ մասին պատմել որևէ մեկին, որովհետև, երբ խորն է վիշտը, պատմել չի լինում£ Մղկտում, վառվում է սիրտդ, ինչպես դեզն է ներսից այրվում՝ լուռ, անմռունչ, և միայն ծուխն է բարձրանում ինչպես հառաչանք£ Երբեմն Անահիտին թվում է՝ չի դիմանա այլևս, թվում է՝ ցավից կգոռա® Բայց միշտ չէ, որ անում ես այն, ինչ պետք է, երբեմն ստիպված ես ծիծաղել՝ փոխանակ լալու£ Եվ այնքան էլ հեշտ չէ գոռալ ցավից, երբ կողքիդ են որդիդ ու քեզ սիրող բարի ամուսինդ£ Ամուսինը գիտի, որ Անահիտը չի սիրում իրեն, այդ մտքից նա հաճախ բռնվում է անզուսպ կատաղությամբ, խմում, հարբում է խելագարության աստիճան (թեպետ ոգելից խմիչքներ տանել չի կարողանում) և անխնա ծեծում է Անահիտին, և ասում, որ նա խորտակել է իր կյանքը£ Իսկ առավոտյան, ուշքի գալով, արցունքն աչքերին սկսում է ներողություն խնդրել£ Եվ Անահիտը ներում է նրան, և ներում է ոչ միայն նրա համար, որ հասկանում է ամուսնուն (այն բանից, որ ինքը հասկանում է ամուսնուն, իրեն թեթևություն չի գալիս), ամենից շատ նա ամուսնուն ներում է, որովհետև իրեն ոչինչ չի մնում անելու, քան ներել նրան, այլապես մշտական տառապանք կդառնա իրենց կյանքը£ Ամուսինը

նույնպես հասկանում է դա, դրա համար էլ շատ հաճախ երեկոները գնում է ծնողների մոտ և այնտեղից վերադառնում գիշերվա կեսին, երբ Անահիտն արդեն քնած է լինում (կամ ձևանում է քնած) £

Մտքերով տարված, Անահիտը չնկատեց, որ հասել է տուն£ Նույնիսկ չէր նկատել, որ լուսինն անշշուկ բարձրացել է սարի ետևից և հիմա անշտապ մագլցում էր երկինքն ի վեր£ Նա ձեռքը ցանկապատի արանքից մտցրեց, բաց արեց բակի դռնակը, բայց ներս չմտավ, նայում էր լուսնալույսի արծաթ շողերի ներքո քնած լեռներին, հեռու ու մոտիկ դաշտերին, դեպի սարեր բարձրացող ճամփաներին, որ գնում, կորչում էին մթին անտառների մեջ£ Մատուռի ձորում մի քանի անգամ կանչեց գիշերահավը ու կրկին լռություն տիրեց£ Ներքևում երևում էր ամբողջ Հնձախութը՝ իր բոլոր թաղամասերով£ Տների թիթեղյա տանիքները, ինչպես անձրևից հետո՝ արևի տակ, աղոտ փայլում էին լուսնի շողերից£ Անահիտը նայեց աշնանային սև ցելերի միջով դեպի գյուղի կենտրոն իջնող ճանապարհին, և այս՝ իրոք արտասովոր, ու, չգիտես ինչու, մի քիչ էլ տագնապալից, երեկոն նրան կրկին հիշեցրեց այն օրերը, երբ ինքն ու Կարենը սովորում էին տասերորդ դասարանում և այդ ճանապարհով ամեն օր միասին գնում էին դպրոց, վերադառնում£ Գնալիս շտապում էին, իսկ վերադարձին գալիս էին անշտապ, երբեմն կամրջի մոտ թեքվում, գնում էին ձորն ի վեր, անանուն գետակի հակառակ ուղղությամբ (դա ավարտական քննությունների օրերին էր), և նրանց

գլխավերևում, ծառերի վրա, երգում, ասես նրանց ողջունում էին փոքրիկ դեղձանիկները£ Անահիտը հիշեց անդարձ այդ օրերը, հառաչեց և, ետ տանելով դռնակը, մտավ բակ£

Տան լույսը չէր վառվում. ամուսինը դարձյալ յուրայինների մոտ է գնացել կամ աշխատանքից չի եկել դեռ, իսկ որդին՝ Արայիկը, երկրորդ օրն էր, ինչ Անահիտի մոր մոտ էր£ Ընտանիքում տիրող սառնությունը հավանաբար ձանձրացնում էր տղային, և նա գերադասում էր տատի մոտ մնալ, այնտեղ նրա համար լավ էր£

Անահիտն իր բանալիով բաց արեց դուռը, միացրեց լույսը և, ասես առաջին անգամ էր տեսնում, մի քանի վայրկյան առանց շտապելու, ուշադիր դիտեց սենյակը. նա նման էր կենվորուհու, որին տանտերերը ցույց էին տվել իր նոր կացարանը, և նա հիմա շեմին կանգնած վճռում էր՝ համաձայնի՞ դրան, թե ուրիշ, ավելի լավ կացարան փնտրի£

Սենյակը կահավորված է ոչ այնքան թանկ, բայց լավորակ կահույքով, պատի տակ դրված թախտը ծածկված է տանը գործած նախշուն գորգով, պատին ֆաբրիկայի թողարկած գեղարվեստական փոքրիկ գորգն է կախված՝ վրան առվից ջուր խմող երկու եղնիկ £ Այդ գորգն ամուսինն է գնել մի երեք տարի առաջ. կոլտնտեսային տեխնիկան բերքահավաքին օրինակելիորեն ու ժամանակին նախապատրաստելու համար նա դրամական պարգև էր ստացել£

Անահիտը հանեց վերարկուն, նետեց բազկաթոռի թիկնակին£ Հետո մոտեցավ սեղանին, ձեռքի սովոր

շարժումով մեքենայորեն ուղղեց սեղանի մոմլաթը, լիքը ջրամանը վերցրեց, դրեց սեղանի մեջտեղը£ Նրա հայացքն ընկավ պատից կախված մուգ կարմրագույն շրջանակով խմբային նկարին£ Հունիսի վերջին էր, լուսանկարվեցին ամբողջ դասարանով£ Անահիտը դանդաղորեն մոտեցավ և, ասես նախկինում երբեք չէր տեսել, սկսեց լարված հետաքրքրությամբ դիտել նկարը£ Ահա ինքը՝ ռուսաց լեզվի ուսուցչուհի Մարիա Ամբարձումովնայի կողքին£ Իսկ ահա վերջին շարքում, մի տեսակ բոլորից անջատ, կանգնած է Կարենը£ Նա հանգիստ, ուժեղ կամք արտահայտող դեմք ունի, օբյեկտիվին ուղղված վճռական, փոքր ինչ սառը հայացք£ Ամեն անգամ, նայելով դաժանության հասնող այդ խիստ ու լուրջ դեմքին, Անահիտը տարիների հետ չնվազող ամոթի զգացումով հիշում է մի դեպք, որից և, ըստ էության, սկսվեց այդ ամբողջ պատմությունը: Նա այնպես կուզենար հիշողությունից դեն նետել այդ դեպքը, բայց, ավաղ, դա անհնարին է, ինչպես անհնարին է մոռանալ այն ամենը, ինչ այս կամ այն կերպ կապված է Կարենի հետ. հումորով ասված նրա խոսքերը, հրապուրական ժպիտները, բարեհոգի ծիծաղը, շարժումները, – այս բոլորը մեկ-առ մեկ դրոշմվել է Անահիտի հիշողության ու սրտի մեջ®

Անահիտը դուրս եկավ բակ՝ ջրամանի ջուրը փոխելու£ Տան լույսը, որ դռան արանքից մի ոստույնով բարձրացել էր մեղմ հովից խշշացող թթենիների վրա, կատվի պես ցած թռավ, սողոսկեց ներս՝ մինչև Անահիտը կփակեր դուռը£ Բակում լռություն էր՝ ոչ մի ձայն, միայն ծառերն էին այգում

արթունէ Նրանք կամացուկ սվսվում, զրուցում էին, ասես, չհամարձակվելով մոտենալ իրարէ Ամենուր լռություն էր, և այդ լռության ու արտասավոր գիշերվա մեջ ձորերն ի վեր դանդաղ հոսում էր մշուշը, ներքևում, ինչ-որ մեկի տնամերձ հողամասից ծուխ էր բարձրանում, գոմաղբ էին վառել, ծուխը թանձր էր, սև, հեռվում, լուսնալույսի արծաթ շողերով ողողված սարերից ու լեռներից անդին, երևում էր Մռավա սարը՝ պատված ճերմակ ամպերովէ Թե՞ ձյուն էրէ Ձյուն էր երևիէ

Հիշողությունները նորից տարան Անահիտին, այո, դրանից սկսվեց ողջ պատմությունը, այդ անհեթեթ դեպքից, որի մասին հիշելիս, հիմա էլ տարիներ անց, Անահիտը զգում է, թե ինչպես ամոթից կարմրությունը բռնում է դեմքը է Երկար դասամիջոցին էր դա. ընկերուհիների մոտ իրեն ցույց տալու համար Անահիտը ցատկեց պատուհանի գոգին, և, նայելով Կարենին, որն ինչ-որ բան էր փնտրում քարտեզի վրա, ծիծաղկուն աչքերը կկոցելով ասաց.

– Լսիր, Կարեն, որպես կոմերիտկազմակերպության քարտուղարի, կարո՞ղ եմ մի հարց տալ քեզէ

Դպրոցում տարածված էր, որ, իբր, Կարենը մինչև ականջները սիրահարված է Անահիտին, և, լավ իմանալով Անահիտի չարաճճի բնավորությունը, աղջիկները հետաքրքրասիրությամբ շրջվեցին նրանց կողմը է

– Ի՞նչ հարց, – ասաց Կարենը՝ չհամարձակվելով ուղիղ նայել Անահիտի աչքերինէ

Անահիտը գլխի վարժ շարժումով ետ նետեց մազերը և ասաց.

– Այսինքն հարց չէ® պարզապես ուզում եմ փոխանակություն կատարել քեզ հետ, եթե կարելի է, իհարկե£

Նրա գեղեցիկ դեմքը ողողված էր գարնան արևով ու ծիծաղով. ծիծաղում էին մաքուր երկնքի գույն ունեցող աչքերը, վարդի թերթիկների նրբությամբ լիքը շուրթերը, ձյունաճերմակ ատամները®

– Ի՞նչ փոխանակություն, – տարակուսանքով հարցրեց Կարենը£

– Դու քո մշկամկենու գլխարկդ տալիս ես ինձ, իսկ ես դրա փոխարեն քեզ մի անգամ համբուրում եմ® Կամ կարելի է երկու անգամ£ Համաձա՞յն ես£

Կարենը թեթևակի այլայլվեց, հետո մոտեցավ, նստարանի տակից հանեց ականջակալներով գլխարկը, որ մորեղբայրն էր ուղարկել Ղազախստանից, մեկնեց Անահիտին և հանգիստ, շեշտված սառնությամբ ասաց.

– Վերցրու£

– Ուրեմն, համաձա՞յն ես, – հաղթանակած ու խորամանկ ժպտաց Անահիտը՝ աշխուժորեն նայելով աղջիկներինք£

– Ոչ, համաձայն չեմ£ Դու շատ էժան ես ծախում քո համբույրները, այդպիսի համբույրներ ինձ պետք չենք£

Գլխարկը թողնելով Անահիտի ձեռքին, նա շրջվեց, դուրս եկավ դասարանից£ Անահիտը շշկլվել, մնացել էր կանգնած, կյանքում երևի, առաջին անգամ նա կորցրեց

իրեն և ոչինչ չգտավ ասելու£ Նա կանգնել էր՝ տեղի ունեցածից քար կտրած, ընկերուհիների աչքի առաջ՝ այրվելով ամոթից ու մատներով անմտորեն քրքրելով գլխարկի մազախավը, հետո հանկարծակի գլխարկը նետեց պատուհանի գոգին և նույնպես դուրս վազեց միջանցք, որը գվվում էր աշակերտների անհամար ձայներից£ Երբ հնչեց զանգը, և Անահիտը ներս մտավ, ընկերուհիները տեսան, որ լացից կարմրել, ուռել են նրա աչքերը£

Այդ օրվանից կարծես Անահիտին փոխս էին գցել£ Ասես նախկին Անահիտը չէր£ Ճիշտ է, նա հիմա էլ, ինչպես առաջ, կարող էր համոզել ամբողջ դասարանին՝ փախչել հերթական դասից, պարզապես տասը էջ անգիր անել եռանկյունաչափության դասագրքից (նա ապշեցուցիչ հիշողություն ուներ), կամ հանրահաշվի ստուգողական գրավորը լրիվ՝ առաջին տողից մինչև վերջին տողը, արտագրել կողքին նստող ընկերուհուց, և, լուսաշող կապույտ աչքերը հառելով ուսուցչին, տետրը հանձնել նրան ու անմեղ ժպիտով հայտարարել. «Ընկեր Աղասյան, դուք կարող եք հիմիկվանից „երկու“ նշանակել, ես սկզբից մինչև վերջ Գրետայից եմ արտագրել»£ Եվ, այնուամենայնիվ, այդ արարքները չէ, որ այժմ բնորոշում էին Անահիտին£

Նա սկսել էր հաճախակի խորասուզվել մտքերի մեջ, երբեմն առ երբեմն նա իրեն բռնում էր այն բանում, որ խանդում է Կարենին իր ընկերուհիների նկատմամբ, երբ տեսնում էր, որ նրանք հենց այնպես մոտենում էին նրան՝ մի բան հարցնելու, զրուցելու հետը (իր և Կարենի

միջև վարվեցողության այդ պարզությունը չկար այլևս), գաղտնաբար հետևում էր նրա յուրաքանչյուր քայլին, իսկ պատահական հանդիպումների ժամանակ շփոթվում, կորցնում էր իրեն և արագ փախցնում հայացքը£

Հասակակից աղջիկների նման, Անահիտը նույնպես հաճախակի նամակներ էր ստանում տղաներից և այդ նամակներում՝ երբեմն քնքուշ, երբեմն սրտառուչ, երբեմն էլ ծիծաղաշարժ, տղաները ժամադրության էին կանչում նրան£ Դրանք, պարզ է, շոյում էին նրա աղջկական սնապարծությունը, նա ուրախանում և հպարտանում էր այդ նամակներով, և, փակվելով դասարանում կամ առանձնանալով դպրոցի բակի ինչ-որ մի անկյունում, դրանք կարդում էր ընկերուհիներին, առանց տալու, իհարկե, հեղինակների անունները£ Այդպիսի նամակներ նա այժմ էլ ստանում էր, սակայն դրանք այլևս չէին ուրախացնում նրան, ավելի շուտ տարակուսանք էին առաջ բերում, իսկ հետո վերջնականապես սկսեցին ջղայնացնել, և, ստանալով հերթական սիրային նամակը, նա պարզապես վերադարձնում էր ետ՝ առանց կարդալու, կամ պարզապես պատռում էր£ Ի վերջո, Անահիտը խնդրեց իրեն ուղղված ոչ մի նամակ չվերցնել (այն նամակները սովորաբար նրան էին հանձնվում կամ համադասարանցի աղջիկների, կամ էլ ցածր դասարանների աշակերտների միջոցով) £

Ապրիլի վերջերին, արևոտ ու պայծառ մի օր, Անահիտը պայուսակը ձեռքին գնում էր դպրոց£ Երկրորդ զանգը հնչել էր արդեն, դրա համար էլ շտապում էր£ Նա արդեն հասել

էր դպրոց, դարպասի մոտ էր, մեկը ետևից ասաց.

– Անահիտ Գաբրիելյանին ջերմ ողջույններ£

Անահիտը շրջվեց և տեսավ Մուշեղ Առուշանյանին՝ 10-րդ «բ» դասարանից£

– Բարև, – սառը արձագանքեց Անահիտը£

– Ես հիմա քայլում էի ձեր ետևից և ուշադիր նայում ձեր ստվերին, – ասաց Մուշեղը ժպտալով£

– Եվ հետո՞£

– Հետո ոչինչ£ Ես նայում էի ձեր ստվերին և մտածում այն մասին, որ գեղեցիկ աղջիկների ստվերն էլ գեղեցիկ է լինում£

Անահիտը ծիծաղեց£

– Ինչ չի հաջողվում գնել ոսկով՝ կարելի է նվաճել քաղցր խոսքով£ Դու, հավանորեն, այս նշանաբանով ես առաջնորդվում, չէ՞£

– Ասենք թե, – մարտական տեսքով նետեց Մուշեղը£

– Անօգուտ է, Մուշեղ, այդ նշանաբանն ունի իր բացառությունը՝ ինձ վրա չի ներգործում£

– Դրա համար էլ չե՞ս պատասխանում իմ նամակին£

– Ի՞նչ նամակ£

– Մեր դասարանցի Սաթիկն էր բերել£

– Ես քո նամակը չեմ կարդացել£

– Ուրեմն արժանի չես համարել®

– Հաշվիր, որ այդպես է£

– Շնորհակալություն, – քմծիծաղ տվեց Մուշեղը£– Դու գիտե՞ս, թե մի խելոք մարդ ինչ է ասել այդ առթիվ£ Նա ասել է. «Դու քո վերելքի ճանապարհին մարդկանց հետ

այդքան դաժան մի եղիր. նրանց հետ դու կհանդիպես նաև ցած իջնելիս»£ Լավ է, չէ՞, ասված£

Անահիտին միշտ էլ բարկացնում էր Մուշեղի այդ խոսելաձևը՝ արտահայտվել փքուն ու խորիմաստ, և ամենագլխավորը՝ ուրիշների խոսքերով£

– Լավ է ասված, միայն թե չհասկացա՝ դա ի՞նչ կապ ունի ինձ հետ£

– Ոչինչ, Անահիտ, հետո կհասկանաս, – բազմանշանակ խոստացավ Մուշեղը£

Անահիտը հանկարծակի կանգ առավ և, շրջվելով Մուշեղի կողմն ու միաժամանակ գիտակցելով, որ հետո պիտի փոշմանի արածների համար, հուզմունքից շնչահեղձվելով, անակնկալ կերպով ասաց.

– Դու հո լավ գիտես Կարենին£ Մեր դասարանցի Կարենին£

Մուշեղն ինքնաբերաբար գլխով արեց, զարմանքով նայելով աղջկա թեթևակի գունատված դեմքին£

– Ասենք թե® գիտեմ®

– Այ, եթե նա գրեր® Նրանից, միայն նրանից կուզենայի նամակ ստանալ® Ինչպիսին էլ որ լիներ այդ նամակը՝ թեկուզ վիրավորական, թեկուզ® միայն թե գրված լիներ նրա ձեռքով®

Անսպասելի նորությամբ շշմած՝ Մուշեղը չէր համարձակվում տեղից շարժվել£ Թողնելով նրան կանգնած, Անահիտը, թանձր մազերը ծածանելով ուսերին, քարե սանդուխքներով վազեց վեր և մտավ կիսամութ

միջանցք£ Նա վազելով անցավ միջանցքով՝ հետզհետե ընտելանալով մթությանը, և, ասես հետապնդում էին, նուրբ ռունգերով արագ շնչելով օդը, ներս մտավ դասարան£ Նա հայացքով փնտրելով գտավ Կարենին և վճռականորեն մոտեցավ նրան£ Կարենն իր նստարանին նստած ինչ-որ քրքրված գիրք էր կարդում£

– Այդ ի՞նչ գիրք ես կարդում, Կարեն, – հարցրեց Անահիտը£

Կարենն աչքերը կտրեց գրքից, զարմանքով նայեց նրան£

– Լրտեսների մասին է£

– Հետաքրքի՞ր է£

– Դեռ չգիտեմ, նոր եմ սկսել£

Նրա ուշադիր հայացքի ներքո Անահիտը՝ արտասվելու աստիճան հուզված, շիկնանքից այրվելով, չգիտես ինչու, փորձեց բացել իր հին պայուսակը£ Բայց կողպեքը, հակառակի պես, չէր բացվում, ըստ երևույթին, փչացել էր£ Եվ Անահիտը, վհատության պոռթկումով բռնված, հանկարծ, ինքն անգամ սարսափելով սեփական խոսքերից, ասաց.

– Գիտե՞ս, ես կուզենայի, որ վերադառնային այն հին ու երանելի ժամանակները, երբ աղջիկն ինքն էր սեր խոստովանում տղային, և դա անպատվություն չէր համարվում® Բայց ոչ, ես դա չէի ուզենա, որովհետև այդ հին ժամանակներում չէիր լինի դու®

Հիմա, տարիներ հետո, աշնանային լուսնյակ ու ցուրտ գիշերվա մեջ մեն-միայնակ կանգնած, Անահիտը մտածում

էր այն հեռավոր, արդեն անդարձ օրերի մասին, և նրա համար ամոթալի ու միևնույն ժամանակ հաճելի էր վերհիշել իր այսպես ասած երեխայական արարմունքը, որին, ամենայն հավանականությամբ, մղեց նրան մի քանի րոպե առաջ Մուշեղի հետ տեղի ունեցած կարճատև խոսակցությունը£ Զարմանալին այն էր, որ Կարենն իսկույն հասկացավ նրան£ Նա մի քիչ գունատվեց, հետո ժպտաց, ինչպես նա է ընդունակ ժպտալու՝ միայն աչքերով£

Անահիտը մինչև այսօր էլ չի կարողանում մոռանալ, թե ինչպես այդ րոպեին հոգու վրայից անսպասելիորեն չքացավ լարվածությունը, ձեռքն ակամայից ընկավ նստարանին, նրա ամբողջ էությունը համակեց տարօրինակ, ընդարմացնող նվաղկոտությունը, որից արցունքներն իրենք իրենց լցվում էին աչքերը£ Եվ նա թերևս լաց լիներ, բայց այդ պահին Կարենի ձեռքը զգույշ իջավ նրա ձեռքին և թեթևակի սեղմեց նրա մատների ծայրերը£ Անահիտը խոնարհեց կրակի պես այրվող դեմքը, բայց ձեռքը ետ չքաշեց£ Արցունքներ չկային նրա աչքերում, բայց սիրտն այպես էր բաբախում, ասես ուր որ է պիտի դուրս թռչեր կրծքից£

Անահիտը ջրի ծորակի տակ լցրեց ջրամանը և թաց, սառը ջրամանը ձեռքին գնաց դեպի տուն£ Տուն մտնելիս նա ինչ-որ հոնդյուն լսեց, կանգ առավ£ Նրան թվաց՝ ավտոմեքենայի ձայն էր£ Բայց ավտոմեքենայի ձայն չէր դա. բարձր, սարերից ու լեռներից էլ շատ բարձր, աստղազարդ երկնքի միջով ինչ-որ օդանավ էր անցնում՝

կարմիր լույս արձակելով։ Անահիտը ներս մտավ, ջրամանը դրեց սեղանին, իր նախկին տեղը։ Նրա աչքը կրկին ընկավ խմբային նկարին։ Նկարում ինքն ու Կարենը իրարից հեռու են, իսկ այն ժամանակ անբաժան էին։ Անահիտն իրեն ամենաերջանիկ աղջիկն էր համարում արար աշխարհում։ Նրա էության յուրաքանչյուր բջիջ պարուրված էր այդ զգացմունքով։ Երեկոները նա պառկում էր քնելու այդ բերկրալից, շարունակ իրեն զարմացնող զգացումով, և մտածում էր գալիք օրվա մասին, որը նույպես սկսվելու էր նույն արբեցնող հուզմունքով։ Անահիտի սիրտն ու հոգին, ինչպես նորահաս գինու ոսկյա թաս, պռնկե-պռունկ լցված էր ցնծուն երջանկությամբ։ Նա նույնիսկ ջանում էր քայլել հանդարտ ու սահուն քայլվածքով, ասես վախենալով թափթփել այդ արբեցնող գինին։ Անահիտն առավոտներն արթնանում էր վաղ, մինչև արևը դուրս կգար, արթնանում էր ինչ-որ բանի մասին իրար հետ տաք վիճող ճնճղուկների անհանգիստ ճռվողյունից, միառժամանակ անխոհ ժպիտով նայում էր նրանց, հետո փակում աչքերը և մտածում Կարենի մասին՝ հիշողության մեջ հերթով վերակենդանացնելով երեկ երեկոյան նրա հետ անցկացրած յուրաքանչյուր ակնթարթը։ Հետո անկողնուց ելնում, դուրս էր գալիս պատշգամբ և այդպես վարդագույն թափանցիկ գիշերանոցով, բարակ մեջքն ի վար թափած շողշողուն, ասես ոսկեջրով լվացած թանձր մազերով, երկար կանգնում, կկոցված աչքերով դիտում էր այդ մեծ, տաք ու բարի աշխարհը, որը շռայլորեն նրան էր հղում վաղ լուսաբացի

իր մաքրամաքուր կապույտ լույսը£ Իսկ հետո ներքևում, Մատուռի ձորում ընդհատումներով սկսում էր դայլայլել դեղձանիկը£ Անահիտն արագ նախաճաշում, կարգի էր բերում մազերը, և վերցնելով պղնձե կուժը, վազում էր դուրս, չմոռանալով, իհարկե, զգուշացնել մորը.

– Մամա, ես գնացի ջրի£

– Շուտ վերադարձիր, քննության ես պատրաստվում, – իր հերթին ահազանգում է մայրը£

Ձորում, կամրջից վեր, ուռենիների տակ փոքրիկ մի աղբյուր կար, որ մամռոտ քարերի մեջ գիշեր ու զօր ցածրաձայն երգում էր, այդպես երգելով էլ անցնում էր մի քանի տասնյակ մետր ճանապարհը, ու նորից կորչում՝ անհայտ ու անանուն£ Այստեղ, այս աղբյուրի մոտ էին նրանք մշտապես հանդիպում£ Գյուղում ուրիշ աղբյուր կար՝ երեք ծորակով, վարար£ Տարին չորս բոլոր մարդաշատ էր լինում այստեղ. կանայք կժերով ու դույլերով ջուր են վերցնում, լվանում են իրենց նախշուն կարպետները, տղամարդիկ ջրում են իրենց ձիերին, այստեղ են գալիս դատարկ, դնգդնգան տակառներով սայլերը՝ ջուր տանելու հնձվորներին ու ծխախոտագործներին£ Իսկ սրա, մամռոտ քարերի մեջ կամացուկ երգող այս անանուն աղբյուրի համար, որի սառնորակ ջրերը, հազիվ մի քանի մետր վազելով՝ կորչում են ընկուզենիների տակ, կուժկոտրուկի դեղնագույն ծաղիկների մեջ, միակ մխիթարությունն ասես այն է, որ ճապկի ճիպոտի պես ճկուն, խաղացկուն իրանով մի սիրուն աղջիկ ու բարձրահասակ, սև հոնքերի տակից

սևեռուն նայող լրջախոհ մի տղա համարյա ամեն օր գալիս են իր մոտ, իրեն են վստահում իրենց սերը, իր ներկայությամբ երկար զրուցում են՝ շարունակ շիկնելով ու չհամարձակվելով նայել իրար, խոսում են կամացուկ, և ինքը հասկանում է, իհարկե, որ սիրո մասին չի կարելի բարձր խոսել£ Եվ գուցե դրա համար է, որ անհայտ ու անանուն աղբյուրը՝ մոռացված աստծուց ու մարդկանցից, իր կարճ ճանապարհն անցնում է ուրախ երգելով, ինչպես ոսկեթև թիթեռ, որն ամբողջ օրը թրվռում, անհոգ պարում է, չիմանալով, որ այս մեծ ու լույս աշխարհում ընդամենը մի օրվա կյանք ունի ինքը£ Անահիտը կուժը դնում էր աղբյուրի տակ, և, մինչև այն կլցվեր ջրով, Կարենի հետ ձեռք-ձեռքի ձորն ի վեր խորանում էին անտառի մեջ, երբեմն ծաղիկներ փնջում, երբեմն նստում գետակի մոտ՝ ունկնդրելով նրա երգը£ Գետակը գալիս էր լեռներից, նա իր հետ բերում էր լեռների հովը, այդ սառը, շնկշնկան հովը նրանց էր հասցնում բարձր լեռների կրծքին ծվարած ծաղիկների բուրմունքը, և Անահիտը չգիտեր, չէր կարողանում հասկանալ՝ ծաղիկների բուրմունքի՞ց էր արբում, թե՞ նրանից, որ Կարենն այդքան մոտ է նստած իրեն £

Անահիտն այդ օրը չի մոռանա երբեք£ Չի կարողանա մոռանալ£ Ավարտական առաջին քննությունից հետո, դպրոցից տուն գնալու ճանապարհին, Անահիտը, առանց նախապես պայմանավորվելու, հանկարծ կամրջի մոտ թեքվեց դեպի ձորը և չնայելով ետ, ձորն ի վեր վազեց

դեպի ծանոթ աղբյուրը՝ իր ետևից տանելով Կարենին£ Հասնելով աղբյուրին, նա մեջքով հենվեց սպիտակավուն հաճարենիներից մեկի բնին և, վազելուց շունչը կտրվելով, սկսեց նայել Կարենին£

Կարենը Անահիտին չէր նայում, նա մի պահ նայեց երկնքի խորքը մխրճված հաճարկենուն, որի տակ կանգնած էր Անահիտը, և, գրպանից հանելով դանակը, սկսեց ինչ-որ բան փորագրել սպիտակավուն ծառաբնին£ Անահիտը գլուխը թեքել, հետաքրքրությամբ նայում էր ու ժպտում£ Քրտինքի կաթիլները ճակատին՝ Կարենը ջանասիրությամբ փորագրեց իրենց անունների սկզբնատառերը. «„Կ+Ա= սեր“», և, իր արածից գոհ ու երջանիկ, հաղթական նայեց Անահիտին£ Անահիտը շարունակում էր ժպտալ՝ ձյունասպիտակ ատամներով սեղմելով շուրթերը£ Կարենը նայեց նրան և, մի կողմ նետելով դանակը, արագորեն մոտեցավ Անահիտին և փութկոտ մի շարժումով գրկելով նրա տաք ու հնազանդ մեջքը, հուզմունքից շնչահեղձվելով, բերանով արագ գտավ նրա այրվող շուրթերը£

Անահիտը, դեռևս մեջքով սեղմված ծառաբնին և անուժ դիմադրելու Կարենի մոլուցքին, դանդաղորեն սահեց ցած՝ ասես տենդի մեջ՝ հառաչելով ու տնքալով£ «Միթե՞ հնարավոր է ապրել առանց քեզ», -շշնջում էր Կարենը, անհագորեն շնչելով նրա աղջկական բույրն ու մոլեգնաբար համբուրելով հրագույն շուրթերը, թախծանուշ ջինջ աչքերը, դեմքը, մազերը®

Այդպես շերունակվեց մինչև հունիսի վերջը£ Արդեն

հանձնել էին վերջին քննությունը, պատրաստվում էին ավարտական երեկույթին£ Աղջիկներն իրենց համար տոնական զգեստներ էին կարում, տղաներն ամբողջ օրն անց էին կացնում դպրոցում՝ նախապատրաստելով այն նոր ուսումնական տարվան. սպիտակացնում էին դասասենյակների պատերը, նստարանները ներկում, լվանում ապակիները- վաղուց ի վեր այդպիսի ավանդույթ կար դպրոցում՝ շրջանավարտները պարտավոր էին իրենց ուժերով վերանորոգել դպրոցական շենքը, և, ինչպես էստաֆետ, հաջորդ սերնդին հանձնել այն կազմ ու պատրաստ£

Անահիտն ամեն երեկո, վերջացնելով տան աշխատանքները, գնում էր դպրոց՝ իմանալու, թե ինչպես են գնում տղաների գործերը£ Մյուս աղջիկները նույնպես գալիս էին£ Պետք էր, օգնում էին, չէ՝ պարզապես զրուցում էին՝ բազմազանություն մտցնելով տղաների աշխատանքային առօրյայի մեջ£ Հետո բաժանվում էին, և նրանց աշխույժ ձայները երկար ժամանակ հնչում էին գյուղական կիսամութ փողոցներում£

Այդպիսի մի օր Անահիտն ուշացած եկավ դպրոց£ Նա Կարենին տեսավ հեռվից. ուսուցչանոցի դուռը հանել, ռանդայով տաշում էր£

– Բարև, – մոտենալով ասաց Անահիտը՝ զարմանքով նայելով նրան£

– Փեղկերից մեկը կիպ չի նստում շրջանակի մեջ, ստիպված տաշում եմ£

– Դու հյուսնությո՞ւն էլ ես կարողանում անել£

– Քիչ-քիչ սովորում եմ, – քմծիծաղ տվեց Կարենը£– Գուցե պետք եկավ®

Անահիտին թվաց՝ ինչ-որ անուրախ բան կար այդ քմծիծաղի մեջ£ Նա ուշադրությամբ զննեց Կարենին՝ ձգտելով բռնել նրա հայացքը, բայց դա Անահիտին չհաջողվեց£ Կարենն աշխատում էր չնայել նրան, ձևացնելով, թե չափազանց կլանված է աշխատանքով£

Անահիտը, զուտ կանացիական հոտառությամբ, ներըմբռնողաբար հասկացավ. ինչ-որ բան է պատահել, և այդ ինչ-որ բանը կապված է իր հետ£ Բայց ի՞նչ £ Նա տենդորեն միտքը բերեց իր յուրաքանչյուր քայլը, յուրաքանչյուր ասած խոսքը, բայց դրանց մեջ այնպիսի մի բան չգտավ, որ վիրավորեր կամ վշտացներ Կարենին £ Եվ այդ պահից մի աղոտ տագնապ սողոսկեց սիրտը£ Հարցնել այդ մասին Կարենին, չհամարձակվեց. գիտեր՝ եթե չի ասում, ուրեմն անօգուտ է հարցուփորձը, չի ասի£

Պարզապես հարկավոր է համբերությամբ զինվել և սպասել£ Եվ Անահիտը ամբողջ երեկոն սպասեց՝ անդադրում հոգով շրջելով միջանցքներում ու բռնազբոսիկ ժպիտով պատասխանելով աղջիկների և տղաների ուրախ կատակներին£

Բանալիները հանձնելով տնտեսվար Աշոտին, տղաներն ու աղջիկները դուրս եկան դպրոցից£ Չգիտես ինչու, Անահիտին այնպես թվաց, թե այսօր ինքն ու Կարենը երկար չեն մնա իրար հետ, շուտ կբաժանվեն£ Ինչո՞ւ հանկարծ

այդպես թվաց՝ Անահիտը չհասկացավ£ Բաժանվելով ընդհանուր խմբից, նրանք լուռ, առանց մի խոսքի, սպիտակին տվող ճանապարհով քայլեցին դեպի տուն£ Խախտելով լռությունը, Կարենը, իբր ի միջի այլոց, ասաց, որ ավարտական երեկույթից անմիջապես հետո գնալու է Ղազախստան, Կուստանայի մարզ՝ քեռու մոտ£ Անահիտն այնպես հանկարծակի կանգ առավ, ասես մթության մեջ դեմ առավ պատի£

– Ինչպե՞ս® Ղազախստա՞ն£ Դու ինձ թողնում ես մենա՞կ £

– Այդպես է պետք, Անահիտ£

– Իսկ ե՞ս£ Ես ի՞նչ պիտի անեմ առանց քեզ£

– Կտխրես մի քանի ամիս£

– Քեզ համար հեշտ է ասել՝ «Կտխրես®»£ Ես առանց քեզ կմեռնեմ այստեղ£

– Ես պետք է գնամ® Անպայման պետք է գնամ£ Այլապես®

– Այլապես ի՞նչ, – արագ վրա բերեց Անահիտը£– Դու ինձնից մի թաքցրու ոչինչ£ Դու այլևս չես սիրում ինձ, չէ՞®

– Ոչ, սիրում եմ, Անահիտ, հենց նրա համար եմ գնում, որովհետև սիրում եմ®£– Նա քիչ լռեց, հետո ավելացրեց մտամփոփ£– Ամեն ինչ ինչքան հեշտ կլիներ, եթե չսիրեի քեզ® Եթե այդպես լիներ, ես ոչ մի տեղ էլ չէի գնա®

Դառն ու օտարոտի հնչեցին Կարենի բառերը£ Անահիտը լարվեց, տագնապով դիտելով Կարենի դեմքն ու ջանալով կռահել, թե որտեղի՞ց է գալիս այս դառը մորմոքը, սակայն

մթան մեջ ոչինչ տեսնել չկարողացավ՝ բացի իր համար անսահման թանկ դիմագծերից£

– Աստված իմ, դու այդ ինչե՞ր ես ասում, Կարեն, – մի տեսակ փոխված ձայնով մրմնջաց Անահիտը£ -Ես ոչինչ հասկանալ չեմ կարողանում£ Ի՞նչ է պատահել£

– Մի անհանգստանա, ամեն ինչ լավ կլինի, – ասաց Կարենը, քնքշորեն սեղմելով նրա թևը՝ արմունկից քիչ վերև £– Ամենից շատը՝ կես տարի, և մենք ազատ կլինենք, ինչպես®

– Դու զարմացնում ես ինձ, Կարեն, – ընդհատեց Անահիտը£– Մի՞թե մենք հիմա ազատ չենք£ Միթե՞ որևէ մեկը խանգարում է մեզ£

– Ոչ, իհարկե, բայց կուզենայի, որ բոլորովին ազատ լինենք®– արտաբերեց Կարենը թեթևակի դողացող ձայնով և, ասես ցանկանալով ազատվել նրանից, անմիջապես շտապեցրեց£– Դե լավ, գնա, ուշ է արդեն£ Բարի գիշեր£– Կարենը, առանց ետ նայելու, քայլեց կիսամութ փողոցով£

«Աստված իմ, այս ի՞նչ է կատարվում ինձ հետ, – արցունքից խեղդվելով շշնջում էր Անահիտը, նայելով ծայրեծայր սևակնած երկնքին£ Նա ամեն ինչ թաքցնում է ինձնից£ Գուցե ուրիշի է սիրում, – մտածում էր նա հուսաբեկ, – գուցե ուրիշի է սիրում ու չի ուզում այդ մասին ասել ինձ»£ Մտքերը նրան հանգիստ չէին տալիս £ Սրտում իրարամերժ հարցեր էին ծնվում, սակայն բոլոր այդ հարցերն այդպես էլ մնում էին անպատասխան£ Մի բան պարզ էր սակայն. սև ամպեր էին կուտակվում նրանց

սիրո վրա£

®Կարենը, իհարկե, Անահիտից որոշ բաներ թաքցրել էր, և թաքցրել էր ոչ միայն նրա համար, որ վախենում էր ցավ պատճառել նրան, այլ որ ինքը Կարենն էլ դեռևս մի կարգին չէր կարողանում ըմբռնել պատահածի իմաստը£

Երեկոյան՝ դպրոց ճանապարհվելուց մի քանի րոպե առաջ, հայրը կանգնեցրեց նրան դարպասի մոտ£

– Արի այստեղ, – ասաց նա, -քեզ հետ խոսելու բան ունեմ£

Հոր խոսելու տոնը, իր բավականին անզուսպ բնավորության համեմատ՝ չափազանց մեղմ, զգաստացրեց Կարենին£

– Էդ ո՞ւր ես գնում, – հարցրեց հայրը՝ գրպանից հանելով «Բելամորկանալի» ճմրթված տուփը£– Էլի դպրո՞ց ես գնում £

– Այո, ավարտական երեկույթի ենք պատրաստվում£

– Չափազանց երկար եք պատրաստվում դուք էդ երեկույթին, – ասաց հայրը և, վառելով գլանակն ու աչքի մեկը կկոցելով՝ ծուխը բաց թողեց վեր£

– Բայց դպրոցն էլ փոքր դպրոց չի, – ժպտաց Կարենը, կռահելով, որ դպրոցի մասին հայրը հենց այնպես, ի միջի այլոց ասաց, իսկ գլխավորը դեռ առջևում է£ Եվ Կարենը ներքուստ շտկվեց՝ պատրաստ ամեն մի անակնկալի£

– Էդ ճիշտ է, – համաձայնվեց հայրը£– Ինչ ճիշտ է, ճիշտ է£– Նա, առանց շտապելու, ծխախոտի ծուխը ներս քաշեց, հետո գլխի թեթևակի շարժումով ցույց տվեց անցած ձմեռվանից մնացած կոճղը£– Նստիր, գործ ունեմ քեզ հետ£

Կարենը նստեց կոճղին, հոր դիմաց, նրա դեմքն ասես իսկույն քար կտրեց£

– Ի՞նչ գործ է£

– Ուրեմն էսպես է բանը, տղաս, ինձ էնքան էլ դուր չի գալիս, որ քեզ ամեն օր տեսնում են էդ® անունն ինչ է®Սուրենի աղջկա հետ£

– Անահիտ է անունը, – հուշեց Կարենը£– Իսկ նա ի՞նչ է արել քեզ£

Հայրը մթնեց, դժգոհ նետեց ծխուկը և կրունկով տրորելով այն, բղավեց.

– Իսկ ի՞նչ պիտի անի£ Հը՞, նա ինչ պիտի անի ինձ®

Առաջին հայացքից անիմաստ թվացող այդ հարցը, ըստ ամենայնի, իր մեջ նուրբ ակնարկ էր պարունակում, սակայն Կարենը ձևացրեց, թե իբր չնկատեց դա, անտարբեր տեսքով թոթվեց ուսերը՝ այս անգամ ցուցադրաբար նայելով ժամացույցինՀ

– Իսկ գուցե պե՞տք չէ այդ մասին, պապա, մի ուրիշ անգամ£

– Վախենում եմ հետո ուշ լինի£

– Որ այդպես է® հիմա էլ ուշ է արդեն£

Դա ասվեց այնպիսի հանդուգն զսպվածությամբ ու սառը հաստատակամությամբ, որ հայրը մի պահ շփոթվեց, բայց իսկույնևեթ հավաքեց իրեն և, ցասկոտ հայացքով նայելով որդուն, ֆշշաց.

– Դու էդ ի՞նչ ես տակից-գլխից դուրս տալիս, շուն-շան տղա, խայտառակել ես ուզում, հա՞, մեզ ժողովրդի®

– Մի վախեցիր, հայրիկ, ոչինչ էլ չի եղել, – ընդհատեց նրան Կարենը քմծիծաղ տալով£– Ես պարզապես ուզում էի ասել, որ սիրում եմ Անահիտին և նրան ոչ ոքի հետ չեմ փոխի £ Եվ եթե երբևէ ամուսնանամ, ապա միայն նրա հետ£

Կարենը ոտնաձայներ լսեց և իսկույն ճանաչեց. մոր ոտնաձայներն էին£ Մայրը կանգ առավ, բայց լուռ էր դեռ£ Սակայն Կարենը լավ գիտեր մոր բնավորությունը. նա սկզբում խոսակցության մեջ առաջնությունը թողնում էր ամուսնուն, բայց շուտով դա մոռացվում էր, և նա վստահորեն ու բավականին հաջող կերպով ստանձնում էր ընտանիքի գլխավորի իր դերը£

Այսպես եղավ և հիմա£ Տեսնելով, որ որդու վերջին խոսքերը դարձյալ ծանր դրության մեջ գցեցին ամուսնուն, նա հասկացավ, որ եկել է վճռական պահը, հարկավոր է անհապաղ խառնվել և ամեն ինչ դնել իր տեղը£ Մայրը, շրջանցելով կոճղը, որի վրա նստած էր Կարենը, եկավ կանգնեց ամուսնու կողքին£

– Սա ինչ է, պսակվո՞ւմ ես արդեն® Եվ ո՞ւմ հետ ես պսակվում՝ շոֆեր Սուրենի աղջկա՞, էդ նրանց հարստության վրա՞ ես աչք դրել, թե՞ նրա դիպլոմի®

– Ես պսակվելու ոչ մի մտադրություն չունեմ, մամա, – ուսերը թոթվեց Կարենը£– Եթե բանը հասնի դրան, պարզ է, որ առաջինը ձեզնից խորհուրդ կհարցնեմ£ Մի՞թե կասկածում էիր® Իսկ ինչ վերաբերում է նրանց հարստությանը, ապա մենք նույնպես միլիոնատեր չենք £– Նա հանդարտ ելավ տեղից և վերջապես ասաց այն

հիմնականը, որի շուրջը, ըստ էության, պտտվում էր այս զրույցը£– Գուցե հենց այդ պատճառով եք ինձ համար հարուստ ու դիպլոմավոր հարսնացու ճարել£ Եվ նույնիսկ նրա ծնողների հետ պայմանավորվել եք՝ առանց ինձ վճռել իմ բախտը£ Վատ չէր լինի իմ կարծիքն էլ հարցնեիք®

Ծնողները գաղտնաբար նայեցին իրար£ Նրանք լավ գիտեին, որ իրեց որդին հարկ եղած դեպքում, խոսքի տակ չի մնա£ Սակայն այդպիսի բացարձակ ուղղամտություն նրանից երբեք չէին սպասում£

– Եվ շատ էլ լավ ենք արել, որ պայմանավորվել ենք, – ճղրտաց մայրը£– Իսկ ինչի՞ համար ենք արել դա £ Որպեսզի քեզ նման հիմարը լավ ապրուստ ունենա£ Որպեսզի ստիպված չլինես վիզ ծռել ուրիշի առաջ£ Գալու է, գալու է էդ օրը, երկու ձեռքով գլուխդ թակելու ես քո էդ սիրո համար, բայց ուշ է լինելու®

– Աղչի, – սաստեց նրան ամուսինը, – սպասիր, էն չես ասում, ինչ հարկավոր է£ Թող սիրի, սիրելով պսակվի£ Միայն թե ինձ ասա, Աստղիկն ինչո՞վ է պակաս քո էդ Սուրենի աղջկանից£ Նա ինչ է, քո՞ռ է, քաչա՞լ է£ Որ նայում ես՝ ոնց որ մի հուրի-փերի, ազնվությամբ եմ ասում, մեր էս վերի գյուղարանքում նրա նման աղջիկ չեմ տեսել£ Եվ քաղաքում էլ ապրում է, ոչ թե քո էս աղջիկների նման՝ ամռանն ու աշնանը՝ հանդերում, ձմռանն ու գարնանը՝ ձյուն ու ցեխի մեջ կորած£

– Այդպիսիներն ինձ ավելի են դուր գալիս, – համառորեն ասաց Կարենը:

Նրա վրա հոր խոսքերը ազդեցություն չունեցան, որովհետև անխելք մարդն անգամ կհասկանար, որ դա անհաջող փորձ էր՝ սքողել կնոջ չափից դուրս բացարձակ ասված խոսքերը. քանզի հիմնական միտքը հենց պարունակում էր նրա բառերում. մայրն ուզում էր խնամիանալ իր մի հեռու ազգականի հետ, որը խոստացել էր աղջկա օժիտի հետ միասին ավտոմեքենա նվիրել ապագա փեսային, իսկ հարսանիքից հետո նորապսակների համար սեփական առանձնատուն կառուցել քաղաքում (այդ ազգականն ապրում էր մարզկենտրոնում, ինչ որ պետ էր յուղի գործարանում, և կասկած չկար, որ նա անպայման կկատարի իր խոստումը. Աստղիկը նրա միակ աղջիկն էր, սովորում էր օտար լեզուների ինստիտուտի առաջին կուրսում և, իմիջիայլոց, անտարբեր չէր Կարենի նկատմամբ, որը, սակայն, նրան պարզապես վերաբերվում էր որպես հեռու ազգականի, ոչ ավել£

– Ձյուն ու ցեխի մեջ կորածներն ինձ ավլի են դուր գալիս, – կրկնեց Կարենը£– Իսկ առանձնատունն ու մեքենան ինձ պետք չեն£ Տուն՝ մենք ունենք, իսկ ինչ մնում է մեքենային, առանց դրան էլ կարելի է ապրել£

– Սուրենի աղջիկն իմ տուն չի մտնելու, – նորից ճղրտաց մայրը£– Ես ու հերդ նրա համար չենք տարիներով տուն ու տեղ դրել, որպեսզի նա գա տիրություն անի էստեղ£ Նրա ոտն էս տանը չի լինելու£

– Ինչո՞ւ, – զունատվեց Կարենը£– Որովհետև հարուստ ընտանիքից չէ, դիպլոմ չունի, և պարզ չէ՝ կունենա՞ երբևէ

£ Այո՞£

– Այո, – շուրթերը սեղմած գլխով արեց մայրը£

– Որ դու դիպլոմ ունես, ինչի՞ է պետք£ Գոնե մի օր աշխատե՞լ ես կյանքում£

– Չեմ աշխատել, որովհետև դրա կարիքը չենք զգում£ Ամուսինս աշխատում է£

– Ամուսինդ հասարակ անտառապահ է՝ ութսուներկու ռուբլի աշխատավարձով®

– Հասարակ անտառապահ է, բայց ամբողջ շրջանը ճանաչում, հարգում է նրան£

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.